

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1-2 (43-44)

2009 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրական խորհուրդ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

Դասիչ՝ 77771

Տպագրական 5 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

15.04.2009

Հանձնված է տպագրության

10.05.2009

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 1-2 (43-44)
2009 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь
Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92

5 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 15.04.2009
Подписано к печати 10.05.2009

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ՀՀ իրավաբանների միության վարչությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը, «Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդը ջերմորեն շնորհավորում են իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գագիկ Սերգեյի Ղազինյանին ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ, ցանկանում առողջություն, ընտանեկան երջանկություն, հաջողություններ բարդ և պատասխանատու աշխատանքում:

**ՀՀ իրավաբանների միության վարչություն
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ
«Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդ**

ՅԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ - 70



Այս տարվա մայիսի 22-ին լրացավ նշանավոր գիտնական, իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի նախկին դասախոս, ՌԴ տնտեսագիտության, ֆինանսների և իրավունքի ակադեմիայի իսկական անդամ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի նախկին վարիչ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախկին անդամ, ՀՀ նախկին գլխավոր դատախազ Յենրիկ Խաչատրյանի ծննդյան 70-ամյակը:

Յենրիկ Խաչատրյանի անժամանակ կորուստը մեծ ցավ պատճառեց բոլոր նրանց, ովքեր ճանաչել, աշակերտել ու աշխատել են նշանավոր գիտնականի և պետական գործչի հետ: 20 գրքերի և մոտ 100 գիտական հոդվածների հեղինակ Յենրիկ Խաչատրյանը իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում իրեն դրսևորել է որպես բացառիկ վառ անհատականություն, մտավորականի բարձր որակներ ունեցող քաղաքացի, տաղանդավոր գիտնական, հմուտ մանկավարժ և պետական գործիչ:

Միջազգային ճանաչում ունեցող այս գիտնականի, հմուտ ու խորագիտակ հետազոտողի անմիջական ղեկավարությամբ իրականացվել են նորանկախ Հայաստանի պետաիրավական կարգավիճակին և զարգացման միտումներին նվիրված բազմաթիվ հետազոտություններ, որոնց նշանակությունն ու արժեքը դժվար է գերազանհատել: Նա անուրանալի ավանդ է ներդրել ինչպես նոր օրենքների, այնպես էլ ՀՀ առաջին Սահմանադրության ստեղծման բնագավառում, հանդիսացել երկրում օրինականության պահպանման գործի շնորհաշատ կազմակերպիչ, որպես ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ իր գործընկերների հետ միասին ջանք ու եռանդ չի խնայել նոր պետականությունը կառուցող Հայաստանի այդ կարևոր ինստիտուտի կայացման գործում:

Այո, հենց այսպիսի մարդկանց մասին են ասված մեծանուն բանաստեղծի հանճարեղ խոսքերը. «Ուշ-ուշ են գալիս, բայց ոչ ուշացած, ծնվում են նրանք ճիշտ ժամանակին: Եվ ժամանակից առաջ են ընկնում...»: Ժամանակը հաշվի է նստում այսպիսի մարդկանց հետ, պատկառում է նման մեծերի նկատմամբ, քանզի նրանք ընդմիշտ դառնում են բոլորիս «ժամանակակիցը»: Եվ այս անգամ էլ ամենագործ ժամանակը անգոր գտնվեց Յենրիկ Խաչատրյանի նկատմամբ...

ՀՀ իրավաբանների միության վարչությունը, «Պետություն և իրավունք» հանդեսի խմբագրական խորհուրդը, իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտակցելով և գնահատելով նրա անուրանալի վաստակը երկրում իրավունքի գերակայության և օրենքի իշխանության հաստատման գործում, շնորհավորում են վաստակաշատ գիտնականի և պետական գործչի ծննդյան 70-ամյակը:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴ

Լևոն ՕՀԱՆՅԱՆ

ԵՊՀ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր, իրավ գիյ. բեկնածու

Տերմինն առաջացել է ֆրանսերեն *modele*, լատիներեն *modulus* (մոուլ) բառից, պայմանականորեն՝ պատկեր, սխեմա, նկարագրում և այլն՝ օբյեկտի պատկերը կամ օբյեկտների համակարգը¹:

Կան մոդելի բազմաթիվ բնորոշումներ, որոնցից են. «Մենք մոդել կանվանենք բոլոր նյութական իրերը կամ երևույթները, որը բովանդակում է այս կամ այն օրիգինալի պատճենը»²:

«Մոդելը մտովի պատկերացրած կամ նյութապես իրականացրած համակարգն է, որը, անդրադարձնելով կամ վերարտադրելով հետազոտման օբյեկտը, ընդունակ է փոխարինելու նրան այնպես, որ մոդելի հետազոտումը տա նոր տեղեկատվություն ուսումնասիրվող օբյեկտի վերաբերյալ»³:

«Խոսելով մոդելի մասին ամենաընդհանուր տեսքով՝ նկատի են ունենում մտավոր կամ պրակտիկորեն ստեղծված կառուցված, բաղադրություն (ստատիկ կամ դինամիկ), որը վերարտադրում է սխեմատիկ ձևով պարզեցված իրականության ինչ-որ մասը»⁴:

«Ազդանշանները համարվում են մոդելի ձև»⁵:

Ժամանակակից հասկացողությամբ մոդելը օրիգինալի հատկությունների ամբողջի կամ ինչ-որ մասի բացահայտման միջոց է: Եվ եթե ճիշտ համարենք այն միտքը, որ ցանկացած տեղեկատվություն իրենից մոդել է ներկայացնում, ապա «մոդել» տերմինը կստանա ունիվերսալ նշանակություն:

Այդ մասին մոտ կես դար առաջ արտահայտվել է Ն. Ա. Ումովը, որը արդարացիորեն համարվում է ժամանակակից մոդելավորման տեսության հիմնադիրը⁶:

Մի խոսքով, մոդելը մարդու կողմից շրջապատող իրականության գիտակցման միջոց է: Նշված տերմինը սերտորեն կապված է «մոդելավորում» բառի հետ, որի տակ սովորաբար հասկացվում է մոդելների պատրաստման գործընթացը: Բայց եթե այն դիտվի որպես հետազոտման մեթոդ, ապա այդպիսի հասկացությունը կլինի միակողմանի և պարզեցված:

Տարբեր գիտնականներ տարբեր կերպ են բնութագրել մոդելավորումը: Օրինակ, Ա.Ն. Ումովը գրում է. «Մոդելավորման հասկացությունը բնութագրում է որևէ համակարգի հետազոտման միջոցների ընտրությունը»⁷, կամ «Մոդելավորումը մոդելներում ֆիզիկական երևույթների և գործընթացների հետազոտումն է»⁸:

Մոդելավորման էությունը կազմում է մոդելների մտավոր կամ նյութական կառուցման, որոշակի պրոցեսների կամ երևույթների իմիտացիա, որպեսզի ստացված գիտելիքները հիմք ծառայեն դատողություններ անելու ուսումնասիրվող այլ առարկայի կամ երևույթի մասին⁹: Այսպիսով, մոդելավորումը ընդգրկում է ուսումնասիրվող օբյեկտի և՛ ստեղծումը, կառուցումը, և՛ ստեղծված մոդելով որոշակի փորձի կատարումը, և՛ որոշակի դատողությունների ձևավորումը, և՛ այդ օբյեկտի վերաբերյալ գիտելիքների արտահայտումը՝ հիմնվելով որոշակի փորձերի արդյունքների գնահատման վրա:

Քանի որ մոդելում արտահայտվում են միայն հետազոտվող օբյեկտի որոշ անհայտ հատկությունները, և հետազոտման

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

նպատակը համարվում է մոդելի օգնությամբ գիտելիքներ ստանալ այլ՝ մեզ անհայտ հատկությունների մասին, մոդելավորման էությունը կարելի է որոշել ավելի ճշգրիտ, եթե ասվի, որ մոդելավորումը հետազոտվող օբյեկտում դրա մասին մեզ անծանոթ գիտելիքների լրացման եղանակ է, այն գիտելիքների, որոնք արտացոլված են այդ օբյեկտի մոդելում:

Մոդելը՝ որպես մեր կողմից հետազոտվող օբյեկտի այս կամ այն հատկությունների արտացոլում, իրենից ներկայացնում է աբստրակցիա:

Այն ընդգրկում է, նրան վերաբերում է օբյեկտի հատկությունների միայն որոշակի մասը, որոնք առանձնացվում են մեր մտածողությունից որոշակիորեն էական հատկությունները, որոնք ապահովում են մեզ համար էական հարաբերակցությունը, որը նման է մոդելին և օրիգինալին¹⁰, քանի որ անալոգիան օրիգինալի և մուլտի մեջ ըստ էական հատկությունների երաշխավորում է հետևության առավել հիմնավոր բնույթ, քան անալոգիան է՝ ըստ նրանց համակողմանի հատկանիշների¹¹:

Հետևաբար՝ մոդելի և մոդելացվող օբյեկտի միջև կապի բնույթը, նրանց միջև եղած անալոգիան երևում են ոչ թե նույնացման հարաբերակցությամբ, այլ նմանության:

Այդ նմանությունը կարող է լինել իզոմորֆային, երբ մոդելի յուրաքանչյուր էլեմենտ կամ դետալ համապատասխանում է մոդելացվող օբյեկտի յուրաքանչյուր էլեմենտի: Իզոմորֆություն (իզո և մորֆիզմ բառերից) հասկացությունը սովորաբար կիրառվում է այն մոդելների նկատմամբ, որոնք վերարտադրում են օրիգինալի ներքին կառուցվածքը և հատուկ են այդ կառուցվածքի ֆունկցիաներին:

Մոդելի և օրիգինալի միջև նմանությունը կարող է ունենալ հոմոմորֆային բնույթ:

Նման դեպքում յուրաքանչյուր տարր

(կամ դետալ) կարող է համապատասխանել օրիգինալի տարրերի (դետալների) որոշակի համակցությանը: Այսպիսի նմանությունը պրակտիկորեն ավելի հասանելի է, և առավել հաճախ են կիրառվում մոդելներ կազմելիս, եթե նկատի ունենանք նաև, որ նրանցում որպես կանոն արտացոլվում են մոդելավորվող օբյեկտների առավել էական հատկությունները: Ինչպես նշում է Գ. Ն. Խարաֆասը. «Մոդելավորումը, ըստ էության, հիմնված է դիմամիկական անալոգիայի օգտագործման վրա: Անալոգիա նշանակում է հատկությունների և հարաբերությունների ոչ նույնացման նմանությունը»¹²:

Սույն հարցին անդրադարձել է նաև Կ. Բ. Բոտորոնը: «Անալոգիայի հասկացությունը,-գրում է նա,-արտահայտվում է ոչ միայն մտածողության ինքնատիպ տրամաբանական եղանակով, բայց և ելման, մեկնարկային պունկտ է մոդելավորման պրոցեսի համար»¹³:

Որպես որոշակի օբյեկտի պարզեցման նմանակ՝ մոդել ստեղծելիս նկատի է առնվում ոչ թե մոդելը ընդհանրապես, այլ որոշակի մոդելը, որն արտացոլում է օբյեկտի այն հատկությունները, որոնց օգտագործման շնորհիվ մենք հույս ունենք լուծել մեզ հետաքրքրող որոշակի հարցերը:

Այլ կերպ ասած՝ մոդելի ստեղծման գործընթացը հետազոտվող օբյեկտի մեխանիկական պատճենահանումը չէ, այլ ընտրովի գործընթաց, որը կատարելիս, իմանալով հետազոտվող օբյեկտի որոշակի հատկությունները, պատկերացում ստացվում է նրա բնույթի, հատկությունների վերաբերյալ, որոնք մոդելի օգնությամբ ենթակա են պարզաբանման: Այսպես է արդարացիորեն կարծում Կ. Բ. Բատորոնը¹⁴:

Այսպիսով, հետազոտման նպատակն է որոշում մոդելի ընտրությունը և դրա կառուցման համար հետազոտվող օբյեկտի էական հատկությունների ընտրությունը:

Տարբեր, բայց որոշակի թվով հարցեր կարող են առաջանալ զանազան խնդիրներ տարբեր հարցերի հետազոտելու հա-

մար: Բայց գործնականում չենք կարող կողմնորոշվել դրանց բազմատեսակության միաժամանակյա օգտագործման հարցում, նույնիսկ մեր գիտակցական ըմբռնումով, և պետք է զինվել միայն այն մոդելներով, որոնց իրականացումը գտնվում է մեր հնարավորությունների սահմաններում:

Բայց մոդելների անհրաժեշտ տեսակն ընտրելու համար, որը հնարավոր կլինի օգտագործել մեզ հետաքրքրող խնդիրների լուծման համար, անհրաժեշտ է իմանալ առավել ընդունելի մոդելների և նրանց խմբերի կառուցումն ու օգտագործման մեթոդները: Այդ մասին պատկերացում է տալիս մոդելների դասակարգումը:

Գրականության մեջ առաջարկվում են տարբեր դասակարգումներ, որոնցից, ըստ իս, առավել ուշադրության է արժանի այն, որը տրված է Վ. Ա. Շտոֆֆի, Բ. Ա. Գլինսկու և Բ. Ս. Գրյազնովի և մի քանի այլ հեղինակների կողմից¹⁶:

Ըստ այդ դասակարգման՝ բոլոր մոդելները պետք է բաժանել երկու հիմնական խմբի՝ նյութական և իդեալական (մտավոր):

Նյութական մոդելները կարող են լինել տարածական-մասն (աշխարհագրական), ֆիզիկական-մասն, մաթեմատիկական-մասն: Իդեալական (մտավոր) մոդելները կարելի է դասակարգել՝ տիպային (իկոնա-յին), խառը (տիպային-նշանային) և նշանային (սիմվոլիկ):

Կրիմինալիստիկական հետազոտություններում՝ ներառյալ և փորձագիտական պրակտիկան, և քննիչի աշխատանքը՝ հանցագործություններ քննելիս ապացույցների հայտնաբերման, ֆիքսման ու հետազոտման գործունեությունը, կարող են կիրառվել համարյա բոլոր տեսակի հիշատակված մոդելները:

Նյութական մոդելներից կրիմինալիստիկայում կիրառվում են տարածական-մասն (աշխարհագրական) մոդելները: Նրանց մեջ կարող են արտացոլվել տարբեր տարածական-որոշակի ամբողջություններ առանձին առարկաների հատկություններից, որոնք ունեն որոշակի ձև և չա-

փեր: Նման օբյեկտների թվին են դասվում տարբեր իրեր, կառույցներ՝ ստեղծված մարդու և բնության կողմից, այդ թվում՝ տեղանքի, մարդու և կենդանու կենցաղ և այլն:

Տարածական հարաբերակցությունը մոդելի էլեմենտների կամ դետալների և մոդելացվող նմուշի միջև կարող է ստուգվել համապատասխան չափումներով և ստուգումներով՝ անմիջական դիտարկումներով և ընկալմամբ:

Այդպիսի մոդելները կարող են կատարվել մուլյաժի ձևով, որոնք վերարտադրում են առարկաների արտաքին հիմնական հատկանիշները, մարդու կամ կենդանու կենցաղը, ինչպես նաև մակետի տեսքով, որոնք վերարտադրում են դեպքի տեղի, իրադրության առավել կարևոր կամ բոլոր դետալները՝ բաց տեղանքում կամ կառույցի մեջ, ինչպես նաև այլ կառույցների առանձնահատկությունները (կամուրջներ, ջրանցքներ, պատնեշներ, երկաթգծեր, ջրամբարներ և այլն):

Հիշենք, որ մոդելում կարելի է վերականգնել ինչպես օրիգինալի արտաքին հատկությունները (նրա մակերևույթը), այնպես էլ ներքին բաղադրությունը՝ նրա առանձին մասերը, ներքին կառուցվածքը (սենյակների դասավորությունը, մեխանիզմները, խողովակների համակարգը և այլն):

Նման մոդելների պատրաստման համար անհրաժեշտ նյութը պետք է համապատասխանի օրիգինալի նյութին, թեև հաճախ այն լինում է այլ, քանի որ նրա հատկությունները որևէ ազդեցություն չեն թողնում հետազոտվող օբյեկտի հատկությունների վրա:

Մոդելը՝ հատկապես որպես օրիգինալի մասին տարածական-տեսանելի պատկերացում առաջացնող հանգամանք, հնարավորություն է տալիս տեսանելի պատկերացում կազմելու օրիգինալի մասին:

Այն կարելի է օգտագործել քննչական գործողություններ կատարելիս, որոնց ժամանակ նպատակ է դրվում փորձեր դնելու

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՄՆՔ

և ուսումնասիրելու օրիգինալի որոշակի հատկությունները (օրինակ՝ քննչական փորձարարության ժամանակ, ինչպես նաև փորձագիտական հետազոտությունների ժամանակ):

Այլ դեպքերում այն լրացուցիչ դեր է կատարում գործի որոշ հանգամանքները ճշգրտելու համար (օրինակ՝ հարցաքննության, ճանաչման ներկայացնելու, քննչական փորձարարության ժամանակ):

Բացի այդ, մոդելը կարող է որպես փորձագետի եզրակացության ցուցադրական դեր կատարել, ծառայել որպես դեպքի տեղի զննության կամ քննչական փորձարարության հավելված, որոնք կարող են առավել հստակ պատկերացում տալ նկարագրված արձանագրությունների մեջ օբյեկտների վերաբերյալ՝ դրանց դասավորվածության, միմյանց միջև եղած տարածական հարաբերակցության և այլն¹⁶:

Տարածական-մասնակման մոդելը կարելի է պատրաստել ռեալ գոյություն ունեցող հատկությունների ուսումնասիրմամբ, որոնցից մոդելին են անցնում առանձին տարրեր, որոնք ուղղություն են տալիս հետազոտման ընթացքին և որոշում ստացված արդյունքների բնույթը:

Նման մոդելների պատրաստման անհրաժեշտություն առաջացնում են կամ օբյեկտը հետազոտման համար օգտագործելու օբյեկտիվ անհնարինության կամ հետազոտման կատարումը հեշտացնելու, պարզեցնելու ցանկության դեպքում:

Մոդելի օգնությամբ ուսումնասիրվող օբյեկտները միշտ չէ, որ կարող են մատչելի լինել քննիչին: Հաճախ դրանք ոչնչացվում են հանցագործության կատարման պրոցեսում կամ կատարումից հետո: Նման դեպքերում քննիչը կամ փորձագետը մոդելը ստեղծելիս չի կարող կողմնորոշվել անմիջական օբյեկտով, այլ այսպես կոչված օբյեկտի վերականգման ճանապարհով:

Վերականգման համար օգտագործում

են օբյեկտի հատկությունների վերաբերյալ տեղեկությունները որոշակի ժամանակի վերաբերող, այլ միջանկյալ մոդելների ուսումնասիրման արդյունքում ստացված, առավել հաճախ՝ իդեալական, որոնք կան քննիչի կամ փորձագետի տրամադրության տակ: Դրանք են՝ գծագրեր, լուսանկարներ, սխեմաներ, պլաններ: Նման պարագայում օգտագործվում են նաև օբյեկտի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, որոնք բովանդակում են հարցաքննության, դեպքի տեղի զննության արձանագրություններում և այլ դատավարական ու ոչ դատավարական փաստաթղթերում:

Այս կերպ կարող են վերականգնվել և դեպքի տեղի իրադրությունը՝ նրա վրա եղած առանձին առարկաների և հետքերի տեղադրություններով, առանձնահատկություններով, կոտրված, այրված, ոչնչացված կամ այլ ճանապարհով փոփոխված առանձին առարկաները, կառույցները, մարդու դեմքը, գանգով կամ ֆոտոռոբոտով՝ նրա արտաքին վիճակը:

Տարածականորեն մասն մոդելներին են պատկանում նաև լուսանկարներն ու կինոժապավենները¹⁷, մատնահետքերի, ոտքի, ատամների, ջարդող գործիքների, տրանսպորտային միջոցների հետքերի կադապրները՝ պատրաստված գիպսով, պլաստիլինով, սիլիկոնային մածուկներով և այլ նյութերով, կմիքի և դրոշմակմիքի դրոշմակներ, ձեռքի և ոտքի մատների դրոշմներ (այդ թվում՝ հետքապատճենահան թաղանթի վրա վերցված):

Նման մոդելներն ունեն մեխանիկական, դինամիկ, կինեմատիկ կամ այլ ֆիզիկական նմանություն օրիգինալի հետ: Դրանք վերարտադրում են մարդու, կենդանու կամ մեխանիզմի ֆունկցիոնալ հատկությունները, նաև՝ տարբեր իրերի, առարկաների, նյութերի, երևույթների (գազակերպ, փոշիակերպ, հեղուկ և այլ), ինչպես նաև էլեկտրականության, բոցի, լույսի, ձայնի և այլ հատկությունները:

Այդպիսի հատկությունները արտահայտվում են ինչպես ամբողջ օբյեկտի,

այնպես էլ նրա առանձին մասերի տեղափոխման պրոցեսում, նաև դրանց շրջակա միջավայրի հետ փոխգործողության և փոխազդեցության հետևանքով:

Ֆիզիկապես նման մոդելներն իրենց ձևով, բաղադրությամբ և նյութական կազմությամբ վերարտադրում են օրիգինալին կամ տարբերվում են դրանցից: Նման մոդելները կրիմինալիստիկայում կիրառվում են շատ հաճախ: Դրանց թվին են պատկանում կինոֆիլմերը (բայց միայն ցուցադրման պրոցեսում. հակառակ դեպքում՝ դրանց առանձին կադրերը, որոնք հաջորդում են օբյեկտների արտաքին ձևը՝ իրենց ստատիկ վիճակով և ժամանակի որոշակի պահ, ակնթարթ, համարվում են ոչ թե ֆիզիկապես նման, այլ տարածականորեն նման, աշխարհագրական մոդելներ), ինչպես նաև՝ մարդու ձայնի կամ այլ ձայնային երևույթների ֆոնոգրամների-տեսամագնիտոֆոնային գրառումներ:

Բացի այդ, այդպիսի մոդելները կարող են կատարվել մեխանիզմների, գործող մակետների, կոմունիկացիոն կառույցների, սարքերի և այլ միջոցների տեսքով: Դրանք կարելի է ստեղծել հատկապես միայն կատարվող հետազոտությունների համար կամ որպես մոդել օգտագործելիս հարմարեցվում են եղած օրիգինալին (օրինակ՝ ատրճանակի հարվածող մեխանիզմը պարկուճի վրա որոշակի հետք առաջացնելու համար):

Ֆիզիկապես նման մոդելները լայն կիրառում ունեն փորձագիտական հետազոտություններում, բայց դրա հետ մեկտեղ՝ դրանց մի մասը օգտագործվում են քննչական գործողություններ կատարելիս (քննչական փորձարարություն, ճանաչման ներկայացնելու, հարցաքննության), ինչպես փորձերի կատարելիս, այնպես էլ որպես լրացուցիչ միջոցների կամ տեսանելիության նպատակով:

Սաթեմատիկորեն նման մոդելները վերարտադրում են առարկաների տարբեր հատկությունները, պրոցեսները և վերարտադրության երևույթները՝ կողմավորված

տեսքով, մաթեմատիկական բանաձևերի և հավասարումների միջոցով: Դրանք կատարվում են ֆունկցիոնալ կիբերնետիկական կազմությունների, թվային մեքենաների և այլ ֆունկցիոնալ կիբերնետիկական սարքերի օգնությամբ: Դրանց և օրիգինալի միջև եղած համապատասխանությունը կարելի է ստուգել թվային ցուցանիշների բացազատմամբ, մտավոր ճանապարհով:

Սաթեմատիկորեն նման մոդելները կարող են օգտագործվել փորձագիտական պրակտիկայում, մասնավորապես ձեռագրեր հետազոտելիս: Այդ նպատակի համար էլեկտրոնային-հաշվողական մեքենաների կիրառումը առայժմ կրում է փորձարարական բնույթ:

1970-ական թվականներին Ն. Ա. Սելիվանովը գտնում էր, որ «Մշակված և փորձարարությունում կիրառվող ալգորիթմները դեռևս թույլ չեն տալիս կիրառել ՅՅՄՄ-ների ունեցած հնարավորություններն օգտագործել կրիմինալիստիկական խնդիրների էֆեկտիվ լուծման գործում, բայց ոչ հեռավոր ապագայում այդ պրոբլեմը կլուծվի»¹⁸:

Կրիմինալիստիկայում արդեն հստակ որոշված է հետազոտման տարբեր օբյեկտների մոդելավորման հնարավորությունները ինչպես փորձագիտական պրակտիկայում, այնպես էլ հանցագործությունների քննության պրոցեսում:

Այդ հնարավորությունները կախված են քննիչի և փորձագետի կողմից լուծվող խնդիրների բնույթից, նրանց տնօրինության տակ եղած տեղեկատվությունից, այն անհրաժեշտությունից, որը կհամապատասխանի մոդելն օրիգինալին և հնարավորություն կտա հետազոտման պրոցեսում ստանալ հավաստի արդյունքներ: Որոշակի մոդելի ընտրությունը կախված է հետազոտության արդյունքները դատավարական կարգով ամրապնդելու հնարավորությունից և դրանով նրան տալու ապացուցողական նշանակություն: Այս կապակցությամբ Ի. Մ. Լուզգինը գրում է. «Մոդելը պետք է համապատասխանի օրիգինալի

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

այն հատկանիշներին, որոնք ենթարկվում են հետազոտության և էական են համարվում ապացուցման խնդիրների տեսանկյունից, միաժամանակ այն պետք է տարբերվի օբյեկտից այլ հատկանիշներով այնպես, որ այդ տարբերությունը ապահովի էական հատկանիշների առանձնացումը, որոնց վրա կկենտրոնացվի ուշադրությունը»¹⁹:

Մոդելավորվող օբյեկտների բնույթը հաշվի առնելով և կախված մոդելների հետ կապված հետազոտվող հարցերի ծավալից՝ մոդելները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ ընդհանուր և մասնավոր, իսկ կախված դրանց օգտագործման նպատակներից՝ կազմակերպական, իդենտիֆիկացման և կողմնորոշող:

Կազմակերպական մոդելները թույլ են տալիս նպատակամղված նշել մոդելների ստեղծման հերթականությունը՝ անմիջականորեն կապված գործով եղած որոշակի հարցերի հետազոտման հետ: Դրանց վերաբերում է գործի ամբողջ քննության պրոցեսի մոդելը: Դրանց թվին են դասվում գործի քննության ողջ պրոցեսը, առանձին քննչական և օպերատիվ-հետախուզական գործողությունների մոդելները, հետախուզման մոդելը, հանցագործությունների կանխման և դրանց խափանման մոդելը, հանցագործության կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման միջոցառումների նշակման մոդելները:

Իդենտիֆիկացման մոդելները հնարավորություն են տալիս ընկալման համար պարզել, մատչելի դարձնել որոշակի ան-

ձանց և առարկաների առանձին անհատական հատկանիշներ և հատկություններ, պարզել դրանց խմբային պատկանելությունը և իդենտիֆիկացնել դրանք: Դրանց թվին կարելի է դասել առանձին անձանց արտաքինի մոդելը, առանձին առարկաների մոդելները, երևույթների, գործընթացների մոդելները, մեղադրյալի, կասկածյալի, տուժողի, վկայի մոդելները և այլն:

Կողմնորոշող մոդելները հնարավորություն են տալիս հասկանալ կամ կապ ստեղծել տարբեր օբյեկտների, երևույթների միջև, տարբերակել իրադրությունների հետագա զարգացումը կամ առանձին անձանց վարքագիծը և դրան համապատասխան որոշել քննիչի գործողությունները:

Դրանց թվին կարելի է դասել դեպքի տեղի մոդելը, տարբեր անձանց միջև եղած կապը և փոխհարաբերությունները դրանց միջև, գործի քննության ընթացքում նրանց վարքագծի մոդելները և այլն:

Մոդելների հիմնական տեսակները ընդգրկում են օբյեկտների նշանակալից շրջանով: Դրանք հիմնականում ընդգրկում են օբյեկտների նշանակալից շրջանակ: Բայց դրանցից մի քանիսը վերաբերում են փորձագիտական հետազոտության օբյեկտներին, որոնք մոդելացվում են փորձագետի կողմից: Հասկանալի է, որ քննիչները դրանց հետ պետք է ծանոթ լինեն, որպեսզի ժամանակին, ճիշտ և լրիվ ծավալով հավաքեն և պահպանեն այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է հետագա փորձագիտական մոդելավորման համար:

Այլ կերպ ասած ժամանակակից հասկացողությամբ «մոդել»-ը ընդգրկում է բոլորը, ինչը համարվում է շրջակա միջավայրի լոկալ անդրադարձը:

¹ Стів Философская энциклопедия, М., 1964, т. 3, էջ 481:

² Пономарев Я.А., Психика и интуиция, М., 1967, էջ 50:

³ Лузгин И.М., Методологические проблемы расследования, М., 1973, էջ 163:

⁴ Ратинов А.Р., Вопросы следственного мышления в свете теории информации, Вкн. Вопросы кибернетики и право, М., 1967, էջ 187:

⁵ Винер Н., Кибернетика и общество, М., 1958, էջ 34:

-
- ⁶ St'u "Вопросы кибернетики и право" hshn'etu, M., 1917, t'z 190:
- ⁷ Умов Н.А., Соч., М., 1916, т. 3, t'z 365:
- ⁸ Философская энциклопедия, т. 3, t'z 481:
- ⁹ St'u Ратинов А.Р., n'z'q. sh'z'u., t'z 187:
- ¹⁰ St'u Лузгин И.М., Методологические проблемы расследования, М., 1967, t'z 173:
- ¹¹ St'u Батороев К.Б., Кибернетика и метод аналогии, М., 1974, t'z 89:
- ¹² Харафас Д.Н., Системы и моделирование, М., 1967, t'z 21:
- ¹³ Батороев К.Б., n'z'q. sh'z'u., t'z 88-89:
- ¹⁴ St'u n'n'q'n' t'n'q'n'q'n', t'z 89:
- ¹⁵ St'u Штофф В.А., Моделирование и философия, М., 1966, t'z 34, Глинский Б. А., Грязнов Б.С. и др., Моделирование как метод научного исследования, М., 1965, t'z 71:
- ¹⁶ St'u Лузгин И.М., Методологические проблемы расследования, М., 1973, t'z 166-167:
- ¹⁷ St'u Белкин Р.С., Винберг А. И., Криминалистика и доказывание, М., 1969, t'z 194:
- ¹⁸ Селиванов Н.А., Математические методы в собирании и исследовании доказательств, М., 1974, t'z 79:
- ¹⁹ St'u Лузгин И.М., Методологические проблемы расследования, М., 1973, t'z 166-167:
-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՉ

Փեղամ ՂԱՐԱԽԱՆՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր

Օնողներ չունեցող, ինչպես նաև ծնողներ ունեցող, սակայն նրանցից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների դաստիարակությունն ու խնամքն իրականացվում են տարբեր եղանակներով՝ սկսած նրանց ազգականների, հարևանների, նույնիսկ նույն համայնքի մարդկանց կողմից պարզապես երեխային իրենց ընտանիքը վերցնելուց ու նրանց խնամքով ու դաստիարակությամբ զբաղվելուց, մինչև որդեգրման միջոցով իրենց զավակ դարձնելը:

Օնողներ չունեցող երեխաների խնամքն ու դաստիարակությունն իրենց վրա վերցնելու սովորույթը գալիս է հնուց: Այդ երևույթը հայ իրականության մեջ լայնածավալ բնույթ ստացավ հատկապես 20-րդ դարի սկզբին, երբ հայ ժողովրդին պատուհասած եղեռնի, ապա նաև սովի, համաճարակների, ինչպես նաև ներքին անկարգությունների, խռովությունների, իրականում քաղաքացիական պատերազմի հետևանքով հազարավոր երեխաներ մնացին առանց ընտանիքի, դարձան որբ ու անապաստան: Անգամ Հայաստանում պետականություն հաստատվելուց հետո պետությունն ի վիճակի չէր նման բոլոր երեխաներին ընտանիքներում տեղավորելու և նրանց ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելու գործը:

Իհարկե, տարբեր երկրներում, նաև տարբեր հասարակարգերում միշտ էլ փնտրել են ծնողներ չունեցող և ծնողական խնամքից ու դաստիարակությունից զրկված երեխաներին պատասպարելու ու

դաստիարակելու եղանակներ: Հասարակական այսպիսի հոգս եղել ու այժմ էլ կանաև Հայաստանում:

Այս գործում, թերևս, դժվար հարցերից մեկը նման երեխաներին հայտնաբերելն է: Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսդրության համաձայն՝ երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը ծնողների մահվան, նրանց ծնողական իրավունքներից զրկվելու, ծնողական իրավունքները սահմանափակվելու, ծնողներին անգործունակ ճանաչելու, երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությունից ծնողների խուսափելու, այդ թվում՝ դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններից իրենց երեխաներին վերցնելուց ծնողների հրաժարվելու, ինչպես նաև ծնողական խնամքի բացակայության այլ դեպքերում երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանությունը դրվում է տեղական ինքնակառավարման մարմինների՝ խնամակալության ու հոգաբարձության մարմինների վրա:

Խնամակալության ու հոգաբարձության մարմինները բացահայտում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, կատարում նման երեխաների հաշվառում և, ելնելով ծնողական խնամքից զրկվելու որոշակի հանգամանքներից, ընտրում են այդ երեխաներին տեղավորելու ձևերը (ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 109 հոդվ. կետ 1):

Ի դեպ, խնամակալության ու հոգաբարձության մարմիններից բացի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման ուղղությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեություն չի թույլատրվում:

Որք կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորման համար նախատեսված կազմակերպությունների ցանկը և տեղավորման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Ներկայումս, ՀՀ ընտանեկան օրենսդրության համաձայն, ծնողներ չունեցող, այդ թվում՝ ընկեցիկ երեխաների, ինչպես նաև ծնող ունեցող, սակայն նրանցից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների ընտանեկան դաստիարակության կազմակերպման ձևերն են՝ որդեգրումը, խնամակալությունն ու հոգաբարձությունը, պայմանագրի հիման վրա երեխային ուրիշի ընտանիք հանձնելը (խնամատար ընտանիք):

Մեր կարծիքով, ինչպես որդեգրումը, այնպես էլ խնամակալությունն ու հոգաբարձությունը հասարակության հիմնական մասի համար համեմատաբար պարզ են: Սակայն հասարակության անդամները քիչ բան գիտեն խնամատար ընտանիքի մասին, իսկ այդ ինստիտուտին նվիրված օրենսդրական միակ ակտի նորմերը՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 137-140 հոդվածները, քիչ բան են ասում այդ ինստիտուտի մասին: ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137 հոդվածի 1 – ին կետի համաձայն՝ երեխայի (երեխաների) դաստիարակությունը խնամատար ընտանիքում կարող է իրականացվել երեխային ընտանիք հանձնելու մասին պայմանագրի հիման վրա: Նման պայմանագրի ձևը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի թիվ 459-Ն որոշմամբ¹:

Ուրեմն, խնամատար ընտանիքն առաջանում է պայմանագրի հիման վրա: Նման պայմանագիր կնքվում է խնամակալության ու հոգաբարձության մարմնի՝ տեղական ինքնակառավարման մարմնի և այն քաղաքացու կամ ամուսինների միջև, որոնք պատրաստակամություն են հայտնել իրենց վրա վերցնելու երեխայի (կամ երեխաների) հետագա խնամքն ու դաստիարակությունը և այն էլ՝ պայմանագրի գո-

յության ընթացքում:

Երեխայի ընտանեկան դաստիարակությունը կազմակերպելու նպատակով պայմանագիր կնքելը, իհարկե, չի կարելի նորություն համարել Հայաստանի օրենսդրության համար, քանի որ այն հայտնի էր նաև խորհրդային ընտանեկան իրավունքին՝ պատրոնատի պայմանագիր անվամբ: Պատրոնատի պայմանագիրը Հայաստանում հազվադեպ կիրառություն ունեցավ:

Դեռևս 1937 թ. փետրվարի 15-ին Հայկական ԽՍՀ կառավարությունն ընդունել է որոշում «Դաստիարակության համար երեխաներին աշխատավորների ընտանիքներին հանձնելու (պատրոնատի) մասին», որով սահմանվել է որք երեխաներին և մանկատների սաներին դաստիարակության համար կոլտնտեսականների և այլ աշխատավորների ընտանիքներին հանձնելու կարգը, խնամատարի իրավունքների ու պարտականությունների շրջանակը: Սակայն տարբեր օբյեկտիվ պատճառներով այդ որոշումը գրեթե չի կիրառվել:

Իսկ ահա դրա անհրաժեշտությունը իրեն զգացնել տվեց հատկապես անցած դարի 80-ական թվականներին՝ Սպիտակի ահավոր երկրաշարժի հետևանքով: Շատ ընտանիքներ սեփական նախաձեռնությամբ իրենց մոտ էին վերցնում որք ու անպաստան երեխաներին, կազմակերպում նրանց խնամքն ու դաստիարակությունն իրենց հարկի տակ առանց պետական կառույցների օգնության: Այդ պայմաններում խնդիր դրվեց ընտանիքներին թույլատրել ծնողագուրկ ու անապաստան երեխաներին դաստիարակելու ու խնամելու վերցնել իրենց հարկի տակ՝ նրանց տալով ընտանեկան տիպի մանկական տների կարգավիճակ: Իսկ դա արվեց ԽՍՀՄ նախարարների խորհրդի 1988 թ. օգոստոսի 17-ի «Ընտանեկան տիպի մանկական տներ ստեղծելու մասին» թիվ 1022 որոշման հիման վրա Հայկական ԽՍՀ Նախարարների խորհրդի 1988 թ. հոկտեմբերի 10-ին ընունված թիվ 527 որոշմամբ: Այս որոշմամբ խնդիր դրվեց Հայաստանում ստեղծել ըն-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

տանեկան տիպի մանկական տներ հատկապես փոքր և միջին մեծության քաղաքներում, գյուղական վայրերում, էկոլոգիապես բարենպաստ պայմաններում:

Միաժամանակ սահմանվեց, որ ընտանեկան տիպի մանկատուն պետք է համարել այն ընտանիքները, որոնք դաստիարակության համար վերցրել են հինգ և ավելի երեխա: Իրավասու մարմիններին հանձնարարվեց օգնել նման ընտանիքներին բնակարանային պայմանները բարելավելու, նրանց տնային կահավորանքի անհրաժեշտ պարագաներ, մասնավորապես կահույք ձեռք բերելու գործում:

Միութենական ու հանրապետական կառավարությունների որոշումներով արտոնյալ պայմաններ էին նախատեսված այն անձանց համար, ովքեր դաստիարակության համար իրենց ընտանիքները կընդունեին ծնողազուրկ, ինչպես նաև ծնողներ ունեցող, սակայն նրանցից պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների՝ կազմելով, այսպես կոչված «ընտանեկան տիպի մանկան տներ»:

Սակայն այն տարիներին պետությունը պատշաճ ուշադրության չարժանացրեց ընտանեկան տիպի մանկական տներին: Որոշման ընդունման տարում Հայաստանում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի հետևանքով անհամեմատ ավելացավ ծնողազուրկ և ծնողական պատշաճ խնամք ու դաստիարակություն չստացող երեխաների թիվը, իսկ պետությունը հնարավորություն չուներ կազմակերպելու նման երեխաների խնամքն ու դաստիարակությունը վերոհիշյալ որոշման ոգուն համապատասխան: Դրանից հետո Հայաստանում ընդունված և ոչ մի իրավական ակտում խոսք չեղավ «ընտանեկան տիպի մանկան տան» մասին: Այնինչ խնամատար ընտանիքը փաստորեն ձևավորվել է ընտանեկան տիպի մանկական տների ստեղծման գաղափարի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը որպես իրավական նոր ինստիտուտ նախատեսում է խնամատար ընտանիքը, որին էլ նվիրված է առանձին գլուխ 137-140 հոդվածներով: Նման պայմանագրի կնքման հիմք է համարվում դաստիարակության համար երեխա վերցնել ցանկացող անձանց դիմումը կոնկրետ երեխայի՝ իր ընտանիքում դաստիարակության վերցնելու նպատակով երեխային իրեն հանձնելու վերաբերյալ: Այդ դիմումը տրվում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակառության ու հոգաբարձության մարմնին: Դիմումին պետք է կցվեն այդ անձանց խնամատար ծնող լինելու հնարավորության մասին խնամակառության ու հոգաբարձության մարմնի եզրակացությունը, ինչպես նաև այլ անհրաժեշտ փաստաթղթեր: Եվ քանի որ անհնարին է ՀՀ ընտանեկան օրենսգրքով կարգավորել խնամատար ընտանիքի իրավական բոլոր հարցերը, ուստի անհրաժեշտ է ենթաօրենսդրական ակտերով լրացնել օրենսդրության դաշտը:

Նախ, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 137 հոդվ. 2-րդ մասի համաձայն՝ ՀՀ կառավարությունը պետք է իր որոշմամբ հաստատի «խնամատար ընտանիքի մասին» կանոնադրություն, ներկայումս այն դեռևս չի հաստատվել: Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը վերջերս հաստատել է մի քանի իրավական ակտեր, որոնք ինչ-որ չափով լրացնում են իրավական դաշտի բացը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2008 թ. մայիսի 8-ի թիվ 459-Ն որոշմամբ կարգավորել է ՀՀ ընտանեկան օրենսգրքով նախատեսված խնամատար ընտանիքին առնչվող մի քանի հարցեր:

ՀՀ կառավարության սույն որոշմամբ առաջին հերթին հաստատվել է երեխային խնամատար ընտանիք հանձնելու կարգը² (այսուհետև՝ Կարգ): Ուրեմն՝ խնամատար ընտանիքը հնարավորություն է տալիս ապահովելու երեխայի՝ ընտանեկան դաստիարակություն ստանալու իրավունքը, ո-

րին օրենքով տրվում է անպայմանական նախապատվություն:

Անչափահաս երեխաներին դաստիարակության համար խնամատար ծնողներին հանձնելու պայմանագրի համաձայն՝ խնամատար ընտանիքին հանձնվելու ենթակա են առանց ծնողական խնամքի մնացած, այդ թվում (և ոչ թե « ընդ որում», ինչպես նշված է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 139 և մի քանի այլ հոդվածներում - Գ.Ղ.) դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում գտնվող երեխաները: Սակայն խնամատար ընտանիքին դաստիարակության չեն կարող հանձնվել սուր կամ քրոնիկ վարակիչ հիվանդությամբ տառապող երեխաները, եթե խնամատար ընտանիքը դա չի պնդում:

Երեխային դաստիարակության վերցնելու ցանկություն ունեցող անձը պետք է ունենա խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն, որը կարող է տալ բնակության վայրի մարզպետարանը, իսկ Երևանում՝ քաղաքապետարանը, դիմումին կցված փաստաթղթերի, ինչպես նաև երեխայի կենսապայմանների ուսումնասիրության նպատակով նրանց տուն այցելություն կատարելու մասին արձանագրության հիման վրա:

Դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը նշված է Կարգի 3-րդ կետում:

Մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) մեկ ամսվա ընթացքում պետք է իրականացնի դիմումատուի կենսապայմանների ուսումնասիրությունը և կազմի համապատասխան ակտ: Ներկայացված նյութերի հիման վրա մարզպետարանը (Երևանի քաղաքապետարանը) հնգօրյա ժամկետում կազմում և անձին է տրամադրում խնամատար ծնող դառնալու հնարավորության վերաբերյալ եզրակացություն: Այդ եզրակացությունն ուժի մեջ է մեկ տարի:

Խնամատար ծնող լիելու հնարավորության մասին դրական եզրակացություն

ստացած անձը դաստիարակության համար խնամատար ընտանիք տեղավորման ենթակա երեխայի մասին տեղեկատվություն ստանալու համար պետք է դիմի խնամակալության և հոգաբարձության մարմին կամ մարզպետարան կամ անմիջապես Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Դրական եզրակացություն ստացած քաղաքացին իրավունք է ստանում կատարելու երեխայի ընտրություն, իսկ այդ նպատակով երեխային այցելելու ուղեգիրը տալիս է երեխայի բնակության վայրի խնամակալության ու հոգաբարձության մարմինը (Կարգի կետ 9): Խնամատար ծնող լինելու հնարավորության մասին դրական եզրակացություն ստացած անձն ընտրած երեխային խնամատար ընտանիքում տեղավորելու մասին դիմումը ներկայացնում է խնամակալության ու հոգաբարձության մարմին, որը հնգօրյա ժամկետում դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնվող երեխայի մասին տեղեկություն ստանալու համար հարցում է ուղարկում երեխայի խնամքն իրականացնող համապատասխան դաստիարակչական, բժշկական, բնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպության ղեկավարին կամ այն անձին, որի մոտ գտնվում է երեխան:

Երեխայի խնամքն իրականացնող համապատասխան հաստատության ղեկավարը կամ անձը, որի մոտ գտնվում է երեխան, հարցումն ստանալուց հետո տասը օրվա ընթացքում երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության ու հոգաբարձության մարմին է ներկայացնում Կարգի 11-րդ հոդվածում նշված փաստաթղթերի մի ամբողջ փաթեթ, որն ստանալուց հետո երեք օրվա ընթացքում ընտրված երեխային դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնելու մասին որոշումն ընդունում է երեխայի բնակության (գտնվելու) վայրի խնամակալության ու հոգաբարձության մարմինը: Որոշու-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՄՆՔ

մը համապատասխան փաստաթղթերի հետ անձին է տրամադրվում երեքօրյա ժամկետում:

Երեխային խնամատար ընտանիք հանձնելու մասին պայմանագիրը կնքվում է խնամատար ծնողի բնակության վայրի խնամակալության ու հոգաբարձության մարմնի և խնամատար ծնողների միջև՝ երեխային խնամատար ընտանիք դաստիարակության հանձնելու մասին որոշման հիման վրա: Պայմանագիրը կնքվում է տեղական ինքնակառավարման մարմնի՝ խնամակալության ու հոգաբարձության մարմնի և այն քաղաքացու կամ անուսինների միջև, որոնք պատրաստակամություն են հայտնել իրենց վրա վերցնելու երեխայի (երեխաների) հետագա խնամքն ու դաստիարակությունը պայմանագրի գոյության ողջ ընթացքում: Հիշեցնենք, որ երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում իրականացնելու մասին պայմանագիրը կնքվում է մինչև երեխայի տասնութ տարեկան դառնալը: Նշանակում է՝ պայմանագրի ժամկետը չի կարող գերազանցել երեխայի տարիքի և նրա չափահասության տարիքի տարբերությունը³:

ՀՀ կառավարության 2008 թ. մայիսի 8-ի թիվ 459-Ն որոշմամբ հաստատվել է յուրաքանչյուր երեխայի պահելու համար խնամատար ընտանիքին ամսական վճարվող դրամական միջոցների և երեխայի խնամքի ու դաստիարակության համար խնամատար ծնողների վարձատրության վճարման կարգն ու չափը:

Հաստատված Կարգով կարգավորվում են երեխային պահելու համար խնամատար ընտանիքին տրամադրվող ամսական դրամական միջոցների չափի, վճարման, ինչպես նաև երեխայի խնամքի ու դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրության հետ կապված հարցեր:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ խնամա-

տար ծնողին յուրաքանչյուր ամիս վճարվում են դրամական միջոցներ, որոնց չափը որոշվում է խնամատար ծնողի և նրա բնակության վայրի մարզպետի միջև կնքված պայմանագրով:

Վերը նշված կարգով սահմանված է նաև երեխաների խնամքի ու դաստիարակության համար խնամատար ծնողներին վարձատրելու չափերը: Այսպես, մեկ երեխայի խնամքի և դաստիարակության համար խնամատար ծնողներից մեկը վարձատրվում է նվազագույն ամսական աշխատավարձի չափով, երկու երեխաների համար՝ նվազագույն ամսական աշխատավարձի 150 տոկոսի, երեք և ավելի երեխաների համար՝ նվազագույն ամսական աշխատավարձի 200 տոկոսի չափով (կետ 5):

Երեխային պահելու համար տրվող դրամական միջոցները և երեխայի խնամքի ու դաստիարակության համար վարձատրության գումարը տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարությունը մարզպետարանից (Երևանի քաղաքապետարանից) ստացված հայտ - պահանջագրի հիման վրա՝ եռօրյա ժամկետում, որին էլ կցվում են անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ համապատասխան մարզպետարանի (Երևանի քաղաքապետարանի) աշխատակազմը վճարման ենթակա գումարը խնամատար ծնողի բանկային հաշվին է փոխանցում այդ նպատակի համար հատկացված միջոցներն ստանալուց հետո՝ բանկային երկու օրվա ընթացքում:

Վերջապես, ՀՀ կառավարությունը 2008 թ. մայիսի 8-ի թիվ 459-Ն որոշմամբ հաստատել է խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին տիպային պայմանագրի ձևը, որի համաձայն՝ պայմանագրի առարկան խնամակալության ու հոգաբարձության մարմնի կողմից երեխային խնամատար ընտանիք հանձնելը և խնամատար ծնողների կողմից երեխային դաստիարակության ընդունելն է:

Պայմանագրում որոշակիացված են կողմերի իրավունքներն ու պարտականությունները (2-5 կետերը), նշված են պայ-

մանագրի գինը և վճարման կարգը: Ի դեպ, պայմանագրի գինը կազմում է որոշակի դրամական գումար՝ կազմված երեխային պահելու համար խնամատար ընտանիքին վճարվող դրամական միջոցներից, նաև երեխայի խնամքի ու դաստիարակության համար խնամատար ծնողներին տրվող վարձատրությունից, այսինքն՝ բավական մեծ գումար: Մինչդեռ այս պայմանագրի գնի և նրա չափի մասին խոսելը, մեր կարծիքով, ավելորդ է: Անհեթեթություն է ասել, թե կոնկրետ այս պայմանագրի գինը ութսուն հազար դրամ է:

Մեր կարծիքով, ճիշտ չէ նաև երեխային պահելու համար դրամական միջոցների վճարումը և երեխայի խնամքի ու դաստիարակության համար վարձատրությունը խնամատար ծնողի և վերջինիս բնակության վայրի մարզպետի (Երևանի քաղաքապետարանի) միջև կնքված պայմանագրով իրականացնելը: Մեր կարծիքով նման

պայմանագիր կնքելու իրավունք պետք է տրվի ոչ թե մարզպետարանին, այլ խնամակալության ու հոգաբարձության մարմնին:

Ավելացնենք նաև, որ ՀՀ կառավարության թիվ 459-Ն որոշման 2-րդ կետով հանձնարարվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին հիշյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել անձի կենսապայմանների ուսումնասիրության ակտի և երեխային իր բնակության վայրում այցելելու ուղեգրի ձևերը:

Վերջում ավելացնենք, որ, մեր կարծիքով, ՀՀ կառավարությունը պետք է արագացնի խնամատար ընտանիքների մասին կանոնադրության հաստատումը, որով բավականին պարզություն կնտցնի խնամատար ընտանիքի իրավական վիճակի հարցում:

¹ Հիշյալ պայմանագրի ձևը տես «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր», 2008, թիվ 32, էջ 49-59:

² Սույն Կարգի մասին տես ՀՀՊՏ թիվ 32 (622), 29 մայիսի 2008 թ. էջ 50-52:

³ Կարծես թե եական մեծություն գոյություն ունի երեխային որդեգրելու և երեխային խնամատարական ընտանիք ընդունելու միջև: Թերևս դա այդպես է: Երկու դեպքում էլ երեխան հանձնվում է մեկ այլ ընտանիք, որտեղ նա ունենում է իր ծնողները: Սակայն չպետք է

մոռանալ, որ նպատակի առումով որդեգրումը հետապնդում է մեկ, խնամատար ընտանիք հանձնելը՝ ուրիշ նպատակ: Որդեգրման հիմքում ընկած է դատական ակտը՝ վճիռը, իսկ խնամատար ընտանիքի առաջացման հիմքում պայմանագիրը, որ կնքել են խնամակալության ու հոգաբարձության մարմինը և խնամատար ծնողները:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ
ՀԱՐՔԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՑԵԿՏԻ ՀԵՏ**

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

*ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի
ավագ լաբորանտ*

Յ Զ քր. օր.-ի հոդված 23-ի համաձայն՝ «Քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի»: Անմեղսունակ ճանաչված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության: Սակայն մեղսունակության և անմեղսունակության միջև բացակայում է հստակ սահմանագիծը, ուստի հարց է ծագում մեղսունակության և անմեղսունակության միջև գտնվող սահմանային վիճակի և այդ վիճակում հանցանք կատարած անձանց պատասխանատվության կապակցությամբ:

Շատ դեպքերում հոգեկան խանգարումները կամ այլ հիվանդագին վիճակները թեև չեն վկայում անձի՝ ամբողջովին անմեղսունակ լինելու մասին, սակայն մեծ դեր են խաղում նրա կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելիս. ազդում են վերջինիս մտավոր-կամային կերտվածքի վրա, ծնունդ արատավոր մտքեր:

Քրեական օրենսգրքի հոդվածի 26-ի 1-ին մասը սահմանում է. «Մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթը ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության»:

Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սահ-

մանափակ մեղսունակությունը, որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար»:

Այսպիսով, համաձայնելով ՀՀ քրեական օրենսգրքի ձևակերպման հետ, կարծում ենք, որ սահմանափակ մեղսունակությունը ոչ թե սահմանային վիճակ է մեղսունակության և անմեղսունակության միջև, այլ՝ մեղսունակության տեսակ: Հոդվածի առաջին մասում խոսվում է մեղսունակ անձի մասին, ինչի հիման վրա էլ վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության: Այստեղ, սակայն, օրենսդիրն ի նկատի ունի հոգեկան խանգարումներով տառապող անձանց, քանի որ սահմանափակ մեղսունակությունն անպայմանորեն ենթադրում է հոգեկան խանգարման առկայությունը:

Ժամանակակից հոգեբուժությունը մշակել է մեղսունակության և անմեղսունակության, ինչպես նաև բազմաթիվ այլ սահմանային վիճակները և հիվանդագին խանգարումները բնութագրող չափանիշներ, ինչն էլ թույլ է տալիս առանձնացնել հոգեկան հիվանդությունների, խանգարումների և այլ հիվանդագին վիճակների լայն շրջանակ, որոնց առկայությունը կարող է վկայել սահմանափակ մեղսունակության մասին:

Սահմանափակ մեղսունակության բժշկական չափանիշ են կազմում մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումները: Վերջիններս, մեր կարծիքով, իրենց ձևով համընկնում են անմեղսունակության բժշկական չափանիշը բնութագրող որոշ հոգեկան հիվանդությունների

հետ, սակայն տարբեր են իրենց բովանդակությամբ. անմեղսունակության վիճակում հոգեկան հիվանդությունը անձին լիովին զրկում է սեփական արարքները գիտակցելու և ղեկավարելու ունակությունից, իսկ սահմանափակ մեղսունակության դեպքում անձի նշված ունակությունը թեև էապես նվազում է, սակայն չի կորչում:

Մեղսունակությունը չբացառող հոգեկան հիվանդությունը դատարանին թույլ է տալիս սանկցիայի սահմաններում մեղմացնել պատիժը, իսկ որոշ դեպքերում՝ նշանակել ավելի մեղմ պատիժ, քան նախատեսված է տվյալ հանցագործության համար: Պատիժ նշանակելիս դատարանն իրավունք ունի նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, որի համար հիմք է դատահոգեբուժական փորձաքննությունը:

Սահմանափակ մեղսունակության իրավաբանական չափանիշն ունի երկու հատկանիշ՝ մտավոր և կամային: Առաջինի դեպքում անձն ունակ չէ լիովին գիտակցելու իր գործողությունների փաստացի բնույթը, իսկ նյութական հանցակազմ պարունակող հանցագործությունների դեպքում՝ կանխատեսելու հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը: Սահմանափակ մեղսունակության հաջորդ առանձնահատկությունն անձի մոտ ինքնամերձչման բարձր աստիճանն է, ինչը, անկասկած, կապված է վերջինիս մտավոր անլիարժեքության հետ: Սահմանափակ մեղսունակության կամային հատկանիշը բնութագրվում է անձի՝ իր գործողությունները լիովին ղեկավարելու, այսինքն՝ դրանք իր կամքին ենթարկելու անկարողությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ սահմանափակ մեղսունակությունը կապված է ոչ թե մեղքի, այլ կատարված հանցագործության համար քրեական պատասխանատվության և սահմանափակ մեղսունակ ճանաչված անձանց նկատմամբ նշանակվող պատժի անհատականացման հետ:

Պատիժ նշանակելիս դատարանը

պետք է ղեկավարվի օրենքով՝ հաշվի առնելով կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը և պատասխանատվությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Սահմանափակ մեղսունակությունը դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող, քանի որ հոգեկան խանգարումը չի կարող ճանաչվել ծանրացնող հանգամանք և վատթարացնել հանցանք կատարած անձի վիճակը, որովհետև անձն ի վիճակի չի եղել ամբողջովին գիտակցելու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք:

Պետք է նշել նաև, որ ծանրացնող հանգամանքների առկայության և հանցագործության բարձր վտանգավորության դեպքում սահմանափակ մեղսունակությունը դատարանի կողմից կարող է և հաշվի չառնվել պատիժ նշանակելիս, սակայն այդ որոշումը պետք է լինի հիմնավորված. ամեն դեպքում դատարանը պարտավոր է պարզել, թե արդյոք ամբաստանյալն ի վիճակի է եղել ամբողջովին գիտակցելու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք:

Սահմանափակ մեղսունակությունը պատժի հետ ենթադրում է նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակում, այսինքն՝ հաշվի է առնվում անձի պատժի կրման սուբյեկտ լինելու ունակությունը: Հոգեկան խանգարում ունեցող դատապարտյալը կարիք ունի իր նկատմամբ բժշկա-հոգեբանական միջոցների կիրառման ոչ միայն և ոչ այնքան այն պատճառով, որ անցյալում՝ հանցանքը կատարելու պահին, հոգեկան խանգարումը սահմանափակել է սեփական արարքներն ամբողջությամբ գիտակցելու և ղեկավարելու հնարավորությունը, այլ ավելի շուտ այն պատճառով, որ պատիժը կրելու ընթացքում նշված խանգարումը կոժվարացնի վերջինիս նկատմամբ «սովորական», ստանդարտ ուղղիչ միջոցների կիրառումը՝ դրանով իսկ խոչընդոտելով

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ

պատժի նպատակների իրագործմանը:

Այսպիսով, թեև մեղսունակությունը չբացառող խանգարումները նվազեցնում են սեփական արարքների էությունը գիտակցելու և ղեկավարելու անձի ունակությունը, այնուամենայնիվ դրանք չեն կրում փսիխոտիկ բնույթ: Նշված խանգարումները հանդես են գալիս որպես սահմանափակ մեղսունակության բժշկական չափանիշներ միայն այն դեպքում, երբ անձի կողմից հանցավոր վարքագծի դրսևորումն անմիջականորեն պայմանավորված է վերջինիս գիտակցական և կամային ուղորտի վրա դրանց ազդեցությամբ: Վերջիններիս բացակայությունը բացառում է սահմանափակ մեղսունակության վիճակը:

Սահմանափակ մեղսունակությունը պետք է տարբերել քրեական իրավունքի՝ առաջին հայացքից միանման թվացող, հանցագործության սուբյեկտին բնութագրող այլ ինստիտուտներից, մասնավորապես՝ ֆիզիոլոգիական հարբածությունից և ֆիզիոլոգիական աֆեկտից:

«Աֆեկտը ուժեղ և համենատաքար կարծատև էնոցիոնալ վիճակ է, որը զարգանում է կրիտիկական պայմաններում, երբ սուբյեկտը կորցնում է ստեղծված վտանգավոր, առավել հաճախ՝ անսպասելի իրավիճակներից ելք գտնելու ունակությունը»³:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է տարբերել աֆեկտի ֆիզիոլոգիական և պաթոլոգիական տեսակները:

Պաթոլոգիական աֆեկտը մարդու գիտակցությունը խորապես մթագնող հոգեկան հիվանդություն է, որի հետևանքով նա կորցնում է սեփական գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ դրանք ղեկավարելու ունակությունը: Այն իրենից ներկայացնում է հոգեկանի ժամանակավոր խանգարում: Հոգեբույժները որպես պաթոլոգիական աֆեկտի բնորոշ հատկանիշ նշում են գիտակցության խորը մթագնումը. նման վիճակում անձը ճանաչվում է

անմեղսունակ, ինչի ուժով էլ նա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հայտնի է, որ հոգեկան շեղումները նվազեցնում են ստեղծված կոնֆլիկտային վիճակներին «դիմադրելու» անձի հնարավորությունները, խոչընդոտում վերջինիս մոտ հանրորեն օգտակար վարքագծի դրսևորմանը, թուլացնում ինքնակառավարման մեխանիզմը, հեշտացնում իմպուլսիվ, պատահական, չմտածված, այդ թվում նաև հակաիրավական արարքների կատարումը⁴: Ինչպես կարծում է Յու. Անտոնյանը, հոգեկան շեղումներ ունեցող անձինք հակված են ավելի ագրեսիվ կերպով արձագանքելու ստեղծված կոնֆլիկտային իրավիճակներին, սակայն ասվածը չի ենթադրում նշված անձանց կողմից հանցանք կատարելուց զերծ մնալու անհնարիություն: Նրանք, պարզապես, ավելի հեշտ են «բռնկվում»⁵:

Բ.Վ.Ջայգարնիկը նշում է, որ «նման վիճակում գտնվող անձի գործողությունները լինում են ոչ համարժեք ստեղծված իրավիճակին, ինչը հանգեցնում է տարօրինակ արարքների կատարման»⁶: Վ.Վ. Գուլդանը գրում է. «Ի տարբերություն հոգեպես առողջ անձանց, որոնց մոտ աֆեկտոզեն շարժառիթների առաջացումը պատասխան ռեակցիա է ատելություն, բարկություն, վրեժխնդիր լինելու ցանկություն առաջացնող այնպիսի երևույթների նկատմամբ, ինչպիսիք են վիրավորանքը, բռնությունը, դավաճանությունը, զրպարտությունը և այլն, փսիխոպատիայով տառապող անձանց համար իրավախախտումներ կատարելու շարժառիթների համար իրական առիթների առկայությունն այնքան էլ պարտադիր չէ»⁷:

Ի տարբերություն դրա՝ ֆիզիոլոգիական աֆեկտը հոգեպես առողջ յուրաքանչյուր մարդու բնորոշ, հանկարծակի ծագող և արագ ընթացող հոգեկան խիստ հուզմունքի վիճակ է, որը չի գրկում վերջինիս սեփական գործողությունների նշանակությունը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունից:

«Հոգեկան խիստ հուզմունք» ասելով հասկանում ենք ոչ միայն աֆեկտը նեղ իմաստով, այլև սուր արտահայտված այլ էմոցիոնալ ռեակցիաները: Չնայած վերջիններս զերծ են աֆեկտին հատուկ ուժգնությունից, այնուամենայնիվ դրանք ևս էապես սահմանափակում են ազատ կամքի արտահայտումը և կարող են հաշվի առնվել դատարանի կողմից՝ որպես հոգեկան խիստ հուզմունքի առաջացման հոգեբանական նախադրյալ⁸: Սակայն ավելի հաճախ «հոգեկան խիստ հուզմունք» հասկացությունը կարող է հարաբերակցվել միայն ֆիզիոլոգիական աֆեկտի հետ, որի կարևոր հատկանիշներից է հանկարծակիությունը:

Ի.Ա. Կուդրյավցևը առաջարկում է աֆեկտի եռաստիճան դասակարգում՝ պաթոլոգիկ, ֆիզիոլոգիական և անոմալ: Վերջինի շարքին հեղինակը դասում է քրեական պատասխանատվությունը չբացառող «ալկոհոլային աֆեկտը» և «անձնային խանգարումների հետևանքով առաջացող աֆեկտը»⁹: Նման տարբերակված մոտեցումը մեծ նշանակություն ունի հոգեբուժության տեսանկյունից, քանի որ անոմալ աֆեկտի ինչպես առաջացումը, այնպես էլ ընթացքն ունեն իրենց յուրահատկությունները: Ալկոհոլի ընդունումն էապես ազդում է անձի գիտակցական և կամային ոլորտի վրա՝ նպաստելով աֆեկտային վիճակի առաջացմանը: Ընդ որում, ասվածը վերաբերում է հարբածության թեթև աստիճանին, քանի որ «միջին կամ ծանր ալկոհոլային հարբածության վիճակում հանցանք կատարելու պատճառը, որպես կանոն, ալկոհոլային թունավորումն է»¹⁰:

Մեր կարծիքով քրեական իրավունքում ալկոհոլի ազդեցությամբ առաջացող աֆեկտի՝ որպես մեղմացնող հանգամանքի, դերն ավելի նվազ է, քան դրա հետ չկապված ֆիզիոլոգիական աֆեկտի դերը: Ավելին, ալկոհոլի ազդեցությամբ կատարված հանցանքի պատճառները չի կարելի միանշանակ կապել տուժողի կողմից հակաօրինական, հակաբարոյական վար-

քագծի դրսևորման հետ. ալկոհոլը հեշտացնում է աֆեկտի առաջացումը, նպաստում ազդեցիվ վարքագծի դրսևորմանը. օրինակ, նույն արարքը տուժողը սթափ վիճակում գտնվող մարդու կողմից կատարված կարող է նորմալ ընկալվել, իսկ հարբածի կողմից որպես հակաբարոյական, հակաօրինական:

Խոսելով հոգեկան խանգարման հետևանքով առաջացող ֆիզիոլոգիական աֆեկտի մասին՝ հեղինակը նշում է. «Անձի մտավոր գործնությունը ճնշվում է, իսկ հակաիրավական արարքը կատարվում է կարճ միացման սխեմայով. հանցավոր արձագանքում է ստացված գրգռիչ անմիջապես՝ առանց իր գործողությունները կշռադատելու, ծանրութթև անելու»:

Սակայն, ամեն դեպքում պետք է պարզել, թե ինչ աստիճանով են նշված շեղումներն ազդել անձի գիտակցական-կամային ոլորտի վրա, և արդյո՞ք վերջինս հանցանքի կատարման պահին կորցրել է ինքնակառավարման հնարավորությունը, այսինքն՝ պետք է առկա լինի հոգեբանական (իրավաբանական) չափանիշը: Հակառակ դեպքում, երբ, օրինակ, հանրորեն վտանգավոր արարքը կատարում է հիստերիայով տառապող հոգեկան հիվանդը, որի մոտ էմոցիոնալ ռեակցիաները չեն հասնում աֆեկտի վիճակի, և նա լիովին չի կորցնում իր գործողությունների բնույթը գիտակցելու և դրանք ղեկավարելու ունակությունը, արաքը չպետք է որակվի որպես սահմանափակ մեղսունակության վիճակում կատարված:

Այսպիսով, թեև «անոմալ աֆեկտը» ունի իր տարբերակիչ հատկանիշները՝ աֆեկտային վիճակի ավելի արագ առաջացում, առողջ անձանց համեմատությամբ գիտակցության ավելի խորը մթագում, մտածողության խանգարում, այնուամենայնիվ այն իրենից ներկայացնում է ոչ թե աֆեկտի նոր ձև, այլ ֆիզիոլոգիական աֆեկտի առանձին տեսակ¹¹:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ նշենք, որ ֆիզիոլոգիական աֆեկտը չի ա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՔՈՆ

ռաջացնում սահմանափակ մեղսունակության վիճակ և ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես փսիխոտիկ բնույթի հոգեկան հիվանդագին վիճակ. աֆեկտի առաջացման պատճառ են հանդիսանում արտաքին գրգռները, օրինակ՝ տուժողի հակաօրինական, հակաբարոյական վարքագիծը, այն դեպքում, երբ սահմանափակ մեղսունակության վիճակը բացառապես պայմանավորվում է վերջինի բժշկական չափանիշով՝ հոգեկան հիվանդագին խանգարման առկայությամբ:

Բացառված չէ, իհարկե, որ աֆեկտի վիճակում հանցանք կատարի նաև ոչ փսիխոտիկ բնույթի հոգեկան հիվանդագին խանգարում ունեցող անձը: Սակայն դա չի փոխի հանցագործության որակումը՝ որպես հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված: Միևնույն ժամանակ համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատարանը կարող է անձին ճանաչել սահմանափակ մեղսունակ:

Որոշ գիտնականներ հնարավոր են համարում սահմանափակ մեղսունակությունը նախատեսող հոդվածի կիրառումը այն անձանց նկատմամբ, ովքեր հանցանքը կատարել են ֆիզիոլոգիական հարբածության վիճակում: Մասնավորապես, Օ. Դ. Սիտկովսկայան առաջարկում է հանցանքի կատարման ժամանակ ալկոհոլային հարբածությունը դիտել որպես «գիտակցական և կամային ուղորտը ախտահարող գործոն», ինչը հիմք է հանցանքը սահմանափակ մեղսունակության վիճակում կատարված համարելու համար: Ըստ հեղինակի՝ նման դեպքերում էապես նվազում է անձի՝ սեփական արարքները ղեկավարելու հնարավորությունը¹²:

Վերը նշված կարծիքը քննադատվել է մի շարք հեղինակների կողմից: Մասնավորապես, Ա. Կուդրյավցևը անոմալ աֆեկտի ալկոհոլային տեսակը համարում է մեղքը ծանրացնող հանգամանք¹³ և դրանով իսկ բացառում այն՝ որպես մեղքը և պատաս-

խանատվությունը մեղմացնող, առավել ևս սահմանափակ մեղսունակության վիճակ առաջացնող հանգամանք դիտելը:

Ն.Գ.Իվանովը հարբածությունը ոչ միայն հավասարեցնում է աֆեկտի վիճակին, այլև այն դասում է հոգեկան անոմալիաների շարքը՝ հետևյալ հիմնավորմամբ. «Հարբածությունը դժվարացնում է սեփական վարքագծի նշանակությունը գիտակցելու և ստեղծված իրավիճակը վերլուծելու հնարավորությունը, ինչը վկայում է աֆեկտային վիճակին բնորոշ հոգեկան անոմալիայի մասին»¹⁴: Նման մոտեցումը, մեր կարծիքով, անթույլատրելի է, քանի որ նույնացվում են իրենց բնույթով տարբեր հոգեկան վիճակներ, ինչպիսիք են ֆիզիոլոգիական հարբածությունը, աֆեկտը, հոգեկան խանգարումները: Ավելին, դատական բժշկության մեջ հոգեկան անոմալիաները հասկացվում են որպես «հոգեկան խանգարումներ, որոնք, սակայն, չեն առաջացնում անմեղսունակության վիճակ»¹⁵: Բացի այդ՝ տարբերվում են հիվանդագին և ոչ հիվանդագին բնույթի հոգեկան անոմալիաներ: Հիվանդագին բնույթի հոգեկան անոմալիաներ են համարվում այսպես կոչված սահմանային վիճակները, փսիխոպատիաները, նևրոզը, սոմատիկ բնույթի հոգեկան խանգարումները, ինչպես նաև ալկոհոլիզմը և թմրամոլությունը¹⁶: Ոչ հիվանդագին հոգեկան անոմալիաների թվին են դասվում ֆիզիոլոգիական աֆեկտը, գերհոգնածության հոգեկան դրսևորումները, ոչ հիվանդագին երևակայությունը և հոգեկանի այլ, ոչ հիվանդագին փոփոխությունները¹⁷: Սահմանափակ մեղսունակությունը սահմանելիս օրենքն օգտագործում է «մեղսունակությունը չբացառող «հոգեկան խանգարում», այլ ոչ թե «հոգեկան անոմալիա» արտահայտությունը: «Հոգեկան խանգարումը» ավելի լայն հասկացություն է, քան «հիվանդագին բնույթի հոգեկան անոմալիան»: «Մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումը» չի ընդգրկում ֆիզիոլոգիական հարբածությունը, ինչպես նաև հոգեկանի այլ ոչ հիվանդագին փոփոխությունները: Դա նշանակում է, որ հարբած վիճակում հանցանք կատարելու հա-

մար քրեական պատասխանատվություն սահմանող նորմը չի կարող հատուկ ճանաչվել սահմանափակ մեղսունակությունը սահմանող նորմի նկատմամբ, հետևապես սահմանափակ մեղսունակությունը բնութագրող չափանիշները կիրառելի չեն ֆիզիոլոգիական հարբածության դեպքում: Դա նշանակում է, որ օրենսդիրը չի նախատեսում մեղմացում հանցանքը հարբած վիճակում կատարած անձանց նկատմամբ:

Որոշ հեղինակներ հարբած վիճակում հանցանք կատարած անձանց նկատմամբ սահմանափակ մեղսունակությունը սահմանող նորմի կիրառման հնարավորությունը հիմնավորում են նրանով, որ «ալկոհոլի սխտեմատիկ չարաշահումը կարող է հանգեցնել քրոնիկ ալկոհոլիզմի, իսկ վերջինս առաջացնում է անձնային այնպիսի փոփոխություններ, որոնք թույլ են տալիս այն դասել մեղսունակությունը չբացառող հոգեկան անոմալիաների շարքը»¹⁸: Նման մոտեցման պարագայում համեմատվում են սկզբունքորեն տարբեր երկու երևույթներ՝ ալկոհոլամոլություն (ալկոհոլային կախվածություն) և հարբածություն (ալկոհոլային թունավորում): Առաջինը հանգեցնում է ալկոհոլային փսիխոզների առաջացման, ինչպիսիք են սպիտակ տենդը, ալկոհոլային հալուցիոզը, ալկոհոլային գառանցանքը, ալկոհոլային էնցեֆալոպատիան¹⁹: Ալկոհոլային փսիխոզի վիճակում հանցանք կատարած անձինք ճանաչվում են անմեղսունակ, քանի որ այն իրենից ներկայացնում է հոգեկան խանգարում, որի հետևանքով հանցանքի կատարման ժամանակ անձն ունակ չէ գիտակցելու իր արարքների բնույթը և ղեկավարելու դրանք: Իսկ ֆիզիոլոգիական հարբածության վիճակում (հարբածության ցանկացած աստիճան) հանցանք կատարելիս սուբյեկտի անմեղսունակության վերաբերյալ հարց չի ծագում, քանի որ վերջինիս վարքագիծը կրում է գիտակցական և կամային բնույթ²⁰: Ֆիզիոլոգիական հարբածությունը՝ իր բոլոր տեսակներով, չի հանգեցնում գիտակցական ոլորտի մթազման և չի կրում փսիխոտիկ բնույթ²¹: Հարբած վիճակում անձն արձագանքում է իրականությանը և գոր-

ծում ըստ ստեղծված իրավիճակի. ցուցաբերում ագրեսիա թույլերի նկատմամբ, նվաղում ավելի ուժեղների առաջ և այլն: Բացառություն է կազմում պաթոլոգիկ հարբածությունը, որը «իրենից ներկայացնում է ոչ թե ֆիզիոլոգիական հարբածության ծանր տեսակ, այլ ալկոհոլի օգտագործմամբ պայմանավորված ծանր հոգեկան խանգարում»²²: Պաթոլոգիկ հարբածությունը բացառում է հանցանք կատարած անձի մեղսունակությունը, քանի որ այն հանգեցնում է գիտակցության խոր մթազման և առաջանում է ալկոհոլի նույնիսկ քիչ քանակություն ընդունելուց:

Օրենսդիրը, կարգավորելով հարկադիր բուժում նշանակելու հիմքերը, առանձնացնում է անձանց մի քանի խմբեր, որոնց նկատմամբ դատարանը կարող է նշանակել նշված միջոցները.

1. ով հանցանքը կատարել է սահմանափակ մեղսունակության վիճակում (ՀՀ քր. օր.-ի հոդված 97, մաս 1, կետ 3),

2. ով հանցանք է կատարել և ճանաչվել է ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող (ՀՀ քր. օր.-ի հոդված 97, մաս 1, կետ 4):

Սահմանափակ մեղսունակ անձանց և ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցող անձանց օրենսդրական տարբերակումն ինքնին բացառում է վերջիններիս նկատմամբ հոդված 27-ի կիրառման հնարավորությունը: Այս կապակցությամբ առաջարկում ենք հոդված 27-ը ձևակերպել հետևյալ կերպ. «Ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով»: Նման ձևակերպումը կբացառի նշված անձանց նկատմամբ ինչպես մեղմ պատիժ նշանակելու, այնպես էլ պատժի մեղմացում ենթադրող հոդված 26-ը կիրառելու հնարավորությունը:

Այսպիսով, ալկոհոլային հարբածությունը չի կարող դիտվել որպես սահմանափակ մեղսունակության վիճակ, քանի որ այն առաջանում է ալկոհոլի որոշակի քանակ օգ-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

տագործելու հետևանքով, ինչը վկայում է սահմանափակ մեղսունակության բժշկական չափանիշի, այն է՝ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման բացակայության մասին: Այս կապակցությամբ արդարացի ենք համարում օրենսդրի տարբերակված մոտեցումը, այն է՝ սահմանափակ մեղսունակությունը և ֆիզիոլոգիական աֆեկտը պատիժը մեղմացնող, իսկ ակլոհոլային հարբածությունը ծանրացնող հանգամանքների շարքին դասելը: Այսպիսով, սահմանափակ մեղսունակութ-

յունը կարելի է բնորոշել որպես մեղսունակության տարատեսակ, որի դեպքում մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումով տառապող անձը, ով հանցանքը կատարելու պահին ընդունակ չի եղել լիովին գիտակցելու իր արարքի բնույթը և հանրային վտանգավորությունը կամ դեկավարելու այն, ենթակա է քրեական պատասխանատվության:

Ֆիզիոլոգիական աֆեկտը և հարբածությունը չեն առաջացնում սահմանափակ մեղսունակության վիճակ, քանի որ բացակայում է վերջինիս բժշկական չափանիշը՝ ոչ փսիխոտիկ բնույթի հոգեկան խանգարումը:

¹ Տե՛ս Козаченко И.Я., Сухарев Е.А. “Проблема уменьшенной вменяемости” Екатеринбург, 1993, էջ 20:

² Տե՛ս Антонян Ю.М., Бородин С.В. “Преступность и психические аномалии” М., 1987, էջ.108:

³ Кудрявцев И. А. Комплексная судебная психолого-психиатрическая экспертиза. . М.: Юридическая литература, 1988. էջեր 85, 86:

⁴ Տե՛ս Дубинин И. П., Карпец И. И., Кудрявцев В.Н. “Генетика, поведение, ответственность”. — М., 1989, էջեր 277–278:

⁵ Антонян Ю. М., Гульдан В. В. “Криминальная патопсихология”. М., 1991. էջ 47:

⁶ Зейгарник Б. В.” Патология мышления”. М., 1962, էջ 190:

⁷ Гульдан В. В. Основные типы мотивации противоправных действий у психопатических личностей // Вестник МГУ. Сер. 14: Психология. 1984. 1 1. էջ 34:.

⁸ Տե՛ս Научно-практический комментарий Уголовного кодекса Украины от 5 апреля 2001 года / Под ред. Н. И. Мельника, Н. И. Хавронюка. Киев: Каннон: АСК, 2002, էջ 301:

⁹ Տե՛ս Кудрявцев И. А. Комплексная судебная психолого-психиатрическая экспертиза. М.: Юридическая литература, 1988. էջեր 109–110:

¹⁰ Романов В.В. Юридическая психология. М., 1998, էջ 167:

¹¹ Տե՛ս Зайцев А. В. К вопросу об аномальном аффекте в уголовном праве () Проблемы законности³: Республ³канський м³жв³домчий

науковий зб³рник / В³дп. ред. В. Я. Тац³й. — Харк³в: Нац³ональна юридична академ³я України, 2001. Вип. 48, էջեր 196–201:

¹² Տե՛ս Ситковская О. Д. “Психологические основания уголовной ответственности”. Баку, 1992. էջ 62:

¹³ Տե՛ս Кудрявцев И.А. Психолого-психиатрическая экспертиза. проблемы и перспективы // Психологический журнал: 1985, N 1, էջեր 90-91:

¹⁴ Иванов Н. Г. “Аномальный субъект преступления. Проблемы уголовной ответственности. Учебное пособие для вузов”. М., 1998, էջ 203:

¹⁵ Судебная психиатрия /Под ред. А.С. Дмитриева, Т.В. Клименко. М., 1998, էջ 40:

¹⁶ Տե՛ս Антонян Ю.М., Бородин С.В. “Преступное поведение и психические аномалии” / Под ред. В.Н. Кудрявцева. М., 1998, էջ.10:

¹⁷ Տե՛ս Жариков Н.М., Морозов Г.В., Хритинин Д.Ф. Указ. соч., էջ 42:

¹⁸ Уголовное право. Общая часть. М., 1993, էջեր 283-284:

¹⁹ Տե՛ս Алкоголизм. Руководство для врачей / Под ред. Г.В. Морозова, В.Е. Рожнова, Э.А. Бабаяна. М., 1983, էջեր 225-226:

²⁰ Տե՛ս Тимофеева Н.Н., Тимофеева Л.Н. Содержание и объем работы эксперта-психиатра // Правоведение. 1971, N 5. էջ 82:

²¹ Տե՛ս Алкоголизм. Руководство для врачей / Под ред. Г.В. Морозова, В.Е. Рожнова, Э.А. Бабаяна. М., 1983, էջեր 39-40:

²² Տե՛ս Судебная психиатрия / Под ред. А.С. Дмитриева, Т.В. Клименко. М., 1998, էջ 346:

ՄՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ-ՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Նորա ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ եվրոպական և միջազգային
իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Ապրանքների ազատ տեղաշարժն ու պետությունների միջև առևտրում խոչընդոտների վերացումը, իր առավելություններով հանդերձ, յուրաքանչյուր պետությանը կանգնեցնում են մեկ այլ խնդրի առջև, այն է՝ իր սպառողին զերծ պահել անորակ, կյանքի ու առողջության համար վտանգ ներկայացնող ապրանքներից: Այս խնդիրը առավել արդիական է դառնում հատկապես Եվրոպական միության ընդհանուր շուկայի համատեքստում: Շահագրգռված լինելով Ընկերակցության անդամ պետությունների միջև ապրանքների ազատ հոսքի խոչընդոտները վերացնելու հարցում՝ երկրները միևնույն ժամանակ ձգտում են կանխել այն ապրանքների մուտքը իրենց շուկա, որոնք չեն համապատասխանում ազգային ստանդարտներին ու պահանջներին և կամ այլ կերպ կարող են վտանգել հանրային առողջությունն ու անվտանգությունը: Սակայն, քանի որ ազգային ստանդարտները, տեխնիկական պահանջները և այլ նմանատիպ կարգավորումները ամենևին էլ նույնական չեն բոլոր երկրներում, դրանք հանդիսացել են Ընկերակցության ներսում ազատ առևտրի խոչընդոտների ստեղծման աղբյուր և վտանգել ներքին շուկայի գաղափարը: Այս է պատճառը, որ ապրանքների ազատ առևտուրը և սպառողների պաշտպանությունը շարունակ հանդես են եկել որպես միմյանց հետ հակասության մեջ գտնվող նպատակներ¹:

Միևնույն ժամանակ, սպառողների շահերի պաշտպանությունը միախուսված է այնպիսի արժեքների հետ, ինչպիսիք են մարդկանց կյանքի և առողջության պաշտպանությունը: Ավելին, Եվրոպական Ընկե-

րակցության հիմնադիր պայմանագրի (այսուհետ՝ ԵԸ պայմանագիր)² 153 հոդվածը առանձնացնում է սպառողների առողջության և անվտանգության պաշտպանությունը՝ որպես սպառողների շահերի բարձր մակարդակով պաշտպանության ապահովմանն ուղղված Ընկերակցության խնդիրներից մեկը:

ԵԸ Պայմանագրի 28 հոդվածը սահմանում է, որ անդամ պետությունների միջև արգելվում են ներմուծման քանակական սահմանափակումները և համարժեք ազդեցություն ունեցող բոլոր միջոցները: Ներքին շուկայի կայացման տեսանկյունից կարևորվող մյուս դրույթը ԵԸ Պայմանագրի 30 հոդվածով ապրանքների ազատ տեղաշարժման սկզբունքից սահմանված բացառություններն են: Հոդվածում մասնավորապես ամրագրված է.

«28 և 29 հոդվածների դրույթները չեն բացառում ներմուծման, արտահանման կամ տարանցվող ապրանքների վրա դրված սահմանափակումները կամ արգելքները, որոնք արդարացված են հանրության բարոյականությամբ, հանրային քաղաքականությամբ կամ հանրային անվտանգությամբ, մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի և առողջության պաշտպանությամբ, գեղարվեստական, պատմական կամ հնէաբանական արժեք ունեցող ազգային հարստությունների պաշտպանությամբ, կամ արդյունաբերական և առևտրային սեփականության պաշտպանությամբ: Սակայն այս արգելքներն ու սահմանափակումները չպետք է հանդիսանան անդամ պետությունների միջև առևտրի կամայական սահմանափակումների կամ քողարկված խտրականության միջոցներ»:

Հանրության առողջության պաշտպանությունը անդամ պետությունների կողմից շուկա առանձին ապրանքների մուտքը

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

սահմանափակելն արդարացնելուն ուղղված առավել հաճախ վկայակոչվող փաստարկներից է³: Չգտելով ընդհանուր շուկայում սպառողների կյանքի և առողջության պաշտպանությանը նպաստելուն՝ Ընկերակցությունների Դատարանը ևս շարունակ փորձել է հավասարակշռել Ընկերակցության երկու հիմնարար նպատակները՝ ապրանքների ազատ տեղաշարժը և սպառողների միասնական ու բարձր մակարդակով պաշտպանությունը: Դատարանը բազմիցս վերահաստատել է նաև այն, որ մարդկանց առողջությունն ու կյանքը Պայմանագրի հոդված 30-ով պաշտպանվող առաջնային արժեքներից են, և այս ոլորտում Ընկերակցության մակարդակով ընդունված կարգավորումների բացակայության դեպքում՝ անդամ պետությունների իրավասությանն է վերապահված որոշելու, թե ինչ մակարդակի պաշտպանություն են ցանկանում տրամադրել հանրության կյանքի և առողջության պաշտպանության հարցերում և ինչպես են ապահովելու այդ մակարդակի առկայությունը⁴: Այդուհանդերձ, Դատարանը բազմիցս նաև շեշտել է, որ ընտրված միջոցները չպետք է ծառայեն որպես անդամ պետությունների միջև առևտրի կամայական սահմանափակումների կամ քողարկված խտրականության միջոցներ⁵:

Սույն հոդվածի շրջանակներում քննության է առնվում Եվրոպական ընկերակցության քաղաքականությունը այն պարագայում, երբ միմյանց են բախվում ապրանքների ազատ տեղաշարժը ու սպառողների կյանքի և առողջության պաշտպանության հիմնխնդիրները՝ վերլուծելով այն հիմնարար սկզբունքները, որոնց հիման վրա հավասարակշռվում են այս երկու արժեքները գործնականում:

«Նախազուշականության սկզբունքը»՝ որպես սպառողների առողջության և անվտանգության երաշխիք. Եվրոպան միշտ էլ աչքի է ընկել անժամոք ապրանքների, նոր

տեխնոլոգիաների և գլոբալ շուկաների նկատմամբ իր զգուշավորությամբ՝ շտապելով ընդունել հնարավոր ռիսկերի կանխմանն ուղղված կանխարգելիչ կարգավորումներ: Եթե համեմատելու լինենք, օրինակ, ԱՄՆ-ի հետ, ապա կարելի է պնդել, որ սկսած 1980-ականներից Եվրոպական Ընկերակցությունը առողջապահական և բնապահպանական ռիսկերի նկատմամբ հանդես է եկել առավել նախազուշական կարգավորումներով՝ սկսած զենետիկորեն ձևափոխված օրգանիզմներից մինչև մսամթերքի մեջ հորմոնների պարունակությունը⁶: Չնայած այն հանգամանքին, որ միացյալ Եվրոպայի այդպիսի զգուշավոր քաղաքականությունը շատերի կողմից դիտարկվում է որպես առևտրի, գիտատեխնիկական և տնտեսական առաջընթացի խոչընդոտ, այնուամենայնիվ այսօր արդեն փաստ է այն, որ սպառողների պաշտպանության, սննդամթերքի անվտանգության և անորակ ապրանքների համար պատասխանատվության առումով Եվրոպայում գործում են առավել խիստ և սպառողների շահերին միտված կարգավորումներ, քան նույն ԱՄՆ-ում⁷: ԵՄ Առևտրի հանձնակատար Պասկալ Լամին հետաքրքիր կերպով է բնութագրել Եվրոպայի և ԱՄՆ-ի մոտեցումների տարբերությունը 1999-ին արված իր հայտարարության մեջ. «ԱՄՆ-ում ընդունում են, որ եթե արտադրանքի վերաբերյալ որևէ ռիսկ չի ապացուցվել, ապա այն պետք է թույլատրվի: ԵՄ-ում մենք ունենք այն մոտեցումը, որ չի կարող թույլատրվել այնպիսի մի բան, որում առկա է ռիսկի հավանականություն»⁸:

Այսպիսով, ընդունելով, որ Ընկերակցությունը իր հանրային կարգը չի կարող կառուցել բացառապես շուկայական արժեքների վրա, Դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ դրանք պետք է հավասարակշռվեն հասարակության համար մտահոգիչ այլ արժեքներով⁹: Առևտրային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց առանձին ապրանքների միջոցով

մարդկանց առողջությանը և անվտանգությանը սպառնացող վտանգների աճը ակնհայտ դարձրեց, որ ազատ առևտրի հարցում հիմնականում *Cassis de Dijon-յան բանաձևը*, որի համաձայն անդամ պետությունը իրավունք չունի ներթափանցելու ներմուծվող ապրանքի կառուցվածքային բովանդակային բաղադրիչների (տեխնիկական ասպեկտների) մեջ և դրանց հիման վրա արգելել ապրանքի մուտքը շուկա, առանձին իրավիճակներում ընդունելի չի կարող լինել սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից: Արդյունքում, Դատարանը թույլատրելի է համարել, մարդկանց առողջության, անվտանգության, սոցիալ-տնտեսական նկատառումներից ելնելով, ապրանքների ազատ տեղաշարժի սահմանափակումները՝ զարգացնելով այս ուղղությամբ հողված 30-ից բխող բացառությունների հայեցակարգը¹⁰:

Սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության հետ կապված Դատարանը ձևավորել է այսպես կոչված «նախազգուշականության սկզբունքը» (*precautionary principle*)՝ անդամ պետություններին որոշակի ազատություն վերապահվելով ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակող կանոնների ընդունման հարցում, երբ կասկածներ կան ապրանքի որոշակի բաղադրամասերի (ինգրեդիենտների)՝ սպառողների առողջության վրա վնասակար ազդեցության վերաբերյալ¹¹: Հարկ է նկատել, որ նախազգուշականության սկզբունքը (հողված 174)¹² հաճախ քննարկվում է հատկապես հանրային առողջության և շրջակա միջավայրի խնդիրների համատեքստում¹³: Մինչդեռ, իրականում դրա սահմանները շատ ավելի ընդգրկում են. ներառում են այն բոլոր իրավիճակները, երբ գիտական ապացույցները բավարար, ավարտուն կամ հստակ չեն, և նախնական, օբյեկտիվ գիտական գնահատման արդյունքում հիմնավոր կասկածներ են առաջանում մարդկանց, կենդանիների, բուսականության առողջության վրա հնարավոր վտանգավոր

ազդեցությունների վերաբերյալ¹⁴: «Նախազգուշականության սկզբունքը» սերտորեն խարսխվում է նաև սպառողների շահերին, քանի որ վերջիններիս պաշտպանության տեսանկյունից առողջության համար վտանգ ներկայացնող ապրանքը չի կարող ընդունելի լինել:

ԵԸ Պայմանագրի մի շարք այլ հողվածներ նախազգուշականության սկզբունքին անդրադառնում են անուղղակիորեն: Այսպես, Պայմանագրի 95(3) հողվածը սահմանում է, որ «Հանձնաժողովը կետ 1-ով նախատեսված առողջությանը, անվտանգությանը, շրջակա միջավայրի պաշտպանությանն ու սպառողների պաշտպանությանը վերաբերող առաջարկներում որպես հիմք է ընդունում պաշտպանության բարձր մակարդակը՝ հաշվի առնելով հատկապես գիտական փաստերի վրա հիմնված բոլոր նոր զարգացումները: Իրենց համապատասխան իրավասությունների շրջանակում Եվրոպական խորհրդարանն ու Խորհուրդը նույնպես ձգտելու է հասնել այդ խնդիրների իրականացմանը»:

Մինևույն ժամանակ, Պայմանագրի 152 (1) հողվածի համաձայն՝ «մարդու առողջության պաշտպանության ոլորտում պետք է ապահովել բարձր մակարդակ ԸՆկերակցության բոլոր քաղաքականություններն ու գործողությունները սահմանելիս, ինչպես նաև դրանք իրականացնելիս»:

Նշված դրույթներն իրենց կոնկրետացումն են ստացել մի շարք այլ փաստաթղթերում: 1997թ. ապրիլի 30-ի ԵՄ-ում Սննդամթերքի մասին օրենքի հիմնարար սկզբունքների վերաբերյալ Կանաչ Փաստաթղթում¹⁵ ասված է, որ «Պայմանագիրը ԸՆկերակցությունից պահանջում է նպաստել հանրության առողջության, շրջակա միջավայրի, սպառողների պաշտպանության բնագավառում պաշտպանության բարձր մակարդակին: Պաշտպանության բարձր մակարդակ և հետևողականությունն ապահովելու նպատակով պաշտպանողական միջոցառումները պետք է հիմնված լինեն ռիսկի գնահատման, բոլոր համապա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

տասխան ռիսկային գործոնները հաշվի առնելու, ներառյալ տեխնոլոգիական ասպեկտները, *մատչելի լավագույն գիտական ապացույցների և զննության համար նմուշներ վերցնելու և թեստավորման մեթոդների հնարավորության վրա*: Երբ ռիսկի ամբողջական գնահատումը հնարավոր չէ, միջոցառումները պետք է հիմնված լինեն **ճախագուշակականության սկզբունքի վրա** (ընդգծումն իմն է-Ն.Ս.):

Կանաչ փաստաթղթի վերաբերյալ 1998թ. մարտի 10-ի իր Բանաձևում Եվրոպական խորհրդարանը նշում է, որ. «Եվրոպական Սննդամթերքի մասին օրենքը հիմնված է սպառողների առողջության կանխարգելիչ պաշտպանության սկզբունքի վրա,

...այս ոլորտում քաղաքականությունը պետք է հիմնված լինի գիտականորեն հիմնավորված ռիսկի վերլուծության վրա՝ հարկ եղած դեպքում հավելելով **ճախագուշակականության սկզբունքի վրա հիմնված** ռիսկի պատշաճ կառավարում...» (ընդգծումն իմն է-Ն.Ս.)⁶:

Նախագուշակականության սկզբունքի միատեսակ կիրառությունն ապահովելու հարցում և ուղղորդող կարգավորումներ տալու տեսանկյունից թերևս հիմնական լուրջ փորձ արվել է Եվրոպական Ընկերակցության Հաղորդագրությամբ¹⁷: Այս փաստաթղթի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու մի շարք սկզբունքներ, որոնց վրա պետք է հիմնված լինի ճախագուշակականության սկզբունքից բխող միջոցառումների ձեռնարկումը.

– միջոցառումը պետք է համամասնական լինի անհրաժեշտ պաշտպանության մակարդակին և ուղղված չլինի զրոյական ռիսկի դեմ,

– նույնական իրավիճակներում չպետք է դրսևորվի տարբեր մոտեցում, և տարբեր իրավիճակները չպետք է նույնական մոտեցման արժանանան,

– ձեռնարկված միջոցառումները իրենց բնույթով և ծավալներով պետք է համահունչ լինեն համարժեք ոլորտներում արդեն իսկ ձեռնարկված միջոցառումների հետ,

– միջոցառումների ձեռնարկումը պետք է հիմնված լինի դրանց տնտեսական ծախսերի և առավելությունների վերլուծության վրա,

– միջոցառումները պետք է վերանայվեն նոր գիտական տվյալների առկայությանը զուգահեռ,

– պետք է պատասխանատվություն ստանձնել ռիսկի առավել համակողմանի գնահատման համար գիտական ապացույցների հավաքման ուղղությամբ:

«Նախագուշակականության սկզբունքը», ըստ էության, իր մեջ ամփոփում է երկու ասպեկտներ, այն է՝

1) *քաղաքական որոշում*՝ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու կամ չձեռնարկելու վերաբերյալ, որի արդյունքում գործի է դրվում նշված սկզբունքը: Դա պայմանավորված է նրանով, որ այն հարցը, թե ռիսկայնության որ մակարդակն է ընդունելի տվյալ հասարակության համար, քաղաքական որոշման խնդիր է:

2) ինչպես գործելու տարրը, այսինքն՝ ինչ միջոցառումներ են ձեռնարկվում «ճախագուշակականության սկզբունքի» կիրառման արդյունքում:

Նախագուշակականության սկզբունքի կիրառման առանցքային տարրերից մեկը *բացասական հետևանքների (ռիսկի) գիտական գնահատումն* է, առանց որի սկզբունքից բխող միջոցառումները չեն կարող ձեռնարկվել: Ռիսկի գնահատումը պետք է հիմնված լինի վստահելի գիտական տվյալների, տրամաբանական դատողության վրա, որը թույլ է տալիս եզրահանգումների գալ վտանգի հավանականության և բնակչության առողջության վրա դրա վտանգավոր ազդեցության աստիճանի, հնարավոր վնասների ծավալների, վնասների տևականության և իրավիճակի ուղղելիության տեսանկյունից: Չնայած որ ռիսկի

ամբողջական գնահատում իրականացնելը միշտ չէ, որ հնարավոր է, այդուհանդերձ առնվազն բոլոր միջոցները պետք է գործադրվեն առկա գիտական տեղեկատվությունը գնահատելու ուղղությամբ: Գնահատման արդյունքները պետք է ամփոփվեն համապատասխան զեկույցում, որը կարող է նաև առանձնացնել հետագա գիտական ուսումնասիրությունների համար առաջադրվող որոշակի հարցեր¹⁸: Ռիսկի գնահատումը, ընդհանուր առմամբ, ներառում է չորս տարր՝

1. վտանգի իդենտիֆիկացում. կենսաբանական, քիմիական, ֆիզիկական բոլոր այն տարրերի բացահայտում, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ,

2. վտանգի բնութագրում. բացասական ազդեցությունների բնույթի և ուժգնության աստիճանի որոշում՝ քանակական և որակական առումով, ինչպես նաև վտանգավոր տարրի և բացասական հետևանքների միջև պատճառական կապի հաստատում,

3. վտանգված լինելու հավանականության գնահատում,

4. ռիսկի նկարագրում, ինչը ենթադրում է առողջության վրա հայտնի կամ պոտենցիալ բացասական հետևանքների ազդեցության հավանականության, հաճախականության և ուժգնության որակական և քանակական գնահատում¹⁹:

Նախքան նախազգուշականության սկզբունքի վրա հիմնված որոշակի լրիվ իրագործել ռիսկի գնահատման վերոհիշյալ բոլոր փուլերը:

Այսպիսով, զարգացնելով նախազգուշականության սկզբունքը, Եվրոպական ԸՆկերակցությունը փորձում է դրանով հավասարակշռել սպառողների առողջության և անվտանգության վերաբերյալ մտահոգությունները և ազատ առևտուրը²⁰: Սակայն սկզբունքի բովանդակության բացահայտման հարցում մեծ է նաև Եվրոպական դատարանի դերը, որը զգալի նախադեպային իրավունք է ձևավորել այս ոլորտում, որը կդիտարկենք ստորև՝ քննարկվող հար-

ցի էությունը առավել առարկայական դարձնելու համար:

Ոչ հավաստի գիտական ապացույցները և սպառողների պաշտպանությունը ապրանքների ազատ տեղաշարժից. Ինչպես արդեն նշվեց, «նախազգուշականության սկզբունքի» իրավական ձևակերպումներն ի հայտ են եկել վերջին տասնամյակում միայն, մինչդեռ բովանդակային առումով սկզբունքը արտացոլում է գտել Դատարանի ավելի վաղ շրջանի գործերում, որոնք իրական հող նախապատրաստեցին սկզբունքի բովանդակության հետագա հարստացման համար:

Այսպես, *Eyssen-ի* գործում²¹ Դատարանը որդեգրեց այն մոտեցումը, որ պանրում միզինի²² հավելման արգելքը ընդունելի է: Իր հիմնավորումներում Դատարանը նշեց, որ միզինի լայնածավալ օգտագործումը ոչ միայն կաթի, այլ նաև երկարատև պահպանման համար նախատեսված այլ ապրանքների մեջ անհրաժեշտություն է առաջացրել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով ուսումնասիրության ենթարկելու այս հավելումը պարունակող սննդամթերքի սպառման ռիսկը մարդկանց առողջության համար: Մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպությունը, ՄԱԿ-ը և Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, նախաձեռնել են հետազոտություն միզինի թույլատրելի առավելագույն չափի վերաբերյալ: Այդուհանդերձ, ուսումնասիրությունները դեռևս հնարավորություն չեն տվել հստակ եզրակացությունների հանգելու միզինի այն առավելագույն չափաքանակի վերաբերյալ, որը մարդը կարող է սպառել օրական առանց իր առողջությանը լուրջ վնաս պատճառելու: Սա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հավելումի գնահատումը կախված է մի շարք տարբեր գործոնների հետ, այդ թվում, որ միզինի չափաքանակը որոշելիս պետք է հաշվի առնվի ոչ միայն միզինի պարունակությունը այդ կոնկրետ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ

սննդամթերքում, այլ նաև ցանկացած այլ սննդամթերքում, որը սպառվում է տվյալ շուկայում²³:

Նույնանման մեկ այլ՝ *Sandoz-ի* գործում²⁴, Դատարանի քննության առարկա հանդիսացավ վիտամիններով հարստացված «մյուսլիի»²⁵ վաճառքի արգելքը Նիդեռլանդներում, այն դեպքում, երբ այդ սննդամթերքը ազատորեն վաճառվում էր Բելգիայում և Գերմանիայում: Նիդեռլանդական իշխանությունները արգելքը հիմնավորում էին առողջության համար վիտամինների վտանգավորության հանգամանքով: Դատարանը նշեց, որ թեև վիտամինները ընդհանուր առմամբ վտանգավոր չեն, բայց կարող են կոնկրետ վնասակար հետևանքներ ունենալ, եթե չափից ավելի օգտագործվեն որպես սովորական սննդի մաս, որի սպառման ծավալները անկանխատեսելի են և գնահատման ոչ ենթակա: Հաշվի առնելով գիտական ուսումնասիրությունների անորոշությունը՝ ազգային կարգավորումները, որոնք արգելում են առանց նախնական թույլտվության այնպիսի սննդամթերքի վաճառքը, որոնց վիտամիններ են հավելված, սկզբունքորեն համարվել է արդարացված՝ հողված 30-ով նախատեսված մարդկանց առողջության պաշտպանության հիմքերով²⁶, **եթե այդ վիտամինների հավելման անհրաժեշտությունը չի բխում սննդամթերքի պատրաստման տեխնիկական կամ սննդային պահանջներից**: Այսինքն, վիտամինների հավելումը թույլատրելի է դիտարկվում բոլոր այն դեպքերում, երբ դա սննդամթերքի պատրաստման պարտադիր տարր է կամ ուղղված է դրա որոշակի բաղադրիչների վերականգնմանը, որոնք վերանում են սննդամթերքի պատրաստման ընթացքում, և որոնք անհրաժեշտ են դրա սննդային արժեքի համար: Դատարանը ավելացրեց, որ «քանի որ ներկայումս գիտական ուսումնասիրություններն անորոշ են, ներդաշնա-

կեցման բացակայության պայմաններում, Անդամ պետությունների հայեցողությանն է վերապահվում որոշելու, թե մարդկանց կյանքի և առողջության ինչ մակարդակի պաշտպանություն են նրանք ցանկանում ապահովել՝ հաշվի առնելով, սակայն, Ընկերակցության ներսում ապրանքների ազատ տեղաշարժի պահանջները»²⁷:

Նախազգուշականության սկզբունքի վերաբերյալ Դատարանի՝ ավելի ուշ շրջանի հիմնարար որոշումներից է համարվում *United Kingdom of Great Britain and Northern Ireland v. Commission of the European Communities-ի* գործը, որով Դատարանը քննության էր առել Բրիտանիայից մասնաբերքի արտահանման վերաբերյալ Հանձնաժողովի արգելքը, որը ներդրվել էր «կովերի կատաղության» (bovine spongiform encephalopathy, BSE) համաճարակի փոխանցումը կանխելու նկատառումներից ելնելով²⁸: Այս գործով Դատարանը գտավ, որ. «երբ մարդկային առողջության համար կա ռիսկի առկայություն կամ դրա ծավալների հարցում՝ անորոշություն, կառույցները կարող են ձեռնարկել պաշտպանողական միջոցառումներ՝ **չսպասելով, որ այդ ռիսկերի իրական լինելը կամ լրջությունը դառնան լիովին ակնհայտ**» (ընդգծումն իմն է-Ն.Ս.) (կետ 99): Ապա, որպես հիմնավորում, Դատարանը նշում է, որ «այս մոտեցումը բխում է ԵԸ պայմանագրի 130r(1) հոդվածից, որի համաձայն՝ շրջակա միջավայրի բնագավառում Ընկերակցության քաղաքականությունը ի թիվս այլոց (*inter alia*) պետք է հետապնդի նաև մարդկային առողջությունը պաշտպանելու նպատակներ: Հողված 130r(2)-ը սահմանում է, որ այդ քաղաքականությունը նպատակաուղղված է պաշտպանության բարձր մակարդակի ապահովմանը և պետք է հիմնված լինի մասնավորապես կանխարգելիչ գործողությունների վրա, և որ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջները պետք է ներառվեն Ընկերակցության այլ քաղաքականությունների սահմանման և իրականացման

մեջ»(կետ 100)²⁹:

Մեկ այլ՝ *Pfizer Animal Health S.A. v. Council of the EU*-ի գործով³⁰ Առաջին աստիճանի Ընկերակցությունների Դատարանը հիմնավորված համարեց անտիբիոտիկի (*virginiamycin*) օգտագործման արգելքը կենդանիների սննդում, քանի որ այն ունի դիմացկուն բակտերիա զարգացնելու պոտենցիալ, ինչը հետագայում կարող է վարակել մարդկանց: Իր վճռում Դատարանը վերահաստատել է, որ «կանխարգելիչ միջոցառումը չի կարող հիմնված լինել ռիսկի նկատմամբ բացառապես հիպոթետիկ մտածանքների վրա՝ կառուցված պարզապես ենթադրությունների վրա, որոնք գիտականորեն չեն ստուգվել..... Ավելին, Ընկերակցության դատարանի կողմից նախագրուշականության սկզբունքի մեկնաբանությունից հետևում է, որ կանխարգելիչ միջոցառումը կարող է նախաձեռնվել, եթե ռիսկը պատշաճ հիմնավորված է միջոցառումների ձեռնարկման ժամանակ մատչելի գիտական տեղեկատվությամբ» (ընդգծումն իմն է-Ն.Ս.): Այս գործով Դատարանը միաժամանակ ընդգծեց, որ հանրության առողջության պաշտպանությանը պետք է նախապատվություն տրվի տնտեսական դիտարկումների համեմատությամբ:

Նախքան կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը ռիսկի պատշաճ գնահատման կարևորությունը ընդգծվել է նաև *EFTA Surveillance Authority v. Norway*-ի գործով³¹: Այստեղ նորվեգական իշխանությունները արգելել էին դանիական մի կազմակերպության կողմից եգիպտացորենի ձողիկների վաճառքը, որոնք հարստացված էին վիտամիններով և հանքային նյութերով: Նախագրուշականության սկզբունքին դիմելը իշխանությունները հիմնավորում էին այն հանգամանքով, որ կարող էր տեղի ունենալ դրանցում պարունակվող երկաթի գերսպառում, ինչը կարող էր վտանգ ներկայացնել հանրության առողջության համար: Դատարանը թեև գտավ, որ գործում առկա են նախագրուշականության սկզբունքի կիրառման բոլոր նա-

խադրյալները, սակայն նորվեգական իշխանությունների գործողություններն անիրավաչափ են, քանի որ վերջիններս **չեն իրականացրել ռիսկի համալիր գնահատում**՝ ցույց տալու համար, որ վիտամիններով հարստացումը վտանգ է ներկայացնում հանրության առողջության համար: Այսինքն, Դատարանը ընդգծել է «նախագրուշականության սկզբունքին» դիմելու համար ռիսկը հավաստի ապացույցներով հաստատելու հանգամանքի անհրաժեշտությունը:

Սննդամթերքում հավելումների առկայության հետևանքով դրանց ազատ տեղաշարժը սահմանափակելու հետ կապված գործերի շարքում հետաքրքիր է անդրադառնալ նաև *Commission v. Denmark* գործին³², որը, չնայած քննարկված նախորդ գործի հետ ունեցած արտաքուստ նմանությանը, Դատարանին այլ եզրահանգումների տեղիք տվեց: Խնդիրը ծագեց այն բանից հետո, երբ դանիական իշխանությունները 1998թ.-ին մերժեցին վիտամին C-ով հարստացված հյութի վաճառքը իրենց երկրի տարածքում: Դանիայի դեմ հայցում Յանձնաժողովը պնդում էր, որ վիտամիններով հարստացված սննդամթերքի ներմուծման արգելքներ ստեղծելը Դանիայում վարչարարական պրակտիկա է և առևտուրը պարբերաբար խոչընդոտելու միջոց: Ի հիմնավորումն կիրառվող արգելքների՝ դանիական իշխանությունները մատնանշում էին այն հանգամանքը, որ ներմուծվող պարենամթերքը չի համապատասխանում բնակչության սննդային պահանջումներին, հետևաբար դրանց ներկրումը կարող է սահմանափակվել Պայմանագրի հոդված 30-ի իմաստով: Նշվում էր, որ դեռևս գիտականորեն ապացուցված չէ վիտամինների սպառման թույլատրելի առավելագույն ծավալները և դրանց կոնկրետ հետևանքները: Մինչդեռ վիտամիններով հարստացված սննդամթերքի միջոցով ընդունվող վիտամինների քանակությունը յուրաքանչյուր կոնկրետ սպառողի դեպքում տարբեր է և վերահսկելի չէ, ինչը հա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

վելյալ չափաբաժնի դեպքում կարող է վտանգավոր լինել սպառողի առողջության համար: Կողմերի փաստարկները գնահատելիս Դատարանը բնականաբար հետադարձ հայացք նետեց ազատ առևտրին վերաբերող իր նախադեպային իրավունքին և ընդունեց, որ դանիական իշխանությունների գործողությունները հանդիսանում են ազատ առևտրին խոչընդոտ Պայմանագրի հոդված 28-ի իմաստով (այդ թվում՝ Դասուվիլյան սկզբունքների): Ինչպես *Sandoz-ի գործում*, այստեղ ևս Դատարանը ընդգծեց, որ եթե հավելումներից բխող ռիսկի հարցում առկա է անորոշություն, ապա անդամ պետության հայեցողությանն է վերապահված մարդկանց կյանքի և առողջության պաշտպանության ցանկալի մակարդակի որոշումը: Սակայն այս հարցում անդամ պետությունը միշտ պետք է հաշվի առնի ընկերակցության ներսում ազատ առևտրի պահանջները³³:

Այդուհանդերձ, կրկնելով հիպոթետիկ ռիսկի վրա հիմնվելու անթույլատրելիության վերաբերյալ նախորդ գործերում արված դատողությունները³⁴, Դատարանը միևնույն ժամանակ ավելացրեց, որ դանիական պրակտիկան անընդունելի է, քանի որ այն պարբերաբար արգելում է հարստացված պարենամթերքի ներմուծումը՝ առանց տարանջատելու հավելվող վիտամինների՝ ըստ դրանց տարբեր տեսակների կամ հանրության առողջության համար վտանգավորության աստիճանի: Այսպիսով, չիրականացնելով ռիսկի մանրամասն գնահատում և տարբերակում՝ հավելվող յուրաքանչյուր վիտամինի առումով, Դատարանի համոզմամբ դանիական իշխանությունները խախտում էին Պայմանագրի հոդված 28-ը, և ձեռնարկվող միջոցառումները չէին կարող համաչափ համարվել հոդված 30-ի իմաստով³⁵: Դատարանի այս դիրքորոշումը, ըստ էության, արտացոլում է Հանձնաժողովի 2000թ-ի վերը քննարկ-

ված Հաղորդակցությամբ ամրագրված խտրականության արգելման սկզբունքը, որի համաձայն տարբեր իրավիճակները չեն կարող նույնական մոտեցման արժանանալ³⁶:

Հետաքրքրական են քննարկվող գործի առնչությամբ տեսության մեջ բարձրացված քննադատություններն առ այն, որ Դատարանը վճռի հիմքում հաշվի չառավ մեկ կարևոր գործոն, այն է՝ Դանիայի մշակութային նորմերը, սննդի բնագավառում սովորույթները և առողջապահական քաղաքականությունը: Խնդիրը այն է, որ ուսումնասիրությունների համաձայն՝ Դանիայի բնակչությունը հարստացված սնունդը համարում է ոչ բնական, հետևաբար՝ ոչ առողջարար: Քննադատների պնդմամբ, ազգային սովորության ճորտերի ամտեսումը անդամ պետություններին, որոնք գնահատում են օրգանական և բնական սնունդը, կստիպի ձեռնպահ մնալու իրենց սպառողների պաշտպանության բարձր մակարդակից³⁷: Ավելին, անդամ երկրները ստիպված կլինեն ներմուծել այնպիսի ապրանքներ, որոնք չեն համապատասխանում իրենց բնակչության հիմնական սննդային պահանջներին³⁸: Դա, ըստ նրանց, վկայում է այն մասին, որ ԵՄ-ն չափազանց մեծ տեղ է հատկացնում ազատ առևտրին և չափազանց քիչ ուշադրություն՝ առողջապահական խնդիրներին:

Իհարկե, վերը բերված մտավախությունները չի կարելի հաշվի չառնել, քանի որ դրանք ունեն իրենց օբյեկտիվ հիմքերը և, ըստ էության, ուշադրության արժանի խնդիր են ներկայացնում յուրաքանչյուր առանձին անդամ պետության համար: Սակայն, մյուս կողմից էլ, չպետք է մոռանալ նաև այն, որ Եվրոպական միությունը տարասեռ երկրների միություն է, որոնցից յուրաքանչյուրը, բնականաբար, ունի իր ազգային սովորույթները, առանձնահատկությունները, պահանջները ու շահերը: Այդուհանդերձ, անդամագրվելով Եվրոպական միությանը, պետությունները և նրանց հասարակությունները ինքնական գնացել

են իրենց ազգային արժեքներից որոշակի զիջումների՝ հանուն առավել մեծ գաղափարի և շահերի պաշտպանության: Եթե Դատարանը չափից ավելի տուրք տա ազգային սովորույթներին, սննդի բնագավառում առանձին երկրների պահանջումներին, որոնցից, համոզված ենք, զուրկ չեն անդամ պետություններից և ոչ մեկը, ապա կխախտվեն Միության հիմքերը և այն ներդաշնակ քաղաքականությունը, որը դրված է վերջինիս հիմքում: Ավելին, բացառված չեն նաև վերը նշված ազգային առանձնահատկությունների ու սովորույթների շահարկումները և արդյունքում շուկա մուտքի անհիմն սահմանափակումները՝ ազգային տնտեսական շահերից ելնելով: Իհարկե, խնդրի արմատական լուծումները թաքնված են միության անդամ երկրների օրենսդրության ներդաշնակեցման և միութենական մակարդակով համընդհանուր կարգավորումների մշակման մեջ: Մինչ այս գործընթացի բարեհաջող ավարտը, ինչը անկասկած երկարատև ու դժվարին խնդիր է, թերևս հենց Դատարանի պրակտիկան պետք է ձևավորի ազգային շահերի և Ընկերակցության քաղաքականության միջև ողջամիտ հավասարակշռություն: Արդյունքում, փաստորեն, Դատարանի պրակտիկայով էլ ամրապնդվեց հանրության առողջության պաշտպանության նկատառումներով առավել խիստ ազգային կարգավորումների ընդունման հնարավորությունը, որոնք կարող են նույնիսկ սահմանափակել ազատ առևտուրը, եթե, իհարկե, բացակայում է Ընկերակցության մակարդակով միասնական կարգավորումը: Չնայած վերը քննարկված գործերը էությամբ նման էին *Cassis de Dijon-ի գործին*, այդուհանդերձ Դատարանը ընդունեց, որ առևտրի սահմանափակումը իրավաչափ է, եթե ապրանքների մեջ որոշակի տարրերի առկայության մասին գիտական ապացույցները համոզիչ և վերջնական չեն: Այս պարագայում, երբ բացակայում են Ընկերակցության մակարդակով ընդհանուր կանոններ, անդամ պետություններին

իրավունք վերապահվեց ընտրելու սեփական կարգավորումները և որոշելու սպառողների պաշտպանության համապատասխան մակարդակը³⁰:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ ԵԸ պայմանագրում արտացոլված նպատակները, ազատ առևտրի ռեժիմը, անդամ երկրների ապրանքների փոխադարձ ճանաչման սկզբունքը անվիճելի են դարձնում այն հանգամանքը, որ Ընկերակցությունը խիստ կարևորում է ազատ առևտուրը: Ավելին, նույնիսկ որոշակի օրինական շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով՝ ազատ առևտուրը սահմանափակելու անդամ պետություններին վերապահված իրավունքը (հոդված 30) ամենևին էլ չի նշանակում ապրանքների ազատ տեղաշարժը սահմանափակող միջոցների ընտրության հարցում բացարձակ ազատություն: Պետությունը պարտավոր է ընտրել հնարավոր այն միջոցը, որն առավել նվազ ազդեցությունն ունի ազատ առևտուրը խոչընդոտելու առումով: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված այս մոտեցումը կարմիր թելի պես անցնում է առևտրի սահմանափակման հետ առնչվող ցանկացած հարցի քննության ժամանակ՝ անկախ նրանից, թե մյուս արժեքը՝ սպառողների շահն ու մարդկանց առողջությունը, ոչ պակաս կարևոր է:

Ազատ առևտրի նման արժևորման պարագայում սպառողների շահերը և վերջիններիս առողջության հարցերը հաճախ անգամ ստորադասվում են ապրանքների ազատ տեղաշարժի շահերին: Արդյունքում ստեղծվում է բավական նուրբ իրավիճակ, երբ մի կողմից պետությունը խնդիր ունի պաշտպանելու իր սպառողին, բայց մյուս կողմից էլ իրավունք չունի խոչընդոտելու որոշակի ապրանքների մուտքը շուկա՝ այն նկատառումներից ելնելով, որ դրանք չեն բխում իր բնակչության սննդային պահանջումներից, չեն համապատասխանում ազգային սովորույթներին և սննդի անվտանգության վերաբերյալ պետական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

քաղաքականությանը (օրինակ, ինչպես *Commission v. Denmark* գործով): Այս դեպքում անդամ պետությունների առաջարկվում է ապավինել սպառողին տեղեկատվություն տրամադրելու միջոցով նրան պաշտպանելուն:

Այդուհանդերձ, սպառողների առողջության և անվտանգության պաշտպանության

ազգային, ԵՄ և միջազգային քաղաքականությունների միջև բախումների և տարածայնությունների հարթունը պետք է թերևս փնտրել այլ եղանակներով, մասնավորապես՝ խթանել սպառողների իրազեկման քաղաքականություն և օժանդակել արտադրանքի տարբեր բաղադրիչների մասին սպառողի ճանաչողությանը, դրանց պոտենցիալ հետևանքների մասին իմացությանը, բարձրացնել սպառողների գիտակցված ընտրություն կատարելու ունակությունը:

- ¹ Այս մասին առավել մանրամասն տես **Ն. Սարգսյան**, Formation of the well-informed consumer conception in EU (անգլ.), Իրավագիտության հարցեր, No.3-4, Երևան, 2008թ., էջ 81-91:
- ² Տե՛ս Consolidated Version of the Treaty Establishing European Community, Dec. 24, 2002, 2002 O.J. (C 325):
- ³ ԵՆ տարածքում ապրանքների տեղաշարժի ազատության և դրա սահմանափակման մասին առավել մանրամասն տես **Ն. Սարգսյան**, ԵՄ տարածքում ապրանքների ազատ տեղաշարժի սկզբունքի կիրառման առանձնահատկությունները, Իրավագիտության հարցեր, No.1-2, Երևան, 2008թ., էջ 75-87:
- ⁴ Տե՛ս Francis G. Jacobs, "The State of International Economic Law: Re-Thinking Sovereignty In Europe," 11 J. Int'l Econ. L. 5, March, 2008, էջ 22:
- ⁵ Տե՛ս մասնավորապես Case 176/84, Commission v. Republic of Greece, 1987 E.C.R. 1193, Case 178/84, Commission v. Germany, 1987 E.C.R. 1227:
- ⁶ Տե՛ս Jonathan B. Wiener, "Whose Precaution After All? A Comment On The Comparison And Evolution Of Risk Regulatory Systems," 13 Duke J. Comp. & Int'l L. 207, Summer 2003, էջ 210-211:
- ⁷ ԱՄՆ-ի համեմատությամբ Եվրոպան հատկապես զգուշավոր մոտեցում ունի գենետիկորեն ձևափոխված սննդամթերքի, հորմոններ պարունակող մսի, տոքսիկ քիմիկատների, խաղալիքների պատրաստման նյութերի նկատմամբ:
- ⁸ Տե՛ս Steve Charnovitz, "The Supervision of Health and Biosafety Regulation by World Trade Rules", 13 Tul. Env'tl. L. J. 271, n.181 (2000):
- ⁹ Տե՛ս Michelle P.Egan, Constructing a European Market: Standards, Regulation and Governan-

ce, Oxford University Press, 2003, էջ 100:

- ¹⁰ Տե՛ս Jennifer S. Martin, "An Emerging Worldwide Standard For Protections Of Consumers In The Sale Of Goods: Did We Miss An Opportunity With Revised UCC Article 2?", 41 Texas International Law Journal, Spring 2006, էջ 392-242:
- ¹¹ Տե՛ս Stephen Weatherill, Cases and Materials on EU Law, Oxford University Press, Seventh Edition 2006, էջ 373:
- ¹² ԵՆ պայմանագրի 174 հոդվածի համաձայն՝ «Ընկերակցության շրջակա միջավայրի քաղաքականությունը նպատակաուղղված է պաշտպանության որակական բարձ մակարդակի ապահովմանը՝ հաշվի առնելով Ընկերակցության տարբեր տարածաշրջանների իրավիճակների բազմազանությունը: Այն հիմնված է նախազգուշացման, կանխարգելիչ գործողությունների իրականացման, շրջակա միջավայրին հասցված վնասը իրավախախտի կողմից փոխհատուցելու սկզբունքների վրա»:
- ¹³ Այն ուղղակիորեն ամրագրված է շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված բազմաթիվ միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև դրան անդրադարձ է կատարվում տեսական գրականության մեջ: Տե՛ս օրինակ՝ Linda O'Neil Coleman, "The European Union: An Appropriate Model For A Precautionary Approach?", 25 Seattle U. L. Rev. 609, Ursula Schliessner, "Application of the Precautionary Principle in the European Union – What Will Change," International Environmental Law Committee - Newsletter Archive, Vol. 3, No. 2, Nov, 2000 (available at <http://www.abanet.org/environ/committees/intenviron/newsletter.nov00/sch.html> 1#, visted on 30 August, 2008):

- ¹⁴ St'eu Communication from the Commission of European Communities on the Precautionary Principle, European Union Preparatory Acts, COM (2000) 1 final, էջ 10:
- ¹⁵ St'eu Green Paper on the General Principles of Food Law in the European Union of 30 April 1997 (COM(97) 176 final):
- ¹⁶ St'eu Parliament Resolution of 10 March 1998 on the Green Paper on the General Principles of Food Law in the European Union:
- ¹⁷ St'eu Communication from the Commission of European Communities on the Precautionary Principle, European Union Preparatory Acts, COM (2000) 1 final:
- ¹⁸ St'eu Communication on the Precautionary Principle, վերը արված հղում , մաս 6.3.5:
- ¹⁹ St'eu Նույն տեղում, հավելված 3:
- ²⁰ St'eu Linda O'Neil Coleman, վերը արված հղում , էջ 611:
- ²¹ St'eu Case 53/80, *Officier van justitie v Koninklijke Kaasfabriek Eysen BV*, [1981], E.C.R 409:
- ²² Կոնսերվացնող տարր, որը ապահովում է պանրի երկարաժամկետ պահպանությունը, որի օգտագործումը, սակայն, թույլատրված չէր Նիդեռլանդների օրենսդրությամբ:
- ²³ St'eu Eysen BV, նույն տեղում, մաս 13:
- ²⁴ St'eu Case 174/82 *Officier van Justitie v Sandoz BV*, [1983] ECR 2445, [1984] 3 CMLR 43:
- ²⁵ «Սյուսլիմ» շիլայի, ընկույզի և չորամրգի խառնուրդ է: Այն հարստացված էր մասնավորապես A և D վիտամիններով:
- ²⁶ St'eu նշված վճռի 15-17-րդ մասերը:
- ²⁷ Դատարանի նման մոտեցումը մինչ այդ տեղ էր գտել նաև Frans-Nederlandse Maatschappij voor Biologische Producten (Case 272/80 [1981] ECR 3277, [1982] 2 CMLR 497) գործում:
- ²⁸ St'eu Cases C-157/96 and C-180/96, United Kingdom of Great Britain and Northern Ireland v. Commission of the European Communities, Judgements of 5 May 1998, [1998] E.C.R. I-02265:
- ²⁹ ԵԸ Պայմանագրի 130r (1) և 130r (2) հոդվածները գործող համարակալմամբ 174 հոդվածի (1) և (2) կետերն են:
- ³⁰ St'eu Case T-13/99, *Pfizer Animal Health S.A. v. Council*, 2002 WL 31337 (European Court of First Instance, Sept. 11, 2002), րէջ 139, 142-44.
- ³¹ St'eu Case E3/00, *EFTA Surveillance Authority v. Norway*, 2001 O.J. (C 164) 7, [2001] 2 C.M.L.R. 47.
- ³² St'eu Case C-192/01, *Commission v. Denmark*, 2003 E.C.R. I-9693:
- ³³ St'eu նույն տեղում, մաս 42:
- ³⁴ St'eu վերը, օրինակ՝ *Pfizer Animal Health S.A. v. Council*-ի գործը, հղում :
- ³⁵ St'eu նշված գործի 54 և 56 կետերը:
- ³⁶ St'eu Communication from the Commission of European Communities on the Precautionary Principle, վերը արված հղում :
- ³⁷ St'eu Rebecca Harrington, 'Trading Health for Economics: Commission Of The European Communities V. Kingdom Of Denmark,' 28 *Loy. L.A. Int'l & Comp. L. Rev.* 351, Spring 2006, էջ 362-362:
- ³⁸ St'eu նույն տեղում, էջ 364:
- ³⁹ St'eu Takis Tridimas, *The General Principles of EU Law*, second edition, Oxford University press, 2006, էջ 161:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԵԿԱՆԻ ՎՄԲՈՆ**НОРМАТИВНО-ПРАВОВАЯ РЕГЛАМЕНТАЦИЯ
ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В АРМЕНИИ
(ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК)****Артак ОГАНЕСЯН***Адъюнкт Академии управления МВД РФ*

В русском языке вообще под регулированием чего-либо понимается: 1) упорядочивать, налаживать взаимные отношения; 2) направлять развитие, движение чего-нибудь с целью привести в порядок, в систему, а также 3) привести механизм в такое состояние, которое обеспечивает нормальную и правильную работу¹.

В общей теории права под правовым регулированием понимается специфическая деятельность государства (его органов и их должностных лиц) по упорядочиванию общественных отношений путем установления правовых норм и принятия в необходимых случаях индивидуально регламентирующих решений (в соответствии с этими нормами) по юридически значимым вопросам, которые возникают в рамках таких отношений.

В данной статье мы рассмотрим вопросы правовой регламентации оперативно-розыскной деятельности² в конкретные исторические периоды:

— с 1918 по 1920 г.г. (первая республика — независимая Республика Армения);

— с 1920 по 1991 г.г. (вторая республика — Армения в составе СССР).

28 мая 1918 г. Армения в трудные годы после окончания первой мировой войны завоевала независимость. 6 декабря того же года Парламентом Республики Армения был принят закон «О действии законов бывшей Российской

империи на территории Армении», согласно которому на территории Республики Армения действуют законы бывшей Российской империи с изменениями и дополнениями Временного правительства, Закавказского комиссариата и Сейма и парламента Армении³.

21 апреля 1920 г. парламент Республики Армения принял закон, который внес изменения в закон Временного правительства «О милиции»⁴. По данному закону (ст.18) «Милиция охраняет общественную безопасность и порядок и защищает каждого от любого насилия, оскорбления и произвола». В 21-ой статье того же закона говорилось о мерах, который предпринимает милиция для превенции нарушений законов, но конкретно не назывались эти средства. Этот закон наделял милицию значительной уголовно-процессуальной компетенцией, вплоть до участия в осуществлении предварительного расследования, а также по некоторым делам общественного обвинения милиция выступала в роли обвинителя. Закон наделял милицию и другими полномочиями уголовно-процессуального характера (напр. ст. 19, 21, 26-29, 31-34 и т.д.). Как видно в законе о милиции более или менее регулированию подвергалось только уголовно-процессуальная сторона ее деятельности.

2 декабря 1920 г. Армения стала советской республикой. 1924 г. ЦИК Советской Армении принял «Положение о народном комиссариате внутренних дел (НКВД)»⁵. В этом положении нашли свое регулирование вопросы деятельности НКВД. В п. 3/ § 2 этого акта НКВД назва-

но органом дознания. В п. М/ того же параграфа в качестве средства для выполнения задач, стоящих перед НКВД названа выдача пропусков и загранпаспортов, при этом НКВД наделен правом принимать меры для получения информации необходимой для принятия такого решения. НКВД также ведал всеми местами лишения свободы и лагерями принудительных работ, где предпринимал все меры в борьбе с преступностью в этих учреждениях (п. П/ 2 параграфа). В § 8 отмечены вопросы, входящие в круг ведения отдела Уголовного розыска НКВД, из которых можно выделить: разработку методов (в том числе и *негласных*) борьбы с преступностью; составление списков уголовных преступников и их розыск; производство дознания по уголовным делам.

В 1921 г. для нормализации криминальной ситуации в столице Армении НКВД принял «Положение об управлении уголовного розыска Рабоче-крестьянской милиции города Еревана»⁶. П. 1 этого акта отмечал, что в состав Управления уголовного розыска (УУР) кроме штатных сил входили также *агенты* (курсив мой — А.О.) уголовного розыска. В п. 5 этого акта отмечено, что агенты уголовного розыска назначаются и увольняются начальником Ереванского Управления милиции⁷. В п. 7 предусмотрено, что агенты наряду с иными сотрудниками УУР снабжаются оружием. В 9-ом пункте перечислены обязанности работников УУР по борьбе с преступностью: 1) надзор за лицами, подозреваемыми по своему прошлому или по полученным данным в причастности к преступному миру; 2) обнаружение лиц, совершивших уголовные деяния в случаях поступления в УУР сведений о преступлениях и т.д. В п. 12 отмечено, что точное и подробное определение отдельных функций УУР Рабоче-крестьянской милиции города Еревана, порядок отчетности и ответственности опреде-

ляются Особыми инструкциями Главного управления милиции республики.

В 1920 г. ЦИК Советской Армении утвердил «Устав Рабоче-крестьянской милиции»⁸. В ст. 2 приводилась ее структура: 1) уездно-городская; 2) железнодорожная и 3) розыскная. В ст. 4 отмечалось, что агенты розыска входили в состав Рабоче-крестьянской милиции. В ст. 27 предусматривалось создание розыскных столов при управлениях железнодорожной и уездно-городской милиции, в целях борьбы с систематическими ограблениями и другими уголовными деяниями, осуществляемыми на железных дорогах. В 34 ст. отмечены особые обязанности железнодорожной милиции, для выполнения которых допускалось применение розыскных мер. В числе таких названы: 1) преследование воров и других преступников на станциях и железнодорожных путях; 2) преследование вредителей железнодорожного имущества; 3) борьба со злоупотреблениями со стороны работников железнодорожной станции и железнодорожных составов; 4) охрана порядка в железнодорожных станциях и железнодорожных составах; 5) сопровождение заключенных в места назначения.

Как видно в правовых актах того времени розыскные вопросы регламентировались недостаточно и больше внимание в них уделялось регулированию уголовно-процессуальных полномочий органов дознания. Примером этому могут служить также следующие акты: 1) декрет Ревкома Советской Армении «О правомочиях Чрезвычайных комиссии и Особого отдела» (15 апреля 1921 г.)⁹; 2) декрет совета народных комиссаров Советской Армении «Об осуществлении обысков, выемок и задержании» (3 июля 1921 г.)¹⁰; 3) инструкция НКВД (совместно с наркомом юстиции) «Об исполнении декрета об осуществлении обысков, выемок и задержании» (6 сентября 1921 г.)¹¹. В них регулировались вопросы осу-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԵԿԱՆԻ ԱՄԲՈՆ

ществления процессуальных действий разными органами, в том числе и милицией и органами уголовного розыска.

В 1923 г. (1-го октября) был принят первый уголовно-процессуальный кодекс (УПК) Арм. ССР. В этом кодексе дознание рассматривалось как первоначальный этап предварительного расследования уголовного дела, т.е. как деятельность уголовно-процессуальная (ст. 97-107). В ст. 97 в качестве органа дознания наряду с милицией названы и органы уголовного розыска. По нашему мнению, это подразумевало принятие ими в процессе дознания оперативно-розыскных мер исходя из своих функциональных обязанностей, хотя и в условиях «игнорирования» со стороны УПК результатов такой деятельности последние не имели шансов быть юридически признанными.

В п. 5 ч. 1 ст. 93 УПК Арм. ССР одним из поводов к возбуждению уголовного дела называлось непосредственное усмотрение органов дознания, под которым «подразумевалось использование результатов розыскной деятельности для начала производства по уголовному делу»¹². Ч. 2 ст. 93 того же кодекса допускала также возможность осуществления оперативно-розыскных мероприятий в целях проверки анонимных заявлений о совершенных или готовящихся преступлениях, после чего такие заявления могли служить поводом к возбуждению уголовного дела. В ч. 2 ст. 110 хотя и предусматривалось, что после начинания по делу предварительного следствия органы дознания по этому делу осуществлять какие либо действия могут только по поручению следователя, но в статье не было разъяснено — какие именно действия.

В 1934 г. (22-го июня) был принят УПК Арм. ССР в новой редакции. В этом кодексе в ст. 195 впервые предусматрива-

лась возможность объявления обвиняемого в розыск, когда не установлено место жительства подсудимого.

В этом случае лицо, осуществляющее расследование, обязано принять меры по розыску подсудимого в сроках предварительного следствия или дознания.

В УПК Арм. ССР 1934 года были продублированы нормы прежней УПК (1923 года), относящиеся деятельности органов дознания (в статьях 97-106).

Ситуация в корне изменялась с принятием 25 декабря 1958 г. Основ уголовного судопроизводства Союза ССР. Часть 2 ст. 29 этого нормативно-правового акта предусматривала следующее предписание: «На органы дознания возлагается принятие необходимых *оперативно-розыскных мер* (курсив мой — А.О.) в целях обнаружения признаков преступления и лиц, их совершивших». Данное предписание с некоторыми несущественными изменениями воспроизводилось в уголовно-процессуальном кодексе Армянской ССР, принятом в 7-го марта 1961 г. Так, в ст. 40 УПК Армянской ССР, озаглавленной «Полномочия органов дознания», говорилось о полномочии лица, осуществляющего дознание (органа дознания), на проведение необходимых оперативно-розыскных мер в целях обнаружения признаков преступления и лиц, ее совершившие. Ст. 107 УПК Армянской ССР (Обязанности органов дознания) на органы дознания возлагала обязанность проведения оперативно-розыскных мер, а также принятие предусмотренных уголовно-процессуальным законом других мер для раскрытия преступлений и лиц, их совершивших, а также на них возлагалась обязанность принять необходимые меры для предупреждения и пресечения преступлений. Проведенная формулировка, несмотря на свои достоинства, была явно неудачной, поскольку в один ряд ставила оперативно-розыскные и уголовно-

процессуальные меры (процессуальные действия)¹³. Причем в УПК Арм. ССР не разъяснялось природа тех мер, которые обязаны применить органы дознания для предупреждения и пересечения преступлений. Исходя из общего смысла правовой нормы, мы полагаем, что здесь речь идет о принятии мер (наряду с другими) оперативно-розыскного характера, так как при предупреждении и пересечении особенно тяжких и особо тяжких преступлений орган дознания не мог обойтись без мер оперативно-розыскного характера.

Ст. 108 УПК Армянской ССР (Деятельность органов дознания по делам, по которым предварительное следствие обязательно) провозгласила: «В тех случаях, когда следователю передано уголовное дело, по которому не было возможным выявить лицо, совершившее преступление, орган дознания продолжает предпринять оперативно-розыскные меры для раскрытия преступления и выявления преступника, осведомляя о результатах следователю. Поручения и указания следователя о проведении розыскных и следственных действий обязательны для органа дознания».

Ст. 189 предусматривала еще одно направление ОРД — розыскная (поисковая) работа: «В случае неизвестности места пребывания обвиняемого следователь объявляет розыск, поручая его осуществление органам дознания».

В предписаниях уголовно-процессуального законодательства, относящихся к оперативно-розыскным мерам, обращала на себя внимание одна существенная неточность: они возлагали обязанность предпринять оперативно-розыскные меры в интересах уголовного судопроизводства на все органы дознания, перечисленные в ст. 106 УПК Арм. ССР. Однако функциональная деятельность некоторых из них не включала в себя осуществление оперативно-розыскных мер (командиров воинских частей,

соединений и начальников военных учреждений, начальников лечебно- и воспитательно-трудовых профилакторий, органов пожарного надзора и т.д.).

Предусмотрение уголовно-процессуальным кодексом возможности осуществления оперативно-розыскных мер органами дознания как новое явление в советском уголовно-процессуальном праве привлекло к себе внимание ученых-процессуалистов. Так, А.М. Пивазян высказал мнение, что проведение оперативно-розыскных мер надо считать основной из обязанностей органа дознания¹⁴. Он считал, что принятие в процессе предварительного следствия оперативно-розыскных мер имеет цель собирать и проверять информацию об обстоятельствах уголовного дела. Как справедливо отмечает А.М. Пивазян, собранные таким путем сведения, хотя и не могут иметь доказательственного значения, но прямо или косвенно будут указывать источник такого сведения и диктовать те процессуальные действия, которые по делу необходимо проводить. Он считает, однако необходимым подчеркивать и то обстоятельство, что в уголовном процессе результаты дознания оцениваются не количеством или объемом проведенных оперативно-розыскных мер, а доказательственным значением фактических обстоятельств, добытыми путем применения процессуальных мер. Хотя, как считает указанный автор, собранные оперативно-розыскным путем сведения не могут иметь доказательственного значения, но в п. 5 ч. 1 ст. 97 УПК Арм. ССР (Поводы и основания возбуждения уголовного дела) в качестве повода для возбуждения уголовного дела названо «непосредственное обнаружение признаков преступления со стороны органа дознания...». А так как ст. 107 того же кодекса предусматривает обязанность органа дознания посредством осуществления оперативно-розыскных мер выявлять преступление и лиц, их совершив-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԵԿԱՆԻ ՎՄԲՈՆ

ших, то исходя из этого можно на наш взгляд сделать справедливый вывод, что в качестве повода для возбуждения уголовного дела можно признать также сведения о признаках преступлений добытые органами дознания оперативно-розыскным путем. По этому поводу М.Ю. Рагинский высказал мнение, что непосредственно дознание в органах милиции (как универсальный субъект дознания) ведут оперативные работники отделов (отделений) уголовного розыска, БХСС, ГАИ и др. служб¹⁵.

В дознании законодатель, по сути, переплетал разные по природе виды государственной деятельности, рассматривая ОРД как способ производства дознания, но ОРД, по сути, более масштабное явление, чем совокупность оперативно-розыскных мер проводимые во время дознания¹⁶. Оперативно-розыскные меры — это лишь средство оперативно-розыскной деятельности, одна из ее существенных сторон. Под ними понимают «такие действия органов дознания, которые, не будучи процессуальными, направлены на выявления готовящихся или совершенных преступлений, на собирание сведений о личности и местонахождении преступника, его связях, на установление и обеспечение сохранности объектов — возможных носителей доказательственной информации»¹⁷. Приведенные правовые предписания лишь возлагали на органы дознания принятие оперативно-розыскных мер в целях раскрытия преступлений и лиц, их совершивших, но не раскрывали содержание и не регламентировали порядок такой деятельности. Обозначенный подход объяснялся тем, что, во-первых, действовавшее уголовно-процессуальное законодательство не связывало данные, добытые оперативно-розыскным путем, с какими-либо правовыми последствия-

ми, и во-вторых, необходимо было сохранять втайне от преступников производство этих мероприятий, поскольку в противном случае они могли бы потерять всякую эффективность¹⁸.

Кроме УПК оперативно-розыскные отношения регулировались и в других правовых актах.

1971 г. решением Совета министров Арм. ССР (от 5 октября, 1 612) был утвержден Устав ОВД исполкома районного (городского) совета народных депутатов Арм. ССР. В п. «д» ст. 7 главы 2, озаглавленной «Основные функции и права ОВД» провозглашено: «ОВД предпринимает оперативно-розыскные и иные меры в целях предупреждения подготовляемых преступлений и пресечения покушений на преступления». В п. «ж» ст. 7 главы 2 предусмотрено: «ОВД в процессе дознания и предварительного следствия посредством применения оперативно-розыскных мер выявляет обстоятельства способствующих хищений, недостатков и других злоупотреблений в деле учета материальных ценностей в предприятиях, учреждениях и организациях и принимает меры по их ликвидации ...». В области борьбы с преступностью несовершеннолетних предусматривалось права ОВД на принятие оперативно-розыскных мер по выявлению преступных группировок несовершеннолетних и по разобщению их участников друг от друга, на принятие мер по разоблачению организаторов и подстрекателей, лиц, привлекающие детей в азартные игры, пьянство и попрошайничество (п. «ж» ст. 7). Пункт «б» ст. 8 Устава предусматривает права ОВД осуществлять оперативно-розыскные и иные мероприятия для выявления преступлений.

В 1974 г. решением Совета министров Арм. ССР (от 4 марта, 1 106) был утвержден Устав МВД Арм. ССР. Согласно предписаниям подпункта в) пункта 6 данного Устава органы внутренних дел

наделялись полномочиями по организации и осуществлению ОРД, а согласно подпункта г) они в предусмотренных в законодательстве случаях организовали розыск подсудимых, скрывающихся от дознания и суда, осужденных, уклоняющихся от исполнения приговора, без вести пропавших и иных лиц.

Для дальнейшей правовой регламентации оперативно-розыскной деятельности в рамках уголовно-процессуального законодательства Армянской ССР важное значение имело принятие 12 июня 1990 г. Верховным Советом СССР Закона СССР «О внесении изменений и дополнений в Основы уголовного судопроизводства Союза ССР и союзных республик»¹⁹. Этот правовой акт возлагал на органы дознания обязанности по осуществлению оперативно-розыскной деятельности в целях обнаружения признаков преступлений и лиц, их совершивших, выявление фактических данных, которые могут быть использованы в качестве доказательств по уголовному де-

лу после их проверки в соответствии с уголовно-процессуальным законодательством. Указанный Закон также предусматривал обязанность органов дознания осуществлять оперативно-розыскные мероприятия с использованием видео- и звукозаписи, видеозаписи и киносъемки, а также ввел в Основы уголовного судопроизводства Союза ССР и союзных республик дополнительную норму, которая предусматривала прослушивание телефонных и иных переговоров, ведущихся с телефонов и других переговорных устройств (ст. 35).

Проведя итог, можно констатировать, что в РА накопилась немало опытных знаний по вопросам нормативной регламентации оперативно-розыскной работы. Они имеют определенную научную ценность и должны ложиться в основу разработки и принятия законодательных и иных нормативно-правовых актов в области ОРД, учитывая положительные примеры в историческом опыте регулирования ОРД в Армении.

¹ С.И.Ожегов, Н.Ю.Шведова Толковый словарь русского языка: М-2006, С. 672.

² Далее по тексту — ОРД.

³ См. Национальный архив РА, фонд 200, список 1, дело 86, С. 15

⁴ См. Национальный архив РА, фонд 199, список 1, дело 160, С. 177, 179-182

⁵ См. Национальный архив РА, фонд 116, список 1, дело 99, С. 1-2

⁶ См. Национальный архив РА, фонд 116, список 1, дело 491

⁷ Как видно из текста этого юридического документа, агенты уголовного розыска были штатными сотрудниками милиции

⁸ См. Национальный архив РА, фонд 116, список 3, дело 4

⁹ См. Национальный архив РА, фонд 116, список 1, дело 62, С. 16

¹⁰ См. Национальный архив РА, фонд 116, список 1, дело 62, С. 16-17

¹¹ См. Национальный архив РА, фонд 116, список 1, дело 62, С. 17-18

¹² В.И. Зажицкий Результаты оперативно-розыскной деятельности в уголовном судопро-

роизводстве, СПб-2006, С. 18

¹³ На это справедливо обращал внимание М.С. Строгович (См.: *Строгович М.С.* Курс советского уголовного процесса: В 2 т. М-1970, Т. 2, С. 29).

¹⁴ А.М. Пивазян «Уголовный процесс» Общая часть, Учебник. Ереван-1989, С. 198

¹⁵ Алексеев В.Б., Божьев В.П. и др., «Комментарий к УПК РСФСР», М-1976, С. 187

¹⁶ Несмотря на это, названные термины иногда используют как однозначные. (См., напр.: Демидов И. «Оперативно-розыскная деятельность и уголовный процесс» // *Законодательство*. 1993 N 8, С. 33)

¹⁷ Белкин Р.С.: Собираение, исследование и оценка доказательств. М-1966, С. 39

¹⁸ См.: *Мальцев Е.Г.* «К вопросу о понятии и месте оперативно-розыскных мероприятий в системе криминалистики» Вопросы уголовного права, процесса и криминалистики: Уч. зап. Пермского ун-та. 1967, N 187, С. 65

¹⁹ Ведомости Верховного Совета СССР. 1990, N 26, С. 495

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ՝ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ****Գաբրիել ԲԱԼԱՅԱՆ***ԵՊՀ Սահմանադրական իրավունքի
ամբիոնի հայրորդ*

Խորհրդային ժամանակշրջանում Հայաստանի բարձրագույն կրթությունը մաս էր կազմում մի համակարգի, որտեղ ամեն ինչ պլանավորվում էր պետության կողմից, բուհերը գրեթե զրկված էին սեփական նախաձեռնություններից և ակադեմիական ազատություններից, իսկ ուսանողները և դասախոսները կարող էին այլ երկիր մեկնել միայն համապատասխան մարմինների թույլտվությամբ: Անկախացումից ի վեր Հայաստանը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել առանձին պետությունների հետ, անդամակցել տարաբնույթ միջազգային կառույցների, վավերացրել միջազգային համաձայնագրեր և կնքել միջպետական պայմանագրեր, այդ թվում՝ կրթության ոլորտին վերաբերող: ՀՀ Սահմանադրության 39 հոդվածը երաշխավորում է պետության աջակցությունը սովորողներին: Ի կատարումն Սահմանադրության պահանջի՝ տարբեր պետությունների հետ ՀՀ ստորագրած պայմանագրերի մի զգալի մասը վերաբերում է կրթության և գիտության, մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում հարաբերությունների հաստատմանը: Հայաստանը կնքել է կրթության ու գիտության ոլորտին և բարձրագույն կրթության խնդիրներին առնչվող միջպետական ավելի քան հինգ տասնյակ պայմանագրեր ինչպես եվրոպական և ամերիկյան, այնպես էլ ԱՊՀ անդամ երկրների հետ:

Սկսած 1988թ.՝ եվրոպայում աշխա-

տանքներ են տարվում համաեվրոպական կրթական տարածք ստեղծելու ուղղությամբ³: Այս ուղղությամբ կարևոր քայլ հանդիսացավ 1997թ. ապրիլի 11-ին Լիսաբոնում «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին» Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ դաշնագրի ստորագրումը⁴: Մինչև 1999թ. եվրոպական երկրների կողմից ստորագրվեցին բարձրագույն կրթության վերաբերյալ մի շարք համաձայնագրեր և⁵: Համաձայնագրերում ընդգծվում էր, որ «երկփուլ կրթական համակարգը պետք է լայնորեն կիրառվի միջազգային համեմատելիության և համարժեքության ճանաչման համար», իսկ դրան «կարելի է հասնել՝ օգտագործելով կրեդիտների (ECTS- European Credit Transfer System) փոխանցման համակարգը: Դա հնարավորություն կընձեռի նախնական փուլերում ստացած կրեդիտները փոխանցել եվրոպական երկրների այլ համալսարաններ՝ որակավորում ստանալու նպատակով»⁶: 1999 թ. հունիսի 19-ին Բոլոնիայում Եվրոպայի 29 պետությունների կրթության նախարարները ստորագրեցին հռչակագիր բարձրագույն կրթության եվրոպական տարածք ստեղծելու վերաբերյալ: Հիմք ընդունելով Սորբոնի հռչակագրի հիմնական սկզբունքները՝ նախարարները պարտավորվում էին համակարգել իրենց քաղաքականությունն այնպես, որ *մինչև 2010 թվականը* ստեղծվի բարձրագույն կրթության համաեվրոպական տարածք, ինչպես նաև եվրոպական բարձրագույն կրթության համակարգը տարածվի ողջ աշխարհում: Նախանշված նպատակներին հասնելու համար հռչա-

կազրուում առաջ են քաշվում հետևյալ հիմնախնդիրները, որոնց լուծմանը պետք է նպաստակառուղվի ողջ գործընթացը.

- ընդունել դյուրընթեռնելի և համեմատելի կրթական աստիճանների համակարգ,

- ընդունել երկու փուլով կառուցված բուհական կրթության համակարգ,

- հիմնել կրեդիտային համակարգ, ինչպիսին է եվրոպական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը (ECTS),

- նպաստել ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շարժունությանը,

- նպաստել որակի ապահովման հարցում համագործակցությանը, նպաստել բարձրագույն կրթության ոլորտում եվրոպական չափանիշների կիրառմանը:

Բոլոնիայի հռչակագրով, փաստորեն, սկիզբ դրվեց լայնորեն հայտնի և այսօր արդեն մոտ հինգ տասնյակ երկրներում իրականացվող «Բոլոնիայի գործընթացին»:

Հայաստանի Հանրապետությունը Բոլոնիայի գործընթացին պաշտոնապես միացավ 2005թ. մայիսին Նորվեգիայի Բերգեն քաղաքում կայացած Նախարարների գագաթաժողովի ընթացքում, երբ ՀՀ կրթության և գիտության նախարարը, ի թիվս այլոց, ստորագրեց գագաթաժողովի հուշագիրը: Վերոնշյալ համաձայնագրերին ՀՀ միանալը նոր հնարավորություններ ընձեռեց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ բարձրագույն կրթության իրավունքի ընդլայնման և ուսանողների շարժունության համար, քանի որ այդպիսով ավելի լայն հնարավորություններ են ստեղծում այլ երկրների բուհերում բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու համար: Այդ պայմանագրերի միջոցով հնարավորություն է առաջանում գիտական և կրթական ուղղակի կապեր ու հարաբերություններ հաստատել այլ երկրների գիտնականների և կրթօջախների հետ, ձեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք ներկայացված չեն մեր երկ-

րի բուհերում:

Բոլոնիայի հռչակագրին համահունչ՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետը ամրագրում է ուսանողների շարժունությանը նպաստելու սկզբունքը:

Հայաստանը արդեն որոշակի հաջողություններ է գրանցել բարձրագույն կրթության միջազգային համագործակցության բնագավառում: Մասնավորապես՝ հիմնադրվել և գործում են չորս միջպետական բուհեր, գործում է «Ակադեմիական փոխձանաչման և շարժունության ազգային կենտրոնը» (ENIC/NARIC)⁷, որի շնորհիվ հայաստանցի ուսանողները հնարավորություն ունեն տեղեկատվություն ստանալ արտասահմանյան ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող ծառայությունների, կրթական ծրագրերի, ինչպես նաև իրենց ուսումը արտերկրում շարունակելու հնարավորությունների մասին: Սակայն ձեռնարկված քայլերը ՀՀ քաղաքացիների շարժունությունը ապահովելու ուղղությամբ հեռու են բավարար լինելուց: Շարժունությանը խոչընդոտում են մի շարք հանգամանքներ, ինչպիսիք են.

- օրենսդրական հակասությունները և օրենսդրության անկատարությունը,

- բարձրագույն կրթության բնագավառի ոչ բավարար ֆինանսավորումը,

- պայմանագրի կողմ հանդիսացող մի շարք երկրներում կրթության ոչ բավարար որակը,

- տեղեկատվության և ճգրիտ հաշվառման անբավարարությունը:

Բարձրագույն կրթության բնագավառում առավել սերտ միջազգային համագործակցությունը Հայաստանն իրականացնում է ՌԴ-ի հետ: 2006-2007 ուս. տարում ՌԴ-ում սովորել են 1850 ուսանող (1039-ը՝ առկա ուսուցմամբ), որից միջպետական պայմանագրերի շրջանակներում՝ 88 ուսանող՝ բուհերում, 24 ուսանող՝ մագիստրոսական ծրագրերով, 30 ուսանող՝ ասպիրանտուրայում, 2007-2008 ուս. տա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

րում՝ 1415-ը (903-ը՝ առկա սուցմամբ)⁸, որից միջպետական համաձայնագրով՝ 42 ուսանող բուհերում, 7-ը՝ մագիստրատուրայում, 22-ը՝ ասպիրանտուրայում: 2008-2009 ուս. տարում ՌԴ բուհերում միջպետական համաձայնագրով սովորում են 46 ուսանող, 10-ը՝ մագիստրատուրայում, 23-ը՝ ասպիրանտուրայում⁹: Բացի ՌԴ-ից՝ այլ երկրներում տարբեր կրթական ծրագրերով (բակալավորիատ, մագիստրատուրա, կլինիկական օրդինատուրա, ասպիրանտուրա) միջպետական պայմանագրերի շրջանակներում 2006-2007 ուս. տարում բուհերում սովորել են 15, 2007-2008 ուս. տարում՝ 19, իսկ 2008-2009 ուս. տարում՝ 46 հայաստանցիներ: Վերջին պաշտոնական տվյալը օտարերկրյա բուհերում հայաստանցի ուսանողների սովորելու վերաբերյալ կարելի է համարել ՀՀ ԿԳՆ կողմից ներկայացված ազգային զեկույցը՝ պատրաստված Բենիլյուքսում 2009թ. կայանալիք Բոլոնիայի գործընթացի անդամ երկրների նախարարական զագաթաժողովին¹⁰, որում նշված է, որ արտասահման մեկնած հայ ուսանողների թիվը վեց հարյուր է՝ հիմնականում ԱՄՆ, ՌԴ, Գերմանիա և Միացյալ Թագավորություն, իսկ պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության միայն 10% է յուրաքանչյուր տարի ընդգրկվում բազմազան ծրագրերի մեջ: Եվ դա այն դեպքում, երբ ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով 2004թ. արտասահմանում ուսանել է 2428 հայաստանցի ուսանող¹¹: Պարզորոշ երևում է, որ ներկայացված տվյալները չեն համապատասխանում իրականությանը, քանի որ 2004թ. ի վեր արտասահմանյան բուհերում ուսումնառող հայերի թվաքանակը զգալիորեն աճել է:

Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքներից մեկը հենց *ուսանողների, դասախոսների և վարչական աշխատակազմի շարժունությունն է*: Այդ սկզբունքը որդեգրվել է ողջ Եվրոպական կրթական

տարածքի համար, սակայն ներկայումս անգամ Հայաստանում գործող բուհերում մասնագիտությունից մասնագիտություն կամ բուհից բուհ տեղափոխումը բավական դժվար է, քանի որ, ըստ գործող օրենսդրության, տեղափոխման դեպքում թույլատրվող առարկայական տարբերությունների քանակը չպետք է գերազանցի 8-ը¹²: 2009թ. հունվարին ՀՀ ԿԳՆ կողմից շրջանառության մեջ է դրվել կառավարության որոշման մի նախագիծ, որը թույլատրելի տարբերությունների քանակը ավելացնում է երկուսով՝ հասցնելով այն 10-ի:

Դրանից բացի, չկան սահմանված հստակ կառուցակարգեր, որոնք կսահմանեին «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ Օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընտրած մասնագիտությունից բացի այլ դասընթաց յուրացնելու հնարավորությունը: Շրջանառության մեջ չկա համապատասխան փաստաթուղթ, որը հնարավորություն կտար կյանքի կոչել նշված գործընթացը: Պետք է նշել նաև այն, որ թեև կրեդիտային համակարգը կոչվում է եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ (European Credit Transfer System), և կուտակման համակարգը նախատեսված է Բոլոնիայի գործընթացի մասնակից բոլոր երկրների համար, սակայն կրեդիտների փոխանցումը կիրառվում է հիմնականում Արևմտյան Եվրոպայի համալսարանների միջև՝ դուրս թողնելով անգամ Եվրամիության անդամ հանդիսացող Արևելյան Եվրոպայի երկրների համալսարանները: Պատճառը եվրոպական երկրների բուհերի միջև գոյություն ունեցող կրթական մակարդակների հսկա տարբերությունն է:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «**լրացուցիչ կրթությունը**՝ մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մաս-

նագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն է»: Սակայն դրա իրականացման կարգը և պայմանները օրենսդրությամբ մշակված և հստակեցված չեն: Օրենքի տրամաբանական շարունակությունը կլիներ այն, որ ՀՀ կառավարությունը իր որոշմամբ կամ ԿԳ նախարարը իր համապատասխան հրամանով ամրագրեին լրացուցիչ կրթություն ստանալու կարգը, սկզբունքները, պայմանները և ժամկետները՝ «ՀՀ բուհերում հեռակա ուսուցման կարգի»¹³ նմանակով: Լրացուցիչ կրթության իրականացումը զգալիորեն կնպաստի բուհերի ուսանողների և դասախոսների շարժունությանը:

Շարժունության համար խոչընդոտ կարելի է համարել նաև Հայաստանի բնակչության զգալի հատվածի սոցիալական վիճակը և տեղեկատվության պակասը: Իհարկե, առանձին բուհեր և միջբուհական համագործակցության շրջանակներում իրականացնում են ինչպես դասախոսական, այնպես էլ ուսանողական փոխանակման ծրագրեր, բայց դրանք կրում են ոչ մշտական, հաճախ՝ մասնավոր բնույթ:

Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում մի շարք միջազգային կազմակերպություններ ևս իրականացնում են բազմատեսակ ծրագրեր: Դրանցից են՝ IREX, Բրիտանական խորհուրդ, Ամերիկյան խորհուրդներ, TEMPUS, DAAD, ERASMUS MUNDUS և այլ նմանատիպ կազմակերպություններ¹⁴: Նշյալ կազմակերպությունները հիմնականում առաջարկում են տարբեր դրամաշնորհների օգնությամբ կրթություն ստանալ արտասահմանում, առավելապես՝ եվրոպական և ամերիկյան երկրերում: Տեղեկատվության պակասի խնդիրը լուծելի կդառնա ներկայիս տեխնիկական միջոցների ընձեռած հնարավորությունները օգտագործելու դեպքում համապատասխան ինտերնետային կայք ստեղծելով, որտեղ կկենտրոնացան միայն կրթական ոլորտին վերաբերվող առաջարկությունները: Այս պարագա-

յում ինչպես ուսանողները, այնպես էլ շահագրգիռ այլ անձինք կկարողանան ստանալ համապատասխան տեղեկատվություն իրենց հետաքրքրող մասնագիտությունների և դասընթացների լավագույն առաջարկների մասին: Այս առաջարկը հեշտ իրագործելի է, քանի որ այն պետությունից կպահանջի համեստ միջոցների ներդրում:

Միանալով Բոլոնիայի գործընթացին, կնքելով համապատասխան պայմանագրեր և համաձայնագրեր՝ Հայաստանը նպատակ է ունեցել նաև բարձրացնել Հայաստանի Հանրապետության բուհերի գրավչությունը արտասահմանցի ուսանողների համար:

Հայաստանում 2007-2008 ուս. տարում գործել է 85 բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում սովորել են 112 200 ուսանող (90200՝ առկա, 22000՝ հեռակա ուսուցման եղանակով), որոնցից 4230-ը՝ արտասահմանցիներ: Համեմատելով 2003թ. հետ, երբ արտասահմանցի ուսանողների թիվը 3035 էր, կարելի է արձանագրել, որ վերջին տարիներին Հայաստանի բուհերի գրավչությունն աճել է, սակայն պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ 2007թ.-ին նրանցից 967-ը Ռուսաստանից էին, 1167-ը՝ Վրաստանից, իսկ 1129-ը՝ Իրանից: Սրանից կարելի է ենթադրել, որ մշակված երկրներից եկած ուսանողների կեսից ավելին մեր հայրենակիցներն են, որոնք տվյալ երկրների քաղաքացիներ են: Ընդ որում, Հայաստանն առավել գրավիչ է բժշկական մասնագիտություններ ընտրած արտասահմանցի ուսանողների համար:

Ջարգացած երկրներից եզակի թվով ուսանողներ են գալիս Հայաստան¹⁵ բարձրագույն կրթություն ստանալու, ինչը բացասական է անդրադառնում ինչպես Հայաստանի տնտեսական վիճակի, այնպես էլ միջազգային վարկանիշի վրա: Վերոնշյալ թվական վերլուծությունը, ինչպես նաև դրանց համադրումը ՀՀ կողմից կնքված պայմանագրերի հետ ցույց է տալիս, որ այդ պայմանագրերի ամենաակնառու և

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

հեշտ վերահսկելի մասը՝ սովորողների փոխանակմանն ուղղված միջոցառումները, հեռու է բավարար լինելուց, քանի որ ամբողջությամբ օգտագործված չեն պայմանագրերից բխող հնարավորությունները, և պետության աջակցությունը այս հարցում ևս բավարար չէ: ՀՀ կառավարությունը վերջին շրջանում որոշ քայլեր է ձեռնարկել ինչպես ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ավելի գրավիչ դարձնելու, այնպես էլ հայ ուսանողների շարժունությանը նպաստելու ուղղությամբ: 2008թ. նոյեմբերին կառավարության որոշմամբ ստեղծվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը⁶, որի հիմնական նպատակներն են՝

1) բարձրագույն մասնագիտական կրթության հավատարմագրման գծով անհրաժեշտ փորձաքննության իրականացումը.

2) մասնագիտական ուսումնական հաստատությունների և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման չափանիշների և ընթացակարգերի մշակումը.

3) մասնագիտական կրթական ծրագրերի որակի հավատարմագրումը և դրա մասին որոշումը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ներկայացնելը՝ պետական հավատարմագրման վկայական տալու համար.

4) մասնագիտական ուսումնական հաստատությունների ակադեմիական աուդիտը, որակի գնահատումն ու հավատարմագրումը և հավատարմագրման մասին որոշումը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը ներկայացնելը՝ պետական հավատարմագրման վկայական ստանալու համար.

5) մասնագիտական ուսումնական հաստատության և մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման

արդյունքների և դրանց հիման վրա մասնագիտական հաստատությունների վարկանիշային ցուցանիշների հրապարակումը.

6) մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման ներքին (ներհաստատությունային) համակարգերի գնահատումը. դրանց բարելավման ուղղությամբ մասնագիտական ուսումնական հաստատություններին առաջարկություններ ներկայացնելը.

7) մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատման չափանիշների ու մեթոդների մշակման ուղղությամբ խորհրդատվության տրամադրումը.

8) մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի որակի վերաբերյալ հասարակությանն իրազեկելը.

9) որակի ապահովման ասպարեզում եվրոպական ցանցում ընդգրկվելն ու ծրագրերում Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովումը.

10) մասնագիտական կրթական համակարգի վերլուծությունը:

Այդ քայլերի նպատակը կրթության որակի բարձրացման միջոցով ՀՀ բարձրագույն կրթությունը օտարերկրացիների համար գրավիչ դարձնելն է, ինչպես նաև Հայաստանի միջազգային վարկանիշի բարձրացումը:

Բուհական համակարգը գրավիչ դարձնելու համար, բացի ձեռնարկված քայլերից, նախ հարկավոր է ուշադրություն դարձնել կրթության որակի ապահովման բուհերի ներքին կառուցակարգերի վրա և կապ ստեղծել գործատուների ու բուհերի միջև, ինչը հնարավորություն կտա օտարերկրյա ուսանողներին այնպիսի մասնագիտություններ ու մասնագիտացումներ առաջարկել, որոնք պահանջված են աշխատաշուկայում, սակայն չկան կամ ավելի ցածր մակարդակի վրա են գտնվում իրենց երկրում: Այն առևտրային ձեռնարկություն-

ների համար, որոնք ներդրումներ կկատարեն կրթության ոլորտում, կօժանդակեն ժամանակակից ուսումնական ծրագրերի մշակմանը և ներդրմանը, իբրև խրախուսում սահմանել հարկային արտոնություններ՝ ընդհուպ մինչև որոշակի հարկատեսակներով նվազեցնելով վճարումները:

Անհրաժեշտ է մշակել և ներդնել համապատասխան օրենսդրական ակտեր և կրթական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան մանկավարժական մասնագիտություններով սովորողներին ձեռք բերելու մի քանի մասնագիտություններ գյուղական համայնքների հանրակրթական դպրոցներում դասավանդելու համար: Այլապես, ներկայումս ՀՀ մարզերում, հատկապես գյուղական համայնքներում առկա է բարձրագույն մանկավարժների պակաս այն դեպքում, երբ յուրաքանչյուր տարի ավարտում են մանկավարժական մասնագիտություններով մոտ 3000¹⁷ մասնագետ: Հարկավոր է նաև ստեղծել համապատասխան օրենսդրական հիմքեր ինչպես հայաստանյան, այնպես էլ արտասահմանյան բուհերի հետ համատեղ որակավորումներ ու դիպլոմներ տալու համար (joined degree):

Ընդհարապես օրենքների անկատարության հիմնական պատճառը համապատասխան ենթաօրենսդրական ակտերի բացակայությունը կամ ժամանակավրեպ ընդունումն է: Օրենքների ընձեռած հնարավորությունից լիովին օգտվելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր օրենքի նախագծի քննարկման ժամանակ նախապես ներկայացնել ժամանակացույց, որտեղ հստակ կսահմանվեն կառավարության և նրա լիազոր մարմինների կողմից ընդունվելիք ենթաօրենսդրական ակտերի ցանկը, ինչպես նաև դրանց ընդունման ժամա-

նակացույցը:

Կառավարությունը իր մեկ այլ նախաձեռնությամբ 2008թ. վերջերին ստեղծել է «Լույս» հիմնադրամը, որի նպատակն է մրցույթի արդյունքերի հիման վրա ֆինանսապես օժանդակել հայաստանաբնակ և սփյուռքահայ լավագույն ուսանողներին ուսումնառություն ստանալու կամ ուսումը շարունակելու աշխարհի լավագույն համալսարաններում¹⁸: Այս քայլը կարելի է համարել հայ ուսանողների շարժունությանը նպաստող կառավարության ամենաարդյունավետ նախաձեռնություններից մեկը, որն իրապես կնպաստի շարժունության բարձրացմանը: Կրթության ոլորտի զարգացման ներկա փուլում անհրաժեշտ է կառավարության որոշման մակրոակտով ստեղծել օրենսդրական հիմքեր՝ ԵԿԿՓՀ (ECTS) համակարգի իրագործման համար նախ հայաստանյան բուհերի միջև, ինչը հնարավորություն կտա ուսանողներին մեկ բուհում մասնագիտություն ստանալու պարագայում կոնկրետ առարկաներից կրեդիտներ կուտակել և փոխանցել մեկ այլ բուհից՝ սահմանելով հստակ ժամանակահատված դրա կիրառումը սկսելու համար: Երկրորդ, անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությամբ չսահմանափակել կրթության տևողությունը ըստ առարկաների, այլ ուսանողներին թույլ տալ ինքնուրույն որոշելու, թե որ կիսամյակում քանի առարկա է ցանկանում ուսումնասիրել և ուսման վարձը վճարել ըստ ընտրած առարկաների քանակի, այլ ոչ ըստ կիսամյակների: Վերջին փոփոխությունը կնպաստի ոչ միայն ուսանողների շարժունությանը, այլև զգալիորեն կթեթևանա նաև ուսանողների ֆինանսական ծանրաբեռնվածությունը:

¹⁷ Շարժունություն՝ անգլերեն «mobility» բառի թարգմանությունն է, առաջին անգամ պաշտոնապես հայերենական օրենսդրության մեջ ամրագրվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետում:

¹⁸ Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 153 պետությունների հետ, լիիրավ անդամի կամ դիտորդի կարգավիճակով անդամակցում է մոտ 70 միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների:

- ³ 1988 թ. սեպտեմբերի 18-ին Իտալիայի Բոլոնիա քաղաքում Եվրոպայի հնագույն համալսարանի հիմնադրման 900-ամյա հոբելյանին մասնակցող մի քանի տասնյակ համալսարանների ռեկտորները ստորագրեցին «Համալսարանական ազատությունների խարտիա»-ն (Magna Charta Universitatum):
- ⁴ Տե՛ս <http://unesdoc.unesco.org/images/0011/001112/111236mb.pdf>:
- ⁵ Օրինակ, Փարիզի համալսարանի հիմնադրման 800-ամյակի տոնակատարությունների ընթացքում Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարները ստորագրեցին «Սորբոնի Հռչակագիրը»:
- ⁶ Տե՛ս «Սորբոնի Հռչակագիր» - Բարձրագույն կրթության Եվրոպական համակարգի կառուցվածքային ներդաշնակեցման` Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր:
- ⁷ Տե՛ս ՀՀ կառավարության 31.03.05թ. թիվ 699-ը որոշումը:
- ⁸ Տե՛ս Федеральная служба гос. Статистики РФ,
- ⁹ Վերոնշյալ տեղեկությունները տրամադրվել են ՀՀ ԿԳՆ միջազգային կապերի վարչության կողմից և ներառում են միայն միջպետական պայմանագրերի շրջանակներում սովորողների:
- ¹⁰ Տե՛ս Բոլոնիայի բարեփոխումների վերաբերյալ 2009 թ. Հայաստանի ազգային զեկույցը:
- ¹¹ Տե՛ս http://aea.am/files/data/enrollments_abroad.xls
- ¹² Տե՛ս ՀՀ Կառ. 16.08.07թ N 921-Ն որոշումը:
- ¹³ Տե՛ս ՀՀ ԿԳ նախարարի 6.12.2007 թ. թիվ 1194-Ն հրամանը, <http://www.edu.am/index.php?id=1381&topMenu=-1&menu1=85&menu2=117&arch=0>:
- ¹⁴ Տե՛ս <http://www.armenic.am/index.php?page=mobility>:
- ¹⁵ 2007թ. ընթացքում Հայաստանում սովորել են Հունաստանից` 5, ԱՄՆ` 28, Իսրայել` 8, Կանադա` 2, Կիպրոս` 2, Չեխիա` 2, Գերմանիա` 2, Քուվեյթ` 2, ճապոնիա` 1: Տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99456298.pdf>:
- ¹⁶ Տե՛ս ՀՀ Կառավարության 27.11.08թ. թիվ 1486-Ն որոշումը:
- ¹⁷ Տե՛ս <http://www.armstat.am/file/doc/99456298.pdf>:
- ¹⁸ Տե՛ս ՀՀ Կառավարության 27.11.08թ, միստի արձանագրությունը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Թամարա ՇԱՔԱՐՅԱՆ

*ՀՀ արդարադատության նախարարի
խորհրդակալ*

Տնտեսության ազատականացմանը զուգընթաց անխուսափելիորեն մեծ արդիականություն են ստացել իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնախնդիրները: Վարչական պատասխանատվության օրենսդրության անկատարության պատճառով դեռևս անբավարար են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու մեխանիզմները: Բավական է նշել, որ իրավական ակտերում ընդհանրապես բացակայում է «իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն» հասկացությունը. իսկ այդ ինստիտուտը միայն կոնկրետ օրենսդրական ակտերի արդյունք է: Այսպես, իրավական ակտերով սահմանված են որոշակի իրավախախտումների համար իրավաբանական անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ դրույթներ. օրինակ՝ տնտեսական մրցակցության, արժութային կարգավորման և արժութային վերահսկողության, արժեթղթերի շուկայի, բանկերի և բանկային գործունեության, փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման իրավախախտումների դեմ պայքարը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցներ են սահմանված Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներով:

«Քաղաքաշինության բնագավառում ի-

րավախախտումների համար պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը² սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց՝ այդ ոլորտում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը, և այդ օրենքի գործողությունը տարածվում է միայն այն իրավաբանական անձանց վրա, որոնք աշխատանքներ են իրականացնում քաղաքաշինական գործունեության բնագավառում: Ի դեպ, ներկայումս նրանք հանդես են գալիս որպես վարչական պատասխանատվության սուբյեկտներ՝ նաև հողային, շինարարության, մաքսային, հարկային, սոցիալական ապահովագրության, բնության ու շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերով:

Թերևս անհրաժեշտ է նաև նշել, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող բազմաթիվ իրավական ակտերում, այնուամենայնիվ, հստակ չեն սահմանվում նաև այն իրավախախտումները, որոնք հիմք են հանդիսանում վարչական պատասխանատվության համար: Նկատենք, որ իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող օրենսդրական ակտերը դասակարգված են ըստ կառավարման ոլորտների, ինչի հետևանքով կա՛մ դրանք անհարկի կրկնում են միմյանց, կա՛մ պարունակում խնդրահարույց հակասություններ:

Իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հիմնահարցը դարձել է տեսական և գործնական լայն

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

քննարկման առարկա և բավականին խորը ուսումնասիրվել բազմաթիվ գիտնականների կողմից, սակայն, այնուամենայնիվ, պատասխանատվության այս ինստիտուտի կիրառման շրջանակներում սուբյեկտի առումով դեռևս չի ձևավորվել միասնական մոտեցում: Առայժմ վիճելի է, թե իրավաբանական անձինք վարչական պատասխանատվության սուբյեկտ են, թե՞ ոչ, և դրա հետ կապված՝ ծագում են նաև բազմաթիվ հարցեր մասնավորապես այնպիսի ինստիտուտների հետ, ինչպիսիք են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը, մեղքը և այլն: Իրավագետների մի մասը հակված է այն մոտեցմանը, որ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդես գալ բացառապես ֆիզիկական անձինք (քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրացիները, պաշտոնատար անձինք և այլն)³, իսկ մյուս մասի կարծիքով՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ իրավաչափորեն կարող են և պետք է հանդես գան նաև իրավաբանական անձինք⁴:

Ինչ վերաբերում է այդ խնդրի գործնական կողմին, ապա միջազգային փորձի ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, ցույց է տալիս, որ իրավաբանական անձը նույնպես վարչական պատասխանատվության սուբյեկտ է: Եվ քանի որ մի շարք երկրներում հստակ տարանջատում չկա վարչական և քրեական արարքների միջև, իսկ շատ դեպքերում նույնիսկ վարչական զանցանքները նախատեսվում են քրեական օրենսդրությամբ, ուստի հարկ ենք համարում այս հիմնահարցի մասին խոսելիս զուգահեռներ անցկացնել նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հիմնահարցի հետ: Ի դեպ, սկզբունքի նշանակությամբ օգտագործվող այն ընդհանուր մոտեցումը, ըստ որի՝ քրեական պատասխանատվութ-

յունը պետք է անհատական լինի, պատմականորեն իրավաբանական անձանց ազատել է քրեական պատասխանատվության ենթարկվելու զաղափարից, և ներկայումս էլ իրավաբանական անձանց քրեական և վարչական պատասխանատվության շուրջը ձևավորված բազմակարծիք և խնդրահարույց քննարկումների տեղիք է տալիս:

Ինչպես հայտնի է, իրավաբանական գրականության մեջ վարչական իրավախախտումը բնութագրվում է որպես հակաիրավական, մեղավոր գործողություն կամ անգործություն, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն: Ուստի զանցանքների սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր է համարվում մեղքը, այսինքն՝ անձի հոգեբանական վերաբերմունքը կատարված իրավախախտման նկատմամբ: Հենց այս պարագայում է, որ խիստ վիճարկելի է դառնում իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության հարցը, քանզի մեղքը՝ որպես անձի հոգեբանական վերաբերմունք կատարված արարքի նկատմամբ, չի կարող բնութագրական լինել նրանց: Ինչպես նշում է Ֆրիդրիխ Կարլ Վոն Սավինին՝ «... ֆիզիկական անձինք մտածող էակներ են՝ ի վիճակի ազատորեն իրականացնելու իրենց կամքը: Իրավաբանական անձը, որպես այդպիսին, չի կարող հանդես գալ. նա օժտված է տարբեր անձանց ներկայացուցչական կամքով, որն էլ իր հերթին փոխակերպվում է վերջինիս սեփական կամքի: Իրավաբանական անձին վերագրվող ցանկացած արարք իրականում տվյալ մարմինների կամ մասնակիցների կողմից կատարված արարք է, ինչն էլ նշանակում է, որ դրանք, ըստ էության, կատարվում են անհատի կամ առանձին ֆիզիկական անձի կողմից»⁵:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը (անգործությունը), ո-

րի համար սույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքներով սահմանված է վարչական պատասխանատվություն: Դրա հետ մեկտեղ, ըստ նույն հոդվածի 2-րդ մասի, իրավաբանական անձը վարչական իրավախախտման համար համարվում է *մեղավոր*, եթե հաստատվի, որ նա հնարավորություն ուներ հետևելու այն նորմերին ու կանոններին, որոնց խախտման համար սույն օրենսգրքով կամ Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքներով սահմանված է վարչական պատասխանատվություն, սակայն նա չի օգտագործել իրենից կախված բոլոր հնարավորությունները դրանց հետևելու համար⁶: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը մեղավոր է ճանաչվում կատարված իրավախախտման համար, եթե նա պարտավոր էր իրականացնել իր վրա դրված պարտականությունը, սակայն չի կատարել, չնայած հնարավորություն ունեցել է:

Ինչպես տեսնում ենք, Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ մեղքը վարչական իրավախախտման սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր է համարվում, նույնիսկ եթե այդ իրավախախտումը կատարվել է իրավաբանական անձի կողմից: Ընդ որում, իրավաբանական անձինք պատասխանատվության են ենթարկվում անկախ նրանց գտնվելու վայրից, կազմակերպական-իրավական ձևից և այլ հանգամանքներից:

Որոշ երկրների օրենսդրությամբ այս հարցն այլ կերպ է կարգավորվել: Այսպես, Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտում է համարվում ֆիզիկական անձի հակաիրավական, մեղավոր գործողությունը կամ անգործությունը, կամ իրավաբանական անձի հակաիրավական գործողությունը կամ անգործությունը, որի համար սույն օրենսգրքով սահմանված է վարչական պատասխանատվություն⁷: Հարկ է նկատել, որ այս դեպքում, ի տարբերու-

յուն ֆիզիկական անձանց, իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար մեղքի առկայությունը պարտադիր պայման չի համարվում. վարչական պատասխանատվության ենթարկելու բավարար հիմք է հանդիսանում միայն արարքի հակաիրավական բնույթը: Կարծում ենք, որ այս կարգավորումն ավելի ընդունելի է, քանի որ մեղքը բաղկացած է կամային և գիտակցական տարրերից, իսկ կամքով և գիտակցությամբ է օժտված միայն ֆիզիկական անձը: Հենց այս մոտեցումն էլ պետք է որդեգրել վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագիծ մշակելիս:

Հարկ ենք համարում նշել, որ իրավաբանական անձանց համար նախատեսված վարչական պատասխանատվության նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնականում պայմանավորված են իրավաբանական անձանց կոնկրետ իրավասու պաշտոնատար անձի կողմից թույլ տված խախտումներով: Տեսության մեջ շատ կարևոր և վիճահարույց է նաև այն հարցը, թե իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը ֆիզիկական անձին չի⁸ ազատում նույն արարքի կատարման համար վարչական պատասխանատվությունից: Այս հիմնախնդրի իրավահամեմատական վերլուծությունը փաստում է հետևյալը. որոշ երկրների օրենսդրությամբ սահմանված է, որ եթե իրավաբանական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա տվյալ զանցանքի կատարման համար մեղավոր ֆիզիկական անձին չի ազատում պատասխանատվությունից, և հակառակը, եթե ֆիզիկական անձի նկատմամբ նշանակվել է վարչական պատասխանատվություն, ապա դա իրավաբանական անձին չի ազատում տվյալ զանցանքի կատարման համար վարչական պատասխանատվությունից:

Այլ կերպ ասած՝ միևնույն իրավախախտման համար իրավաբանական անձի պատասխանատվությունը չի բացառում իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից հանդես ե-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

կող կամ իրավաբանական անձուն իր պաշտոնական, ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարող իրավաբանական անձի հիմնադիրների, ղեկավարների, պաշտոնատար այլ անձանց, աշխատակիցների, ինչպես նաև իրավաբանական անձի անունից հանդես եկող այլ անձանց պատասխանատվությունը: Թերևս, այս մոտեցումն ամրագրված է նաև այն երկրների քրեական օրենսդրությամբ, որոնք նույնաբնույթ արարքների համար նախատեսում են նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար մեղավոր ֆիզիկական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից այնպես, ինչպես ֆիզիկական անձին վարչական պատասխանատվության ենթարկելը տվյալ վարչական իրավախախտման համար իրավաբանական անձին չի ազատում վարչական պատասխանատվությունից⁹: Նույնաբնույթ կարգավորում է տրված նաև Ղազախստանի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 28-րդ հոդվածով:

Որոշ երկրների օրենսդրությամբ նույն արարքի համար ֆիզիկական անձին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայման է հանդիսանում իրավախախտման կատարումը՝ «ի շահ իրավաբանական անձի»: Այսպես, օրինակ, Ֆրանսիայի 1992 թվականի քրեական օրենսգրքի 121-2-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն արարքի համար մեղավոր ֆիզիկական անձի պատասխանատվությունը, եթե արարքը կատարվել է՝ ելնելով իրավաբանական անձի շահերից⁹: Կամ՝ Գերմանիայի «Վարչական

սանկցիաների մասին» օրենքը (Ordnungswidrigkeiten) վարչական մարմիններին իրավասություն է վերապահում վարչական պատասխանատվության ենթարկել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց: Սակայն ֆիզիկական անձանց շրջանակը, որոնց կողմից կատարված արարքների դեպքում իրավաբանական անձը ևս ենթարկվում է վարչական պատասխանատվության, սահմանափակ է, այսինքն՝ այդ արարքները պետք է կատարվեն իրավաբանական անձանց ներկայացուցիչների կամ ղեկավարների կողմից իրենց պարտականությունները ի շահ իրավաբանական անձի ոչ պատշաճ կատարելու կամ չկատարելու հետևանքով: Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ երկրներում ֆիզիկական անձանց պատասխանատվությունը նույն արարքի համար չի բացառվում միայն այն դեպքում, եթե ֆիզիկական անձը այդ արարքը կատարել է ի շահ իրավաբանական անձի¹⁰:

Հաջորդ կարևորագույն հիմնահարցը վերաբերում է իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակների, որոնք զգալիորեն տարբերվում են ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակներից: Բացառապես իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի սպառնիչ ցանկ որևէ օրենսդրական ակտով սահմանված չէ, ուստի դրանց մասին կարելի է հետևություն անել իրավաբանական անձանց համար վարչական պատասխանատվություն սահմանող տարբեր իրավական ակտերի վերլուծությամբ:

Այսպես, նրանց նկատմամբ հիմնականում կարող են կիրառվել տույժի հետևյալ տեսակները՝ նախազուգուցում, վարչական տուգանք, լիցենզիայի գործողության կասեցում կամ դադարեցում, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու դադարեցում, գույքի բռնագրավում, իրավաբանական անձի լուծարում և այլն: Ի դեպ, Գերմանիայի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժի տեսակը վարչական տու-

գանքն է, քանի որ վերը նշված սանկցիաները համարվում են ավելի խիստ և պահանջում են ապացուցման առավել բարձր մակարդակ, ինչը բնորոշ է քրեական դատավարությանը¹¹:

Ընդ որում, առանձին դեպքերում վարչական տույժեր են նշանակվում ոչ թե կազմակերպության կողմից կատարված, այլ կազմակերպության հետ այս կամ այն կերպ առնչվող իրավախախտման հիմքով¹²:

Ամփոփելով իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության որոշ հիմնախնդիրները կարելի է առանձնացնել հետևյալ առանձնահատկությունները.

1) իրավաբանական անձանց պատասխանատվության հիմքում ընկած են ինչպես կառավարման ոլորտին առնչվող ընդհանուր բնույթի օրենսդրական ակտեր, այսինքն՝ առանձին ակտեր, որոնք միաժամանակ վարչական պատասխանատվություն են սահմանում և՛ ֆիզիկական անձանց, և՛ կազմակերպությունների համար, այնպես էլ միայն կազմակերպությունների համար վարչական պատասխանատվություն սահմանող իրավական ակտեր¹³,

2) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու համար մեղքի առկայությունը վարչական իրավախախտման սուբյեկտիվ կողմի պարտադիր տարր չէ, և միայն հակաիրավական արարքի փաստի առկայությունը հաճախ համարվում է բավարար հիմք վարչական պատասխանատվության ենթարկելու համար,

3) իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի ցանկը տարբերվում է ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակներից: Նրանց նկատմամբ կիրառվող տույժի տեսակներին արդեն անդրադարձել ենք վերևում,

4) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությունը չի բացառում նույն այդ արարքների համար նաև վարչական մարմնի գործունեության համար պատասխանատու և դրա շահերից բխող գործողություններ կատարած ան-

ձանց պատասխանատվությունը:

Կարծում ենք, սակայն, որ վերը նշված առանձնահատկությունները սպառնիչ չեն. դրանք կարող են և այլ հատկանիշներով հանդես գալ՝ կապված այս կամ իրավական համակարգում ձևավորված ավանդույթների հետ:

Բացի այդ, թեպետ իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը բնավ երիտասարդներից չէ, այնուամենայնիվ իրավահամեմատական վերլուծությունը վկայում է, որ այն իր տեսական մշակվածության աստիճանով և իրավական կարգավորման ընդգրկվածությամբ դեռևս եպես զիջում է ֆիզիկական անձանց պատասխանատվության ինստիտուտին: Կարծում են, հետագա գիտահետազոտական աշխատանքների կենտրոնում պետք է պահել հատկապես հետևյալ հարցադրումները՝ ա) կոնկրետ ո՞ր ֆիզիկական անձանց գործողությունների համար կարող է իրավաբանական անձը կրել վարչական պատասխանատվություն, ինչպիսի՞ հարաբերությունների մեջ պետք է լինի նա իրավաբանական անձի հետ, բ) ֆիզիկական անձի ո՞ր գործողությունների կամ անգործության համար պետք է ծագի իրավաբանական անձանց վարչական պատասխանատվություն, մանավանդ իրավաբանական անձի շահերից բխող բոլոր գործողությունները չեն, որ կարող են պատասխանատվության հիմք հանդիսանալ, գ) իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանը զուգահեռ՝ որքանո՞վ է իրավաչափ նախատեսել նաև քրեական պատասխանատվություն, արդյոք վարչական պատասխանատվությունը բավարար չէ լուծելու համար այն խնդիրները, որոնք ծագում են՝ կապված իրավաբանական անձանց պատասխանատվության անհրաժեշտության հետ, դ) ինչպիսի՞ հարաբերակցության մեջ կարող են գտնվել իրավաբանական անձի վարչական և քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտները և այլն:

Մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի կիրառումը կազմա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

Կերպություններին հատկապես տուգանքի տեսքով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավական ակտերն աստիճանաբար վերացվում էին: Այսպես, նախկին ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի նախագահության 1961թ. հուլիսի 21-ի «Վարչական կարգով նշանակվող տուգանքների հետագա սահմանափակման մասին» հրամանագրով կազմակերպություններին վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը վերացվեց. նույնաբնույթ արարքների համար վարչական պատասխանատվություն սահմանվեց այդ կազմակերպությունների իրավասու պաշտոնատար անձանց համար: Նման մոտեցումն անընդունելի էր այնքանով, որ այլ անձանց՝ հիմնականում ենթակա աշխատողների անգործության համար պատասխանատվության էր ենթարկվում միայն ղեկավար պաշտոնատար անձը, իսկ անմիջական իրավախախտողը խուսափում էր որևէ պատասխանատվությունից:

Հետագայում, այնուամենայնիվ, աստիճանաբար սկսեցին ընդունվել կազմակերպությունների վարչական պատասխանատվության վերաբերյալ իրավական ակտեր: Ընդ որում, տուգանքից բացի, սահմանվում էին նաև վարչական տույժի այլ միջոցներ (լիցենզիաներից, արտոնագրերից զրկել և այլն)¹⁴:

Իրավագետների մեծ մասը համակարծիք է, որ իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանն առնչվող իրավահարաբերությունների համակարգված օրենսդրական կարգավորումը զգալիորեն կնպաստի նաև վարչական գործերի քննության արդյունավետությանը¹⁵:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքում, որը լուրջ բարեփոխման կարիք է զգում, բացակայում են իրավաբանական անձանց վարչական պատասխանատվությանն առնչվող դրույթներ, սակայն, կարծում ենք, նոր օրենսգր-

քի նախագծում անհրաժեշտ է իրավաբանական անձանց նույնպես նախատեսել վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում, քանզի մեր երկրում ձեռնարկվում են քայլեր նաև վերջիններիս համար քրեական պատասխանատվություն սահմանելու ուղղությամբ՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. գործունեության ծրագրով, ուստի կարծում ենք, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի կիրառումը հնարավոր կլինի, երբ վերջիններիս համար նույնպես ամրագրված լինի վարչական պատասխանատվություն:

Այս առումով հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2008 թվականի հունվարի 23-ի ՆԿ-9-Ա կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի և ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծում որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ արդեն սահմանված է նաև իրավաբանական անձը, այդ թվում՝ իրավաբանական անձ չհանդիսացող մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, հիմնարկները կամ այլ առանձնացված ստորաբաժանումները, օտարերկրյա կազմակերպությունները (օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, հիմնարկները կամ այլ առանձնացված ստորաբաժանումները): Ի դեպ, իրավաբանական անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում իրավաբանական անձի ղեկավարի կամ իրավաբանական անձի անունից հանդես եկող կամ իրավաբանական անձում իր պաշտոնական, ծառայողական կամ աշխատանքային պարտականությունները կատարող իրավաբանական անձի հիմնադիրների, ղեկավարների, պաշտոնատար այլ անձանց, աշխատակիցների, ինչպես նաև՝ իրավաբանական անձի անունից հանդես եկող այլ անձանց (իրավաբանական անձի պատաս-

խանատու անձ) կողմից իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքի կիրառման բնագավառում ծագող բազմաթիվ խնդիրներ պայմանավորված են նաև իրավաբանական անձի՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտի, օրենսգրքում չնախատեսվելու հանգամանքի հետ, ուստի, կարծում ենք, որ ողջունելի պետք է համարել այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նշակվող նոր օրենսգրքում

վարչական պատասխանատվության սուբյեկտների շարքում նախատեսվել են նաև իրավաբանական անձինք, ինչը կնպաստի օրենսդրության կիրառման բնագավառում առաջացող բազմաթիվ խոչընդոտները բացառելուն, հիմնախնդրի իրավական կարգավորման միջոցով վարչական զանցանքները կանխելուն, բացահայտմանը, դրանց կատարմանը նպաստող պայմաններն ու պատճառները վերացնելուն, ինչպես նաև վարչական պատասխանատվության միջոցների ազդեցությունն ու արդյունավետությունը բարձրացնելուն:

¹ Տե՛ս 2000թ. նոյեմբերի 6-ին ընդունված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, 2004 թ. նոյեմբերի 24-ին ընդունված «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, 2007թ. հոկտեմբերի 11-ին ընդունված «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքը, 2008 թվականի մայիսի 26-ին ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը:

² Տե՛ս 1999թ. ապրիլի 28-ին ընդունված «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը:

³ Տե՛ս Советское административное право. Под редакцией Василенкова П.Т. М., 1981, էջ 243:

⁴ Տե՛ս Алексин А.П., Козлов Ю.М. Административное право Российской Федерации. М., 1994, էջ 244-246, Попов Л.Л., Шергин А.П. Управление. Гражданин. Ответственность. Л., 1975, էջ 101:

⁵ Տե՛ս «Զարգացումներ միջազգային մակարդակում», փաստաթուղթ, էջ 1, Բեռլին, 4-6 մայիսի, 1998թ., միջազգային դասընթաց:

⁶ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենս-

գրքի (2007թ. հուլիսի 24-ի փոփոխություններով և լրացումներով) 2.1-րդ հոդվածը:

⁷ Տե՛ս Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (2007թ. դեկտեմբերի 19-ի փոփոխություններով և լրացումներով) 28-րդ հոդվածը:

⁸ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (2007թ. հուլիսի 24-ի փոփոխություններով և լրացումներով) 2.1-րդ հոդվածը:

⁹ Տե՛ս "Corporate criminal liability" Roland Hefendehl, էջ 289:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 286:

¹¹ Տե՛ս "Corporate criminal liability. National and international responses" by Markus Wagner, Background paper for the international society for the reform of criminal law 13th international conference commercial and financial fraud. Malta, 8-12 July, 1999.

¹² Տե՛ս Масленников М.Я. Порядок применения административных взысканий. Тверь, 1995, էջ 56:

¹³ Տե՛ս Գ. Դանիելյան Վարչական պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում, (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌՏ» հրատարակչություն, 2007, էջ 98:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 96-97:

¹⁵ Տե՛ս Бахрах Д.Н. Административное право. Учебник для вузов. М.: Издательство БЕК. 1997, էջ 344:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ**

Անի ԽԵՉՈՅԱՆ

*ԵՊՀ Միջազգային հարաբերությունների
ամբիոնի հայցորդ*

Միջազգային իրավունքի պատմությունը առավել քիչ ուսումնասիրված ոլորտներից է: Խորհրդային գիտությունը միջազգային իրավունքի առաջադիմական զարգացումը կապում էր Յոկոնոմիայի մեծ հեղափոխության և նրա առաջադրած գաղափարների հետ՝ անտեսելով այդ նույն ժամանակաշրջանի միջազգային իրավական մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնցից էր Դաշնակից տերությունների և Թուրքիայի միջև 1920թ.-ի օգոստոսի 10-ին կնքված Սևրի հաշտության պայմանագիրը: Միջազգային իրավունքին վերաբերող գիտական աշխատություններում շարունակում են տեղ գտնել մի շարք դիրքորոշումներ, որոնք միջազգային իրավունքի մի շարք կարևոր ինստիտուտների զարգացումը կապում են պատմական այլ իրողությունների հետ՝ անտեսելով դրանց ուղղակի առնչությունը Սևրի պայմանագրի հետ: Միջազգային իրավունքի՝ որպես համընդհանուր արժեքի և միջազգային հարաբերությունների կարգավորման մեխանիզմի առանցքային տարրի դերի աննախադեպ աճը ենթադրում է նաև միջազգային իրավունքի տեսության և մասնավորապես վերջինիս ձևավորման պատմությանը վերաբերող մի շարք դիրքորոշումների վերանայում:

Սևրի պայմանագրի կնքումը պայմանավորված էր ժամանակաշրջանի միջազգային իրավունքում տեղի ունեցող գործընթացներով, որոնց օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի ուսումնասիրությունը կարևոր-

վում է ոչ միայն Սևրի պայմանագրի, այլև ժամանակակից միջազգային իրավունքի ձևավորման պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Միջազգային իրավունքի արմատական վերանայման օբյեկտիվ անհրաժեշտություն առաջացավ Առաջին աշխարհամարտից հետո, երբ սկսվեցին միջազգային հասարակական խոշոր շարժումներ, որոնք պահանջում էին փոփոխություններ մտցնել միջազգային հարաբերությունների կարգավորման մեխանիզմում: Քսաներորդ դարասկզբին գիտատեխնիկական բուռն առաջընթացը և որպես դրա արդյունք՝ նոր զինատեսակների մուտքը միջազգային իրավունքի, մասնավորապես պատերազմական գործողությունների իրավական կարգավորման ուղղված դրույթների կատարելագործման անհրաժեշտություն առաջացրին:

Ժամանակակից «պատերազմի» իրավունքի հիմնական հասկացությունները ձևավորվել են բուրժուական պետությունների՝ ֆեոդալական բանակների դեմ մղած պատերազմների ընթացքում: «Պատերազմի» իրավունքի հիմնական սկզբունքներն ու նորմերը հետագայում զարգացան XIX դարավերջի և XX դարասկզբի պատերազմների փորձի հիման վրա: Միջնադարի ասպետական սովորույթները ևս ազդեցին պատերազմի վարման կանոնների կատարելագործման վրա: Դրանց վրա կարևոր ազդեցություն թողեց նաև Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, որը միջազգային հարաբերություններում ձևավորեց պատերազմի նոր օրենքներ և սովորույթներ, մասնավորապես ռազմագերիների անձեռնմխելիության ինստիտուտը:

Պատերազմական գործողությունների

ընթացքում պետությունների հարաբերությունների իրավական կարգավորումը հիմնվում էր մեծ մասամբ միջազգային սովորույթների վրա, որոնցից շատերը իրենց ամրագրումը նոր ժամանակաշրջանում ստացան միջազգային համաձայնագրերում, որոնցից առավել կարևորներն էին՝ 1856թ.-ի «Օժվային պատերազմի մասին» հռչակագիրը, Յապոնիայի 1899 և 1907թթ.-ի Կոնվենցիաները, 1929թ.-ի Ժնևյան Կոնվենցիան «Գործող բանակներում վիրավորների, հիվանդների և ռազմագերիների ռեժիմի մասին» և այլն:

Պատերազմի օրենքների և սովորույթների համակարգման առաջին փորձերը, որոնք իրականացվեցին 19-րդ դարում և ուղղված էին այդ սովորույթներին գրավոր տեսք տալուն, դեռևս չունեին այնպիսի ճանաչում, որ կարելի լիներ խոսել ձևավորված իրավունքի մասին, ինչը պատճառաբանվում էր պետություններում գոյություն ունեցող պատերազմի մասին տարբեր օրենքներով և սովորույթներով: Բացարձակ միապետության ժամանակաշրջանում պետությունները նախաձեռնություն չէին ցուցաբերում պատերազմի ժամանակ բռնության կիրառման սահմանափակման հարցում: Քաղաքների և գյուղերի ոչնչացումը, խաղաղ բնակչության զանգվածային կոռուպտիվ, խոշտանգումները և տանջանքների ենթարկելը սովորական երևույթ էին: Պատերազմի սովորույթների դաժանությունը արտահայտվում էր բոլոր առումներով. ռազմագերիներին դատապարտում էին ծանր աշխատանքների՝ որպես հանցագործների, ստիպում էին մարտնչել սեփական բանակի դեմ, ոչ միայն թշնամու, այլև սեփական բանակի վիրավորներին թողնում էին բախտի քմահաճույքին, ռազմական օկուպացիան դիտվում էր որպես գործողություն, որը զավթողին տալիս էր լրիվ և անսահմանափակ իշխանություն մվաճված տարածքի և նրա բնակչության նկատմամբ:

Այդուհանդերձ, առանձին սահմանափակումներ պատերազմական բռնություն-

ների նկատմամբ սկսում են առաջանալ և արտահայտվել ինչպես սովորույթներում, այնպես էլ միջազգային պայմանագրերում: Ձևավորվում է ռազմագերիներին փրկագնի կամ սեփական զինվորների դիմաց ազատ արձակելու սովորույթը, իրականացվում է պատերազմի ժամանակ խաղաղ բնակչության անձեռնմխելիության պայմանագրային կարգավորում:

16-17-րդ դարերում պետական ինստիտուտների ամրապնդման հետ մեկտեղ պատերազմի մասին օրենքների և սովորույթների մարդասիրականացումը առավել ընդհանուր բնույթ է ստանում հատկապես հակառակորդ բանակների վիրավորների և ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի առումով: Հակառակորդ բանակների հրամանատարների միջև կնքվող առանձին պակտերը՝ «ռազմագերիների փոխանակման մասին» կարտելները, որոնք այդ ժամանակաշրջանում դեռևս կնքվում էին տեղական մակարդակով, գրավոր ամրագրում էին բազմաթիվ առանձին սովորույթներ: Այդ համաձայնագրերի առանձին դրույթների բովանդակությունը հաճախ փոփոխվում էր էականորեն, դրանց կիրառությունը սահմանափակ էր ժամանակային առումով և տարածքային բնույթ էր կրում: Սակայն նույնատիպ մարդասիրական պատկերացումները առավել հաճախ էին արտահայտվում պայմանագրերում, որոնք կնքվում էին տարբեր պետությունների միջև հետպատերազմական կարգավորման հարցերի շրջանակում կամ պատերազմ ծագելու դեպքում վերարտադրվում էին որպես վարքագծի կանոններ: Ֆրանսիայի կողմից մինչև 1789թ.-ի հեղափոխությունը կնքված պայմանագրերում կար դրույթ, որի համաձայն ռազմագերիները ենթակա էին վերադարձման՝ փոխադարձության սկզբունքի հիման վրա, առանց փրկագնի, իսկ 1648թ.-ի Մյունստերի պայմանագիրը, որը համարվում է ռազմագերիների հանդեպ վերաբերմունքին առնչվող ժամանակակից բոլոր նորմերի սկզբնաղբյուրը, նախատեսում էր, որ «ռազմագերի-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

ները ենթակա են վերադարձման առանց բացառության կամ խտրականության»²:

Նոր ժամանակաշրջանում մի շարք կարևոր փոփոխություններ կատարվեցին պատերազմի օրենքներում և սովորույթներում: Անցումը վարձկաններից կազմված բանակներից համընդհանուր զինապարտության, ազնվականության ջանքերը, որպեսզի ռազմական գործողությունները չխախտեին արտադրության բնականոն ընթացքը, մարդասիրական գաղափարները, որոնք առաջ էին քաշվում հեղափոխական ազգային-ազատագրական պատերազմների ընթացքում, էպես նպաստեցին պատերազմի օրենքների և սովորույթների կատարելագործմանը: Առանձին պետությունների օրենքների և զինվորական կանոնադրությունների, ինչպես նաև հեղափոխական և ազգային-ազատագրական պատերազմների փորձի հիման վրա ձևավորված սովորույթների համաձայն՝ պատերազմի ժամանակ բռնություններ կարող էին կիրառվել միայն մարտիկների նկատմամբ, պատերազմողները պարտավոր էին հոգ տանել հակառակորդի հիվանդ և վիրավոր մարտիկների նկատմամբ, ռազմագերիների նկատմամբ պետք է մարդասիրական վերաբերմունք ցուցաբերվեր, նրանց պայմանները պետք է հավասար լինեին պատերազմող պետություններից յուրաքանչյուրի բանակի մարտիկների պայմաններին: Արգելվեց պատերազմում այնպիսի միջոցների օգտագործումը, որոնք կարող էին պատճառել ավելորդ տառապանք և թելադրված չէին ռազմական անհրաժեշտությամբ:

19-րդ դարի 2-րդ կեսից սկսվեց պատերազմի սովորույթների համակարգումը բազմակողմ միջազգային պայմանագրերի կնքման միջոցով: Առանձին միջազգային համաձայնագրերով (1868թ.-ի Պետերբուրգի Յուզակագիրը, Հաագայի 1899 և 1907թթ.-ի Կոնվենցիաները) ընդարձակում

և հստակեցնում էին պատերազմի վարման արգելված մեթոդների ցանկը: Ռազմական օկուպացիան սկսեց դիտվել որպես թշնամու տարածքի ժամանակավոր զբաղեցում ռազմական նկատառումներով, որը այդ տարածքը զբաղեցնողին չէր օժտում այդ տարածքի և դրա բնակչության նկատմամբ բացարձակ ինքնիշխանության իրավունքով և պատերազմի օրենքների և սովորույթների խախտման իրավունք չէր վերապահում:

Միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտը կարգավորող նորմերի համակարգումը կապվում է Հաագայի 1899 և 1907թթ.-ի Կոնվենցիաների հետ:

Հաագայի խաղաղության վեհաժողովն անդրադարձավ սովորույթային իրավունքի կողմից լայնորեն լուսաբանված՝ ռազմագերիների հետ վարվելակերպի հարցին: Ռազմագերիների՝ պատերազմի ավարտից հետո հայրենիք վերադարձվելու՝ նախկինում գոյություն ունեցող սովորույթները արտահայտված էին Հաագայի 1907թ.-ի «Ցամաքային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» Կոնվենցիայի հավելվածի 20-րդ հոդվածում, որտեղ նշվում էր. «Հաշտության կնքման պահից ռազմագերիների հայրենադարձումը պետք է իրականացվի հնարավորինս կարճ ժամկետում»³:

XX դարասկզբին իրականացված՝ պատերազմի օրենքների և սովորույթների մարդասիրականացման և համակարգման միտման հետ մեկտեղ սկսում է նկատվել մեկ այլ հանգամանք՝ այդ օրենքների և սովորույթների կոպիտ ոտնահարումները, որոնք իրենց գազաթնակետին հասան Առաջին աշխարհամարտի ժամանակ: Առաջին աշխարհամարտից հետո, որը աչքի ընկավ երկու հակամարտող դաշինքների բանակներում ռազմագերիների մեծ թվաքանակով, անհրաժեշտություն առաջացավ՝ առավել մանրամասն կարգավորելու պատերազմից հետո ռազմագերիների իրավական կարգավիճակին վերաբերող հարցերը:

Այդ նպատակին էին ուղղված պատերազմից հետո Անտանտի պետությունների և Առաջին աշխարհամարտում պարտություն կրած պետությունների միջև կնքված հաշտության պայմանագրերի բազմաթիվ դրույթներ: Սևրի պայմանագրի՝ միջազգային մարդասիրական իրավունքի ոլորտը կարգավորող նորմերի առաջադիմական նշանակությունը ընդգծելու տեսակետից, դրանք ավելի նպատակահարմար է քննարկել Վերսալի պայմանագրի հոդվածների դրույթների հետ համեմատության մեջ, քանի որ Դաշնակից տերությունների և Ավստրիայի միջև 1919թ.-ի սեպտեմբերի 10-ին կնքված Սեն-ժերմենի, Բուլղարիայի հետ 1919թ.-ի նոյեմբերի 27-ին կնքված Նեյի, Հունգարիայի հետ 1920թ.-ի հունիսի 4-ին կնքված Տրիանոնի պայմանագրերի՝ ռազմագերիների կարգավիճակին վերաբերող հոդվածները հիմնականում վերարտադրում էին Վերսալի պայմանագրի՝ ռազմագերիների կարգավիճակին վերաբերող հոդվածների դրույթները:

Պատերազմից հետո ռազմագերիների իրավական կարգավիճակին էր վերաբերում Վերսալի պայմանագրի VII բաժինը: Վերսալի պայմանագրի 214-րդ հոդվածը նախատեսում էր ռազմագերիների և քաղաքացիական բնակչությանը պատկանող ներկալված անձանց շուտափույթ հայրենադարձումը: Պայմանագրի 217-րդ հոդվածի համաձայն՝ հայրենադարձման բոլոր ծախսերը դրվում էին Գերմանիայի վրա. վերջինս պետք է տրամադրեր անհրաժեշտ տրանսպորտային միջոցները և տեխնիկական անձնակազմը: 219-րդ հոդվածը նախատեսում էր, որ այն ռազմագերիները և քաղաքացիական ներկալված անձինք, որոնք կրում էին ավելի ծանր պատիժ, քան կարգապահական, կարող էին չհայրենադարձվել:

Գերմանիան պարտավորվում էր իր տարածք ընդունել բոլոր հայրենադարձվողներին առանց խտրականության: Այն գերմանացիները, որոնք չէին ցանկանա հայրենադարձվել, կարող էին Դաշնակիցների որոշ-

մամբ ուղարկվել չեզոք պետություն կամ այդուհանդերձ հայրենադարձվել (հոդված 222)⁴:

Սևրի պայմանագրի 208-րդ հոդվածը նախատեսում էր թուրքական ռազմագերիների և քաղաքացիական ներկալված անձանց շուտափույթ հայրենադարձման անհրաժեշտությունը⁵: Վերսալի պայմանագրի 214-րդ և Սևրի պայմանագրի 208-րդ հոդվածները հետագայում արտահայտվեցին պատերազմի վարման կանոններին միջկրված մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես Ժնևի 1929թ.-ի՝ «Գործող բանակներում վիրավորների, հիվանդների և ռազմագերիների կարգավիճակի մասին» Կոնվենցիայում, որտեղ նշվում էր, որ գերիների հայրենադարձումը պետք է իրականացվի հաշտության պայմանագրի կնքումից հետո ամենասեղմ ժամկետում⁶:

Վերսալի և Սևրի պայմանագրերում, ինչպես նաև 1929թ.-ի Ժնևի կոնվենցիայում ամրագրված դրույթները արտահայտված են նաև 1949թ.-ի օգոստոսի 12-ի «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների կարգավիճակի բարելավման մասին» Ժնևյան III կոնվենցիայում, որտեղ արտահայտված է Վերսալի և Սևրի պայմանագրերի այն դրույթը, ըստ որի՝ ռազմագերիները ազատվում և հայրենադարձվում են ռազմական գործողությունների ավարտից անմիջապես հետո (հոդված 118)⁷:

Առանձնահատուկ էր Սևրի պայմանագրի 211-րդ հոդվածը, որի համաձայն ռազմագերիները և քաղաքացիական ներկալված անձինք, որոնց սպասվում էր պատիժ, կամ արդեն պատիժ էին կրում կարգապահական խախտումների համար, պետք է հայրենադարձվեին՝ անկախ նրանց նկատմամբ իրականացված դատավարությունից կամ պատժի իրագործումից:

Այն ռազմագերիները և ներկալված անձինք, որոնք սպասում էին պատժի կամ կրում էին պատիժ ոչ կարգապահական խախտումների համար, կարող էին պահվել: 1949թ.-ի Ժնևի Կոնվենցիայով նախա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

տեսվում է, որ այն ռազմագերիները, որոնք հետապնդվում են քրեական հանցագործությունների կատարման համար, կարող են պահվել մինչև դատավարության ավարտը կամ համապատասխան դեպքերում մինչև պատժի կրման ավարտը (հոդված 119):

Վերսալի պայմանագրի համապատասխան հոդվածների դրույթներից տարբերվում էր Սևրի պայմանագրի 213-րդ հոդվածի հետևյալ կետը. «Այն ռազմագերիները կամ թուրքական քաղաքացիները, որոնք ցանկություն չեն հայտնի հայրենադարձվելու, չեն հայրենադարձվի, սակայն Դաշնակից տերություններին իրավունք էր վերապահվում կամ հայրենադարձնել նրանց, կամ ուղարկել չեզոք պետություն կամ թույլատրել նրանց մնալու իրենց տարածքում»⁹: Վերսալի պայմանագրի 222-րդ հոդվածը նախատեսում էր պարտադիր հայրենադարձում: 1949թ.-ի Ժնևի Կոնվենցիայի 118-րդ հոդվածը ևս որևէ բացառություն չի նախատեսում հայրենադարձվելուց հրաժարվելու հարցում: Համաձայն Կոնվենցիայի 118-րդ հոդվածի՝ բոլոր ռազմագերիներն առանց բացառության ենթակա են հայրենադարձման:

Կարծում ենք, Սևրի պայմանագիրը նախատեսում էր ավելի առաջադիմական դրույթ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ, ինչպես նշում են միջազգային իրավունքի մասնագետները, հարկադրական հայրենադարձումը հակասում է մարդու իրավունքներին մասնավորապես այն դեպքերում, երբ ռազմագերիներին կարող է հետապնդումների ենթարկվել իր երկրում: Դա կարող է տեղի ունենալ մասնավորապես այն դեպքերում, երբ ռազմագերու գերության ընթացքում երկրում փոխվել է քաղաքական վարչակարգը⁹:

Գերմանիան և Թուրքիան պարտավորվում էին նաև օժանդակել Դաշնակից տերությունների ներկայացուցիչներից կազմ-

ված այն հանձնաժողովների աշխատանքին, որոնք զբաղվում էին անհայտ կորածների հարցերով և անհրաժեշտության դեպքում տրամադրել կապի միջոցներ, տեղեկություններ և այլն (Վերսալի պայմանագրի 222-րդ և Սևրի պայմանագրի 215-րդ հոդվածներ):

Սևրի պայմանագրի 212-րդ հոդվածը նախատեսում էր, որ հայրենադարձմանը նախորդող ժամանակաշրջանում բոլոր ռազմագերիները և քաղաքացիական ներկայված անձինք պետք է ենթարկվեին գործող աշխատանքային և կարգապահական կանոններին:

1949թ.-ի Ժնևի Կոնվենցիայում նաև ամրագրվել է Վերսալի և Սևրի պայմանագրերում արտահայտված այն դրույթը, ըստ որի՝ հայրենադարձման ժամանակ ռազմագերիներից վերցված արժեքավոր իրերը և դրամական միջոցները պետք է հետ տրվեն (հոդված 119): Վերսալի պայմանագրի 223-րդ հոդվածի համաձայն՝ Գերմանիան պարտավորվում էր վերադարձնել բոլոր իրերը, արժեթղթերը և փաստաթղթերը, որոնք պատկանում էին Դաշնակից պետությունների քաղաքացիներին:

Սևրի պայմանագրի 216-րդ հոդվածի համաձայն՝ Թուրքիան պարտավորվում էր առանց հապաղման վերադարձնել բոլոր առարկաները, սարքավորումները, զենքերը, դրամը, արժեթղթերը, փաստաթղթերը և անձնական օգտագործման բոլոր պարագաները, որոնք պատկանում էին Դաշնակիցների սպաներին, զինվորներին կամ այլ քաղաքացիների և որոնք գտնվում էին թուրքական իշխանությունների ձեռքում:

Վերսալի և Սևրի պայմանագրերը հատուկ չէին անդրադառնում քաղաքացիական ներկայված անձանց կարգավիճակին և սահմանում էին նրանց հետ վարվելակերպի կանոնները՝ հենվելով ռազմագերիների հետ վարվելակերպին վերաբերվող նորմերի վրա: Պայմանագրերի՝ քաղաքացիական բնակչությանը պատկանող ներկայված անձանց հայրենադարձմանն առնչվող դրույթներն արտահայտված էին

նաև ժնկի 1949թ.-ի օգոստոսի 12-ի «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» IV կոնվենցիայում: Կոնվենցիայի XII գլուխը նվիրված է քաղաքացիական ներկալված անձանց հայրենադարձմանը: Կոնվենցիայում արտահայտված էին Սևրի պայմանագրի հետևյալ դրույթները՝ ներկալուձը պետք է դադարեցվի ռազմական գործողությունների ավարտից հետո հնարավորինս շուտ(հոդված 133): Սակայն, այն ներկալված անձինք, որոնք գտնվում են հակամարտության մեջ գտնվող կողմերից մեկի տարածքում և ենթակա են դատի այնպիսի իրավախախտումների համար, որոնց համար նախատեսված պատիժը չի սահմանափակվում բացառապես կարգապահական տուգանքով, կարող են պահվել մինչև դատավարության ավարտը կամ համապատասխան դեպքերում մինչև պատժի կրման ժամկետի ավարտը: Պայմանագրի մասնակից պետությունները օկուպացիայի կամ ռազմական գործողությունների ավարտից հետո պետք է աջակցեն ներկալ-

ված բոլոր անձանց իրենց բնակավայրերը վերադարձին(հոդված 134):

Վերսալի և Սևրի պայմանագրերը էապես կատարելագործեցին միջազգային մարդասիրական իրավունքի գոյություն ունեցող սովորույթները: Սևրի պայմանագիրը նախատեսում էր առավել առաջադիմական դրույթներ և ավելի մանրամասն էր կարգավորում պատերազմից հետո ռազմագերիների կարգավիճակին վերաբերող հարցերը: Այս պայմանագրերի ազդեցությունը միջազգային մարդասիրական իրավունքի զարգացման վրա հիմնավորվում է նաև միջազգային իրավունքի գիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետով, որ 1929թ.-ի ժնկի Կոնվենցիան ռազմագերիների մասին իսկական օրենսգիրք դարձավ՝ հենվելով հատկապես Առաջին համաշխարհային պատերազմի փորձի հիման վրա և լրանշակվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 1949թ.-ի օգոստոսի 12-ի «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» ժնկի III Կոնվենցիայում, որը գործում է մինչև այսօր¹⁰:

¹ Տե՛ս Лисовский. В.И. Международное право. М., 1961, էջ 47:

² Розмари Аби-Сааб. Гуманитарное право и внутренние конфликты. Истоки и эволюция международной регламентации. Москва. Международный Комитет Красного Креста. 2000, էջ 32:

³ Ведение боевых действий. Сборник Гаагских Конвенций и иных соглашений. М., 1995, էջ 21:

⁴ Տե՛ս Мирные договоры империалистической войны. М., 1925, էջ 35:

⁵ Treaty of Peace with Turkey. Signed at Sevres, August 10, 1920, p.48.

⁶ Տե՛ս Лисовский. В.И. Международное право. М., 1961, էջ 362:

⁷ Տե՛ս Международное гуманитарное право в документах. Сост. Ю.М. Колосов И.И. Котляров. Издательство Московского независимого института международного права. М., 1996, էջ 240:

⁸ Treaty of Peace with Turkey. Signed at Sevres, August 10, 1920, p.48.

⁹ Տե՛ս Հանս Պետեր Գասեր, Միջազգային Մարդասիրական իրավունք, Ներածություն, Հրատարակված է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի կողմից, Երևան, 1999, էջ 41:

¹⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 10:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ՈՐՊԵՍ
ԽԱՂԱՂ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԵՐԸ ԵՎ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ****Արտյոմ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Հայ-ռուսական (պալիտնական) պետական
համալսարանի ասպիրանտ

Քանի որ ԵԱՀԿ համակարգում վեճերի խաղաղ կարգավորման ընթացակարգերից իր բնույթով առավել իրավականը հաշտարարության և արբիտրաժային դատարանն է, ուստի գտնում ենք, որ այդ ինստիտուտի առանձնահատկությունների քննարկումը և վերլուծությունը խիստ արդիական է և անհրաժեշտ է հանգամանակից ուսումնասիրության:

Ստոկհոլմի Կոնվենցիան, որը ընդունվեց 1992 թ. հոկտեմբերի 12-23-ին ժնևում, ստորագրել էին ԵԱՀԿ անդամ 54 պետություններից 33-ը՝ բացառությամբ, մասնավորապես, Միացյալ Նահանգների, Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության, Իսպանիայի, Նիդեռլանդների, Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների: Կոնվենցիան բաց է ԵԱՀԿ անդամ պետությունների համար և արդեն վավերացվել է 20 պետությունների կողմից: Ներկայումս Հաշտարարության և արբիտրաժային դատարանը գործում է, և քարոզչություն է տարվում Կոնվենցիայի վավերացման ուղղությամբ:

Որոշ պետություններ կատարել են կոնվենցիայի դրույթների 19-րդ հոդվածի 4-րդ մասով թույլատրված վերապահումներ, որոնց նպատակը վեճերի խաղաղ կարգավորման այլ երկկողմ կամ բազմակողմ այլընտրանքային տարբերակներին առավելություն տալն է: Այսպես, օրինակ, նման վերապահումներ են կատարել Դանիան, Գերմանիան, Լիխտենշտեյնը, Լեհաստանը, Ռումինիան և Շվեյցարիան: Իսկ Դանիան, Յունաստանը, Ֆինլանդիան և Շվե-

դիան հայտարարել են, որ ընդունում են պարտադիր արբիտրաժը *vis-a-vis* այն կողմի հետ, որը կատարել է համանման հայտարարություն: Հետաքրքրական է այն հանգամանքը, որ այս Կոնվենցիայի երկու ամենավառ աջակիցները՝ Ֆրանսիան և Գերմանիան չեն կատարել նման հայտարարություն:

Դատարանի *ratione personae* իրավասությունը տարածվում է միայն պետությունների միջև վեճերի վրա: Սահմանափակումը վերաբերում է 1992թ. Կոնվենցիայի մասնակից պետություններին, չնայած այն կարող է տարածվել նաև Կոնվենցիային չմասնակցող, սակայն ԵԱՀԿ մասնակից պետությունների միջև ծագած վեճերի վրա, եթե վեճի կողմ հանդիսացող բոլոր պետությունները փոխհամաձայնության են գալիս: Իրավագրության տարածման նման եղանակը նպատակ է հետապնդում պրակտիկայի միջոցով երրորդ պետություններին դարձնել Կոնվենցիայի մասնակից:

Կարող է հարց առաջանալ, թե արդյոք Կոնվենցիայով նախատեսված այս սահմանափակումները բացարձակ բնույթ են կրում: Փորձենք պատկերացնել հետևյալ հիպոթետիկ իրավիճակը. բանակցություններն արդեն գրեթե հանգեցրել են Ա պետությունում գտնվող ազգային փոքրամասնության իրավունքների պաշտպանության վերաբերյալ համաձայնագրի ընդունմանը: Այդ փոքրամասնության նկատմամբ Ա պետության իշխանությունների հարգանքը պետք է երաշխավորվի Բ-ի և Գ-ի կողմից: Դատարանին հարց է հղվում, թե արդյոք այն կարող է համարվել վերջին ատյան, եթե փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում ծա-

գեն տարածայնություններ: Ո՞րն է լուծու-
մը:

Թվում է, թե առաջին դեպքում որևէ
խնդիր չի առաջանա, քանի որ, ինչպես ար-
դեն նշվեց, Դատարանը քննում է պետու-
թյունների միջև ծագած վեճերը: Հետևաբար,
դատարանն իրավասու չէ քննելու փոքրա-
մասնությունների կողմից ներկայացվող
պահանջների վերաբերյալ վեճերը²: Այս-
տեղից բխում է, որ փոքրամասնություննե-
րին վերաբերող հարցերը Դատարանի ի-
րավասության շրջանակներից դուրս են:
Բացառություն կարող են կազմել այն դեպ-
քերը, երբ հիշատակված իրավիճակում
տարածքային պետության դեմ հայց է հա-
րուցվում երաշխավոր Բ և Գ պետություն-
ների կողմից:

Ինչպես արդեն ընդգծեցինք, Դատարանը
կարող է քննել վեճեր միայն ԵԱՀԿ ան-
դամ պետությունների միջև, եթե դրանցից
գոնե մեկը Կոնվենցիայի մասնակից է: Այս
դեպքում մի փոքր փոփոխենք հիպոթետիկ
գործի բնույթը փոքրամասնությունների
կոնվենցիայի մասնակից են երեք պետու-
թյուններ՝ Ա, Բ և Գ, որոնցից միայն Գ-ն է ան-
դամագրվել 1992 թ. Կոնվենցիային: Եթե
փոքրամասնությանն առնչվող հարցը պայ-
մանագրի հիման վրա դրվեր Դատարանի
առջև Գ-ի կամ Բ-ի և Գ-ի կողմից միաժամա-
նակ, ապա խնդիր չէր առաջանա, քանի որ
փոքրամասնության վերաբերյալ պայմա-
նագրի կողմերից մեկը՝ Գ-ն, միաժամանակ
հանդիսանում է նաև Ստոկհոլմի Կոնվեն-
ցիայի կողմ: Սակայն ինչպիսի՞ն կլիներ ի-
րադրությունը, եթե հարցը բարձրացվեր
միայն Բ-ի կողմից: Այս դեպքում, երբ կող-
մերից և ոչ մեկը Կոնվենցիայի մասնակից
չէ, Կոնվենցիայի հողվածներ 20-ի 2-րդ մա-
սի և 26-ի 1-ին մասի տառին համաձայն՝
այն դուրս է մնում հաշտարարության և ար-
բիտրաժի ընացակարգի շրջանակներից:
Այլ կերպ ասած՝ Դատարանը, հենց իր հիմ-
նադիր փաստաթղթի համաձայն, չունի
ratione personae իրավազորություն՝ չնա-
յած այն հանգամանքին, որ բոլոր պետու-
թյունները ԵԱՀԿ անդամներ են, և որոնք այդ
գործը հանձնել են դատարանին փոքրա-
մասնության վերաբերյալ պայմանագրի

հիման վրա: Նման իրավիճակում կարելի է
այլ լուծում գտնել: Խնդիրն այն է, որ պե-
տությունները փաստորեն տվել են իրենց
համաձայնությունը կոնկրետ դատական
մարմնի իրավազորության առնչությամբ,
սակայն զուտ այն պարզ պատճառով, որ
Դատարանի հիմնադիր փաստաթղթում
նախատեսված է սահմանափակում: Այլ
կերպ ասած՝ եթե վեճի կողմ հանդիսացող
պետությունները ձեռք են բերել համաձայ-
նություն, ապա արդյոք Դատարանը չի կա-
րող այդ գործը ընդունել՝ հաշվի առնելով
նաև այն հանգամանքը, որ այդ պետու-
թյունները ԵԱՀԿ անդամն են³:

Հաջորդ խնդիրը, որ Դատարանի առջև
կարող է ծագել, *ratione materiae* իրավազոր-
ության հարցի լուծումն է: Դատարանի ի-
րավազորության այս սկզբունքի շրջանակ-
ները կանխորոշելու և հստակեցնելու նպա-
տակով 1992 թ. ժնևյան հանդիպման ժա-
մանակ Միացյալ Թագավորությունը առա-
ջարկեց սահմանափակել Դատարանի ա-
ռարկայական իրավազորությունը՝ համա-
ձայն Վալետտայի Փաստաթղթում ամ-
րագրված դրույթների: Սա ենթադրում էր,
որ պետությունները պետք է հրաժարվեն
Դատարանին տարածքային ամբողջակա-
նության կամ ինքնիշխանության, ազգային
ինքնորոշման կամ տարածքների նկատ-
մամբ իրավասությունների վերաբերյալ
հայցեր ներկայացնելուց⁴: Եթե այս ամենը
Դատարանը քններ, ապա հաշտարարու-
թյան ընթացակարգը կվերածեր անօգուտ
մեխանիզմի:

Ratione materiae իրավազորության
առնչությամբ անհրաժեշտ է ընգծել այն
հանգամանքը, որ արբիտրաժը ոչ պար-
տադիր ընթացակարգ է, որը հիմնված է վե-
ճի կողմ հանդիսացող պետությունների
համաձայնության վրա: Դա կարող է տեղի
ունենալ պետությունների միջև ձեռք բեր-
ված համաձայնությամբ կամ պետություն-
ների միակողմանի հայտարարության հի-
ման վրա ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի
Ստատուտի հոդվ. 38-ի վրա հիմնված մոդելի
ձևաչափով: Անհրաժեշտ է հիշատակել
այս մոդելից մեկ բացառություն. համա-
ձայն 1992թ. Կոնվենցիայի՝ համապատաս-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՔՈՆ

խան արբիտրաժի ընդունմանը առնչվող հայտարարությունների հետ կատարվող վերապահումները թույլատրելի են միայն այն հարցերի վերաբերյալ, որոնց առնչությամբ Մեծ Բրիտանիան ձգտում էր վերապահում կատարելու հնարավորություն ստանալ հաշտարարության բնագավառում (տարածքային ամբողջականություն, ինքնապաշտպանություն, ծովային և ցամաքային տարածությունների վերաբերյալ միմյանց հակասող հայցապահանջներ): Յետևաբար, եթե փորձենք եզրակացնել վերը ասվածը, ապա կստացվի, որ *ratione materiae* սահմանափակումը վերաբերում է ոչ թե ժնևի դատարանի իրավագործությանը, այլ պետությունների՝ այդ դատարանի իրավագործությունից վերապահումներ կատարելուն:

Իրավագործությանն առնչվող կարևորագույն հարցերից է ենթակայության հիմնախնդիրը: Նախ, ենթակայության սկզբունքն իր ամրագրումն է գտել 1992 թ. Կոնվենցիայում, համաձայն որի անդամ պետությունները «նպատակ չեն հետապնդում որևէ կերպ նվազեցնել գոյություն ունեցող այլ կառուցակարգերը և ինտիտուցիաները՝ ներառյալ ՄԱԿ-ի Միջազգային Դատարանը»: Քանի որ այս տեքստն իր ամրագրումն է գտել նախաբանում, ապա ակնհայտ է, որ այն չի կարող կոնվենցիայի նորմատիվ մասի բաղկացուցիչ մաս կազմել: Այնինչ այն Կոնվենցիայի բաղկացուցիչ մաս է հանդիսանում: Այս ամենը նշանակում է, որ եթե պետությունները ՄԱԿ-ի Դատարանի Ստատուտի հոդված 36(2)-ի հիման վրա կատարած համապատասխան հայտարարությունները գերակա կլինեն 1992 թ. Կոնվենցիայով նախատեսված միջոցների նկատմամբ:

Ենթակայության հիմնախնդիրն ուշադրության է արժանացել նաև Ստոկհոլմի Կոնվենցիայի 19-րդ հոդվածում, որտեղ նախատեսված են երեք իրավիճակներ, որոնց առկայության դեպքում Կոնվենցիայով նախատեսված ընթացակարգերը

պետք է զիջեն այլ մեխանիզմների՝ 1. եթե Կոնվենցիայով չնախատեսված վեճն արդեն քննվում է հաշտարարների խմբի կամ արբիտրաժի կողմից; 2. եթե Կոնվենցիայի շրջանակներում հաշտության կամ արբիտրաժի ընթացակարգ սկսելու պահին կողմերը իրենց համաձայնությունը տվել են արդեն վեճերի խաղաղ կարգավորման այլ ընթացակարգի, նույնիսկ եթե կայացվելիք որոշումը պարտադիր չէ կողմերի համար; 3. եթե կողմերից մեկը գործի է դրել Կոնվենցիայով նախատեսված հաշտության ընթացակարգը, և եթե միաժամանակ կամ ավելի ուշ մյուս կողմը ներկայացնում է Կոնվենցիայով չնախատեսված գործը դատարանի կամ տրիբունալի: Փորձենք համառոտ քննարկել այս դրույթի բովանդակությունը:

Եթե խոսքը հոդված 19-ի մասին է, ապա ակնհայտ է, որ այս դրույթի հիմքը և տրամաբանությունը կողմերի կամքերի ինքնավարությունն է, ինչպես նաև վեճը այլ դատական ատյանում քննվելու հանգամանքը: Բացի այդ, այստեղ նաև հաշվի է առնված այն հանգամանքը, որ ավելի արդյունավետ միջոցներին պետք է առավելություն տրվի: Եվ իրոք, եթե դիտարկենք ասվածը ՄԱԿ-ի Միջազգային դատարանի օրինակով, ապա լիովին ակնհայտ է, որ ՄԱԿ-ի դատարանը վեճն առավել արդյունավետ կլուծի լույս այն պարզ պատճառով, որ Դատարանի որոշումները պարտադիր են վեճի կողմերի համար: Գործի քննությունը դատական այլ ատյանի հասցնելու նախադեպը հայտնի է արդի միջազգային իրավունքին⁶: Վերջինիս իմաստն այն է, որ եթե գործը քննում է այլ դատական ատյան, ապա Դատարանը պետք է հրաժարվի իր իրավագործությունն իրականացնելուց: Պարզ է, որ խնդիրը դատական այլ ատյանում քննելու վերաբերյալ կողմերի համաձայնությունը գործում է լիովին կամքերի ինքնավարության սկզբունքի հիման վրա:

Մեր կարծիքով, հոդված 19-ը ոչ լիարժեք է, քանի որ երկու խնդիր մնում է անորոշ. Նախ, հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ 1992 թ.-ի Կոնվենցիայի հիման վրա ստեղծված ընթացակարգերը մրցակ-

ցեն երկկողմ կամ բազմակողմ պայմանագրով նախատեսված այլ մեխանիզմների հետ, եթե այդ երկկողմ կամ բազմակողմ պայմանագրում չի հստակեցվում, որ դրանցով սահմանվող միջոցները և ընթացակարգերը կլինեն բացառիկ: Սա իրոք խնդրահարույց է, քանի որ հաշտարարություն կամ արբիտրաժ հիմնող պայմանագրերի մեծամասնությունը չի սահմանում, որ դրանք կկրեն բացառիկ բնույթ: Երկրորդ, հոդված 19-ը պատասխան չի տալիս այն հարցին, թե ինչպես պետք է լուծել 1992թ. Կոնվենցիայով հիմնադրված և վեճերի խաղաղ կարգավորման բնագավառում հետագայում նախատեսվելիք պարտավորությունների միջև առկա հակասությունը, որը կարելի է լուծել ՄԱԿ-ի Կանոնադրության հոդված 103-ի օրինակով՝ նախատեսելով, որ Կոնվենցիայով սահմանված մեխանիզմները կգերակայեն ցանկացած պարտավորության նկատմամբ, որը կվերաբերի վեճերի խաղաղ կարգավորմանը: Սակայն եթե առավել ուշադիր ընթերցենք Կոնվենցիան, ապա կարող ենք փաստել, որ հոդված 19(4)-ը փորձ է կատարում լուծելու այս խնդիրը.

«Պետությունը կարող է Կոնվենցիան ստորագրելիս, վավերացնելիս կամ դրան միանալիս կատարի վերապահում, որպեսզի համապատասխանեցնի սույն կոնվենցիայի հիման վրա ստեղծված վեճերի կարգավորման մեխանիզմը՝ պետության նկատմամբ կիրառելի այլ միջազգային պարտավորություններից բխող վեճերի կարգավորման այլ մեխանիզմների հետ»:

Սակայն, ինչպես արդեն երևում է ձևակերպումից, խոսքը առավելապես գոյություն ունեցող միջազգային պարտավորությունների մասին է: Այս պարագայում կրկին կարծում ենք, որ ճիշտ կլիներ կիրառել ՄԱԿ-ի Կանոնադրության 103-րդ հոդվածի մեխանիզմը: Սակայն հոդվածի ձևակերպումից հնարավոր է մեկ այլ հետևություն կատարել. եթե կողմը չի կատարում նախատեսված վերապահումը, ապա Կոնվենցիայի դրույթները գերակայում են այլ պարտավորությունների նկատմամբ: Հաջորդ կարևոր նկատառումը, որը պետք է

ընգծենք այստեղ, վերաբերում է այն հանգամանքին, որ Կոնվենցիայով ստանձնվելիք պարտավորություններից շեղում՝ հոգուտ միջազգային վեճերը խաղաղ կարգավորելու այլ մեխանիզմների, հնարավոր է միայն վերապահումով, այն է միայն պայմանագիրը ստորագրելիս, վավերացնելիս, դրան միանալիս: Դա իր հերթին նշանակում է, որ եթե պետությունը նշված պահերին չի կատարում համապատասխան բովանդակությամբ վերապահում, ապա նա զրկվում է հետագայում Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից շեղվելուց⁶: Վերջապես, անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ հոդված 19(4)-ի հիման վրա կատարված վերապահումները կրելու են փոխադարձ բնույթ: Օրինակ, ենթադրենք, որ Շվեյցարիան Հունգարիայի դեմ գործ է ներկայացնում Դատարանին հաշտարարության ընթացակարգով քննելու նպատակով: Երկու պետություններն էլ 1992թ. Կոնվենցիայից հետո կնքել են հաշտարարության և արբիտրաժի մասին պայմանագիր⁷: Եթե Շվեյցարիան վերապահում է կատարել Կոնվենցիայի 19(4) հոդվածի հիման վրա՝ ապագայում ծագելիք երկկողմանի պարտավորությունների առնչությամբ, իսկ Հունգարիան՝ ոչ: Փոխադարձության սկզբունքի հիման վրա Հունգարիան կարող է վկայակոչել Շվեյցարիայի կատարած վերապահումը և վիճակրկել Դատարանի իրավագործությունը:

Յոթ պետություն օգտվել են 19(4) հոդվածով ընձեռված հնարավորությունից: Բացառությամբ Ավստրիայի կատարած վերապահման, մնացած բոլոր վերապահումները վերաբերում են գոյություն ունեցող և ապագայում հիմնադրվելիք հաշտարարություններին և արբիտրաժներին: Երկու պետություններ՝ Գերմանիան և Ռումինիան, վերապահում էին կատարել նաև բազմակողմ պայմանագրերի կապակցությամբ: Ռումինիայի կատարած վերապահումն ուներ հետևյալ ձևակերպումը.

«Կիրառելով հոդված 19-ի 4-րդ մասի դրույթները՝ Ռումինիան վերապահում է կատարում՝ համաձայն որի նա ունի օպ-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

ցիայի իրավունք (*right to option*) կիրառել իր կողմից արդեն իսկ կնքված, ինչպես նաև ապագայում կնքվելիք երկկողմ և բազմակողմ պայմանագրերով նախատեսված հաշտարարության և արբիտրաժային մեխանիզմները»:

Կատարված վերապահումից մի հանգամանք ակնհայտ է, որ ցանակացած երկկողմ և բազմակողմ պայմանագիր գերակա է 1992թ. Կոնվենցիայի նկատմամբ: Համանման վերապահում կատարել է նաև Գերմանիան: Դա կարելի է պատճառաբանել այն հանգամանքով, որ ստեղծվեց Ծովային Իրավունքի Միջազգային Տրիբունալը: Ի հակադրություն սրա՝ Դանիայի, Լիխտենշտեյնի, Լեհաստանի և Շվեյցարիայի կատարած մնացած վերապահումները վե-

րաբերում են երկկողմ համաձայնագրերին՝ և՛ նշտական, և՛ *ad hoc* մարմիններին: Այս դեպքում խնդիրն այն է, որ երկկողմ պայմանագրերի հիման վրա ստեղծված մեխանիզմները առավելություն կունենան 1992թ. Կոնվենցիայի կառուցակարգերի հանդեպ, եթե դրանք առնվազն ունեն պարտադիրության նույն աստիճանը, ինչ 1992թ. Կոնվենցիայով նախատեսված միջոցները:

Այսպիսով, եթե ընդհանրացնենք վերը նշվածը, ապա կարելի է եզրակացնել, որ Կոնվենցիայով սահմանված կարագավորման պարտադիր, սակայն միևնույն ժամանակ ճկուն մեխանիզմը նոր փաստաթղթի հիմնական մասն է: Հաշտարարության ընթացակարգը ինքնիշխանության խնդրի վրա սկեռված պետությունների ցանկությունն է, քանի որ այդ եղանակով նրանց ինքնիշխանությունը մնում է առավելագույնս անխաթար:

¹ Նման դրույթ նախատեսված է Հաշտարարության Արբիտրաժի մասին Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 2-րդ մասով:

² Սա ամենևին չի նշանակում, որ նման անհատները կամ կազմակերպությունները չեն կարող պայմանագրի հիման վրա բողոքներ ներկայացնել միջազգային ատյաններին իրենց իշխանությունների դեմ: Նման օրինակ է Դաշնակիցների և Լեհաստանի միջև 1919թ. հունիսի 28-ին կնքված Փոքրամասնությունների վերաբերյալ Կոնվենցիայի հոդված 12-ով սահմանված մեխանիզմը: Առավել մանրամասն տե՛ս F. Capotorti, 'Minorities', in R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, Vol. 8, Amsterdam, 1985, p. 385.

³ Գրեթե համանման իրավիճակ է ստեղծվել միջազգային վարչական տրիբունալների վճիռների առնչությամբ ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի կողմից տրված խորհրդատվական եզրակացությունների կապակցությամբ: Եթե խստորեն ղեկավարվենք ՄԱԿ-ի Դատարանի Ստատուտով, ապա լիովին ակնհայտ է, որ Դատարանը օժտված չէ պարտադիր խորհր-

դատվական եզրակացությունների տալու իրավասությամբ, սակայն ՄԱԿ-ի Դատարանը եզրակացրեց, որ իր՝ պարտադիր բնույթ ունեցող խորհրդատվական եզրակացություններ տալու իրավասությունը բխում է ոչ թե Ստատուտից, այլ միջազգային իրավական պայմանագրերից: Տե՛ս *Advisory Opinion, Judgments of the Administrative Tribunal of the ILO upon Complaints Made against UNESCO*, ICJ Reports 1956, p. 77, 84.

⁴ Վալետտայի Փաստաթուղթ, Բաժին XII:

⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Cafilisch L. (ed.), *The Peaceful Settlement of Disputes between States: Universal and European Perspectives*, Dordrecht 1997, P. 67.

⁶ Չնայած ձևականորեն հնարավոր է, որ պետությունը չեղյալ հայտարարի այդ Կոնվենցիան հոդված 36-ի հիման վրա և այնուհետև դա կրկին վավերացնի՝ արդեն վերապահում կատարելով:

⁷ Խոսքը 1992թ. Դեկտեմբերի 17-ի Հաշտարարության և արբիտրաժի մասին պայմանագրի մասին է:

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մարինե ՕՀԱՆՅԱՆ

ԵՊՀ Սահմանադրական իրավունքի
ամբիոնի հայցորդ

Հանրաքվեի հիմնախնդիրը քննարկելիս անհրաժեշտ է նկատի առնել, որ այն ունի ոչ միայն տեսական, այլև լուրջ գործնական նշանակություն: Իրավական, ժողովրդավարական պետության համար կարևոր բաղադրիչներ են համարվում ոչ միայն ժողովրդավարական ինստիտուտների առկայությունը, այլև դրանց իրական գործողությունը, որի արդյունքում ձևավորվում է քաղաքացիական հասարակություն: Պատահական չէ, որ ցանկացած պետության ժողովրդավարական բնույթը գնահատվում է նրանում առկա քաղաքացիական հասարակության կայացման մակարդակով, որը վերջին հաշվով ձևավորվում է այն ժողովրդավարական ինստիտուտների գործողությամբ, որոնք ապահովում են ժողովրդի իրական մասնակցությունը երկրի կառավարմանը¹: Իսկ այդ ինստիտուտների շարքում հանրաքվեն (համաժողովրդական քվեարկությունը) զբաղեցնում է գլխավոր տեղը: Այդ առնչությամբ տեղին է հիշել մեծն իմաստասեր Է. Կանտի հետևյալ միտքը. «... ինչ-որ ժողովուրդը չի կարող վճռել ինքն իր նկատմամբ, դա չի կարող վճռել նաև օրենսդիրը ժողովրդի նկատմամբ»²:

Հանրաքվեի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում ստացել է սահմանադրաիրավական ամրագրում: Այն իր արտահայտությունն է գտել Հանրապետության Հիմնական օրենքի 2-րդ հոդվածում (2-րդ մաս), որի համաձայն՝ ժողովրդին պատկանող իշխանության բարձրագույն և անմիջական արտահայտությունը հանրաքվեն և ազատ ընտրություններն են: Բացի այդ, Սահմանադրությամբ հանրաքվեին մասնակցելու իրավունքը դասվում է քա-

ղաքացիների հիմնական իրավունքների թվին, որի միջոցով վերջիններս, կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով անմիջականորեն մասնակցում են պետության կառավարմանը (30-րդ հոդ., 1-ին մաս):

Սահմանադրությամբ է որոշվում նաև հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների և հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը (111-րդ հոդ.), իսկ «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով՝ քվեարկության կազմակերպման և անցկացման, ինչպես նաև արդյունքների ամփոփման ու հրապարակման կարգը³:

Սակայն հանրաքվեի մանրամասն սահմանադրաիրավական կարգավորումը դեռևս անվերապահորեն չի երաշխավորում ժողովրդի կողմից իրեն պատկանող իշխանության անմիջական և արդյունավետ իրականացում: Այն պայմանավորված է բազմաթիվ փոխկապակցված գործոններով, ինչպիսիք են՝ հանրաքվեն նախաձեռնող սուբյեկտների կազմը, քվեարկության դրվող հարցերի շրջանակը, հանրապետության քաղաքացիների տեղակայումը, երկրում առկա սոցիալ-քաղաքական իրավիճակը և այլ հանգամանքներ:

Հանրաքվեի ինստիտուտի արդյունավետության հարցում կարևոր դեր ունեն այն **նախաձեռնող սուբյեկտները**: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նման սուբյեկտներ է ճանաչում Հանրապետության Նախագահին և Ազգային ժողովին: Ընդ որում, հանրաքվե նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ (111-րդ հոդ.): Նշված սուբյեկտները հանրաքվե նշանակելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ միայն երկու դեպքում՝ Սահմանադրության ընդունման և դրանում փոփոխություններ կատարելու,

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐԻՈՆ

ինչպես նաև օրենքները հանրաքվեի դնելու դեպքերում (112-րդ հոդ.):

Խնդիրն այն է, որ Սահմանադրության ընդունումը և դրանում փոփոխություններ կատարելը պարտադիր իրականացվում են հանրաքվեի միջոցով: Ինչ վերաբերում է օրենքներին, ապա դրանք կարող են հանրաքվեի դրվել Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով: Դատելով այն բանից, որ Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո անցած մոտ քսան տարիների ընթացքում ոչ մի անգամ որևէ օրենք չի դրվել հանրաքվեի, կարելի է կարծել, որ Հանրապետությունում հանրաքվե նախաձեռնելու սուբյեկտների սահմանված կազմը անարդյունավետ է: Նման եզրահանգման համար հիմք են ծառայում հետևյալ հանգամանքները:

Առաջին, Ազգային ժողովը՝ որպես օրենսդիր մարմին, իր կողմից ընդունված օրենքները հանրաքվեի դնելու որևէ հիմք, պատճառ կամ շահագրգռվածություն չունի: Այդ օրենքների նախագծերը օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների կողմից ներկայացվելուց հետո նախ մանրամասն քննարկվում են Աժ համապատասխան մշտական հանձնաժողովների կողմից, այնուհետև՝ Աժ նիստերում՝ անցնելով երեք ընթերցում, ապա նոր միայն ընդունվում են պատգամավորների ձայների մեծամասնությամբ և ուղարկվում Հանրապետության Նախագահին՝ այն ստորագրելու և հրապարակելու:

Խորհրդարանը, ըստ էության, կարող է օրինագիծը ներկայացնել հանրաքվեի այն դեպքում, եթե Խորհրդարանում առկա քաղաքական ուժերի հարաբերակցության պատճառով համոզված չէ, որ կարող է ընդունել տվյալ օրինագիծը: Սակայն հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը չունի նման խնդիր, քանզի ձևավորված կոալիցիան ունի բացարձակ մեծամասնություն և ցանկացած օրինագիծ

կարող է ընդունել որպես օրենք:

Հետևաբար, նպատակահարմար կլինեն, մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածում ճանաչել օրենքները հանրաքվեի դնելու վերաբերյալ նաև Աժ պատգամավորների որոշակի քանակության, ասենք՝ Աժ պատգամավորների մեկ հինգերորդի իրավունքը: Այդ հանգամանքը կնպաստի, որ Խորհրդարանն ավելի հանգամանակից քննարկի ներկայացված օրինագծերը, ավելի ուշադիր լինի արված դիտողությունների վերաբերյալ, սկանջալուր լինի ամեն մի քաղաքական ուժի, ամեն մի պատգամավորի կողմից արված դիտողություններին ու առաջարկություններին, նախանձախնդիր լինի ընդունվող օրենքների որակական չափանիշներին:

Նման արդյունքների ակնկալիքով առաջարկված կառուցակարգը երկար ժամանակ է, որ կիրառվում է արտասահմանյան տարբեր երկրներում: Այսպես, Իտալիայի՝ 1947թ. դեկտեմբերի 12-ին ընդունված Սահմանադրության 138-րդ հոդվածի (2-րդ մաս) համաձայն՝ Խորհրդարանի կողմից հավանության արժանացած օրենքները դրվում են հանրաքվեի, եթե դրանց հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում դա պահանջում են պալատներից որևէ մեկի պատգամավորների մեկ հինգերորդը կամ 500 հազար ընտրողներ կամ հինգ մարզային Խորհուրդներ: Նման պահանջ նախատեսվում է նաև Ավստրիայի՝ 1920թ., Դանիայի թագավորության՝ 1953թ. սահմանադրություններում⁵ և այլ երկրների հիմնական օրենքներում:

Երկրորդ, Հայաստանում առկա սոցիալ-քաղաքական վիճակը չի նպաստում նաև քննարկվող ոլորտում հանրապետության կառավարության կողմից իր առաքելության իրականացմանը: Մասնավորապես, Սահմանադրությամբ օժտված լինելով օրենքները հանրաքվեի դնելու առաջարկության իրավունքով (112-րդ հոդ.) կառավարությունը անցած մոտ քսան տարիների

ընթացքում ոչ մի անգամ չի օգտվել իր այդ իրավունքից, ինչը, մեր կարծիքով, պայմանավորված է կառավարություն-Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթով: Հարց է առաջանում. ի՞նչու պետք է կառավարությունն առաջարկի հանրաքվեի դնել Ազգային ժողովի հավանությանն արժանացած օրենքի նախագիծը⁶:

Հանրաքվե՞ն՝ որպես ժողովրդաիշխանության անմիջական ինստիտուտ, ըստ էության, չի կարող դիտվել ներկայացուցչական ինստիտուտներից անջատ: Այն (հանրաքվե) մեծամասամբ օգտագործվում է որպես ներկայացուցչական ժողովրդաիշխանության հակակշիռ կամ միջոց, որի օգնությամբ հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտները, շրջանցելով խորհրդարանը, նրա կամքին հակառակ ընդունում են պետական կարևորություն ունեցող որոշումներ: Խնդրի լուծումը ավելի դյուրին է, երբ նախաձեռնության իրավունք ունի կառավարությունը, իսկ հանրաքվե նշանակելու իրավունք՝ պետության գլուխը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նման հնարավորություն է ապահովում կառավարության համար, քանզի երկրի Հիմնական օրենքի 112-րդ հոդվածի համաձայն՝ օրենքները հանրաքվեի են դրվում Ազգային ժողովի կամ կառավարության առաջարկով, իսկ 111-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրաքվե նշանակում է Հանրապետության Նախագահը...»:

Սակայն, կառավարությունը, մեր կարծիքով, կարիք (շահագրգռություն) չունի իր այդ իրավունքից օգտվելու: Խնդիրն այն է, որ հանրապետության գործադիր իշխանության բարձրագույն մարմինն ունի էական դեր Ազգային ժողովի օրենսդրական գործառույթի իրականացման գործում: Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորների հետ միասին օրենսդրական նախաձեռնության իրավունք ունի նաև կա-

ռավարությունը: Սակայն վերջինս այդ գործընթացում պատգամավորի համեմատ ունի առավելություն: Սահմանադրության 75-րդ հոդվածի ուժով կառավարությունն իրավունք ունի սահմանել իր ներկայացրած օրենքների նախագծերի քննարկման հաջորդականությունը և պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն միայն իր համար ընդունելի ուղղումներով: Եթե նկատի ունենանք, որ կառավարությունն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս Ազգային ժողովում ունի մեծամասնություն, ապա պարզ կդառնա, թե ինչու կառավարությունը օրենսդրական գործընթացում կարիք չունի օգտվելու Սահմանադրությամբ իրեն վերապահված այն արտոնությունից, համաձայն որի՝ «Կառավարությունն իր կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը» (75-րդ հոդ., 4-րդ մաս)՝:

Բացի այդ, Հանրապետության օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում կառավարությանը էական ազդեցություն ունենալ նաև պատգամավորների կողմից ԱԺ քննարկմանը ներկայացվող օրինագծերի «ճակատագրի» վրա: Այսպես, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածում նախատեսված կարգով ԱԺ նախագահը պատգամավորների կողմից ներկայացված օրինագիծը ուղարկում է կառավարություն, որը 20-օրյա ժամկետում պետք է դրա վերաբերյալ տա եզրակացություն (1-ին կետ): Կառավարության եզրակացությունն անհրաժեշտության դեպքում ներառում է պետության եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին տվյալներ (3-րդ կետ): Այսինքն, եթե կառավարությունը իր եզրակացության մեջ նշի, որ պատգամավորի կողմից ներկայացված օրենքի նախագիծը նվազեցնում է պետության եկամուտները կամ ավելացնում ծախսերը, ապա հազիվ թե այդ նախագիծն արժանանա Ազգային ժողովի հավանությանը, առավել ևս, եթե նկատի առնենք, որ կառավարությունը վա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

յելում է ԱԺ պատգամավորների մեծամասնության վստահությունը: Ասվածից պարզորոշ հետևում է, որ Ազգային ժողովի օրենսդրական գործունեության մեջ վճռորոշ դերը պատկանում է կառավարությանը⁸, որը ցանկացած ժամանակ հանրապետության օրենսդիր իշխանության մարմնի միջոցով կարող է հասնել ցանկացած բովանդակությամբ օրենքի ընդունմանը: Այդ է վկայում այն հանգամանքը, որ հանրապետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքների ճնշող մեշամասնությունը կազմում է կառավարության կողմից ներկայացված օրինագծերը: Հետևաբար, կառավարությունը որևէ անհրաժեշտություն կամ շահագրգռություն չունի առաջարկելու այս կամ այն օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու:

Երրորդ, Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի ինստիտուտի գործողության արդյունավետ լինելու հանգամանքը մեծ չափով պայմանավորված է նաև նրանով, որ չնայած Սահմանադրությամբ երկիրը հռչակված է իրավական և ժողովրդավարական պետություն (1-ին հոդ.), որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին (2-րդ հոդ.), սակայն ինչպես հանրապետության Հիմնական օրենքով, այնպես էլ «Հանրաքվեի մասին» ՀՀ գործող օրենքով ժողովուրդը չի ճանաչվում հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ: Ծիշտ է, հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը՝ որպես հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտներ, ընտրվում են ժողովրդի կողմից և հանդիսանում են նրաներկայացուցչական մարմինները, սակայն վերջիններս կարող են ունենալ նաև անհատական, կուսակցական, խմբային, գերատեսչական և այլ բնույթի շահեր, որոնք հաճախ կարող են չհամընկնել երկրի ողջ բնակչության շահերի հետ: Հետևաբար, ընտրողներին տրված հանրաքվեի նախաձեռնության իրավունքը հնարավորություն

կընձեռնի բնակչությանը որոշակի խնդիրների լուծման ուղղությամբ, իրացնելու իր քաղաքական և այլ բնույթի շահերը պետական ինստիտուտների կամքին հակառակ⁹: Կարելի է եզրահանգել, որ հենց դա է արտահայտում ժողովրդաիշխանության և ժողովրդավարության բուն բովանդակությունը:

Արտասահմանյան շատ ժողովրդավարական (երբեմն էլ՝ ոչ այնքան ժողովրդավարական) երկրներ վաղուց ի վեր ինչպես սահմանադրությամբ, այնպես էլ ընթացիկ օրենքներում ամրագրել են ժողովրդի՝ հանրաքվեի սուբյեկտ լինելու իրավունքը: Ընդ որում, այդ իրավունքը կարող է դրսևորվել սահմանադրության, օրենքի կամ այլ իրավական ակտի ընդունման, փոփոխման կամ դադարեցման, ինչպես նաև հասարակական կարևորություն ունեցող այլ հիմնախնդրի վերաբերյալ հանրաքվեի նախաձեռնության ձևով: Այսպես, Իտալիայի Հանրապետության՝ 1947թ. Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրաքվե նշանակվում է օրենքի կամ օրենքի ուժ ունեցող ակտի լրիվ կամ մասնակի դադարեցման համար, եթե այդ պահանջում են 500 հազար ընտրողներ կամ հինգ մարզային խորհուրդներ»: Այդ նույն սուբյեկտների պահանջով կարող է հանրաքվեի դրվել նաև սահմանադրական օրենքները և սահմանադրության փոփոխության մասին օրենքները (138-րդ հոդ. 2-րդ մաս): Սակեդոնիայի Հանրապետության՝ 1991թ. Սահմանադրության 73-րդ հոդվածի (3-րդ մաս) համաձայն՝ ժողովը (խորհրդարանը) պարտավոր է նշանակել հանրաքվե 150 հազար ընտրողների պահանջով¹⁰:

Կան երկրներ, որտեղ ժողովրդի՝ հանրաքվեի նախաձեռնության իրավունքը ամրագրվում է ընթացիկ օրենսդրական ակտերով: Այսպես, Հունգարիայում 1989թ. ընդունված ժողովրդական քվեարկության և ժողովրդական նախաձեռնության մասի XVII Օրենքով սահմանված է, որ բացի երկրի Հիմնական օրենքով նախատեսված, հանրապետության Նախագահին վերա-

պահված իրավունքից (§30-ա, 1-ին մաս «ժ» կետ), հանրաքվեի նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև Մինիստրների խորհուրդը, Պետական ժողովի (խորհրդարանի) ոչ պակաս քան 50 պատգամավոր և ոչ պակաս քան 50 հազար ընտրողներ:

Հայաստանի Հանրապետությունում անկախության առաջին տարիներին արտասահմանյան ժողովրդավարական պետությունների օրինակով լայն օրենսդրական աշխատանքներ էր տարվում երկրի ժողովրդավարական հիմքերի ամրակայման ուղղությամբ: Այդ կապակցությամբ ընդունված առաջին կարևորության իրավական ակտերից էր «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1991թ. ապրիլի 2-ին¹¹: Անկախ Հայաստանի Սահմանադրության բացակայության պայմաններում Հանրաքվեի մասին օրենքով հանրաքվեի նախաձեռնության իրավունքի սուբյեկտներ ճանաչվեցին՝ ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և բ) Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը: Ընդ որում, հանրաքվեի անցկացման կապակցությամբ քաղաքացիների նախաձեռնության իրագործման համար պահանջվում էր հավաքել հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների առնվազն երկու հարյուր հազար ստորագրություն (9-րդ հոդ.):

Այդ տարիներին հանրապետությունում արմատավորված պետական ռեժիմը հնարավորություն չէր ընձեռնում քաղաքացիներին օգտվելու իրենց՝ օրենսդրությամբ տրված այդ իրավունքից, որի արդյունքում քաղաքացիների նախաձեռնությամբ որևէ հանրաքվե չի նշանակվել, մինչդեռ դրա (հանրաքվեի պահանջի) համար կային բազմաթիվ առիթներ: Արդյունքում 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեով ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտների թվից ժողովուրդը՝ որպես հանրաքվեի սուբյեկտ,

դուրս մնաց: Սահմանադրությամբ այդպիսի սուբյեկտներ ճանաչվեցին Հանրապետության Նախագահը և Ազգային ժողովը (111-րդ հոդ.), չնայած այդ նույն Սահմանադրությամբ երկիրը հռչակվեց ժողովրդավարական, իրավական պետություն (1-ին հոդ.), և իշխանության միակ սուբյեկտ ճանաչվեց ժողովուրդը, որի կողմից իրեն պատկանող իշխանության իրականացման ձևերի շարքում հիմնական ձևը համարվում էր հանրաքվեն (2-րդ հոդ.):

Ժողովրդաիշխանության իրականացման ժողովրդավարական հիմքերի նման սահմանափակումը հետագա տարիներին երկրի հասարակական կյանքի տարբեր ուղղությունում ծագած հիմնախնդիրների լուծման գործում հանգեցրեց լուրջ հակադրությունների: Հիշենք թեկուզ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից «Հայաստանի Հանրապետության նախագահի 2003թ. մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով» 2003թ. ապրիլի 16-ին ընդունված որոշման կապակցությամբ հանրապետության տարբեր քաղաքական ուժերի միջև ծագած լուրջ խնդրումները: Նկատի առնելով, որ նախագահական ընտրությունների արդյունքներից դժգոհ տարբեր քաղաքական ուժերին հարող բնակչության տարբեր խմբերի միջև կարող էր տեղի ունենալ բախումներ՝ անկանխատեսելի հետևանքներով, Սահմանադրական դատարանը իր որոշման 6-րդ կետում առաջարկում էր ՀՀ նորընտիր Ազգային ժողովին և ՀՀ Նախագահին՝ «Մեկ տարվա ընթացքում «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը¹² ժողովրդավարության և իրավական պետության սկզբունքներին համահունչ համապատասխանեցնել ՀՀ Սահմանադրության 2-րդ՝ փոփոխման ոչ ենթակա հոդվածի առաջին մասի պահանջներին և որպես նախագահական ընտրությունների ընթացքում խորացած հասարակական դիմադրության հաղթահարման արդյունավետ միջոց ընտրել վստահության հանրաքվեի կազմակերպումը»¹³:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ՎԱՐՄՈՆ

Սահմանադրական դատարանի որոշման նշված կետը լուրջ հակասությունների պատճառ դարձավ հանրապետությունում առկա քաղաքական ուժերի շրջանում, որոնք տարբեր մոտեցում ունեին դրա բովանդակության վերաբերյալ: Ընդդիմադիր ուժերը, վկայակոչելով Սահմանադրության 102-րդ հոդվածը (2-րդ մաս), որի համաձայն՝ «Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից», պահանջում էին համապատասխան փոփոխություն մտցնել «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում և անցկացնել հանրապետության նախագահի վերաբերյալ վստահության հանրաքվե: Մինչդեռ իշխանամետ ուժերը, հենվելով ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի վրա, որտեղ թվարկված են Սահմանադրական դատարանի լիազորությունները, պնդում էին, որ Սահմանադրական դատարանը չունի Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության իրավունք, ուստի նրա որոշման բերված կետում արված առաջարկությունն ունի զուտ խորհրդատվական բնույթ¹⁴:

Մեր խնդիրը չէ քննարկել, թե այդ հակասությունները հանրապետության բնակչության շրջանում հակամարտության ինչպիսի ձևերով դրսևորվեցին, ինչ ընթացք ունեցան և ինչ վնասակար հետևանքների հանգեցրին ժողովրդի միասնականության պառակտման առումով: Սակայն հարկ է նշել, որ, այնուամենայնիվ, «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը¹⁵ համայնքի բնակչությանը ճանաչում է հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտ: Մասնավորապես, 7-րդ հոդվածում գրված է. «Տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք, ինչպես նաև տվյալ համայնքի ավագանին և ղեկավարը» (1-ին կետ):

Ստացվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ըստ բնակության տարածքի հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունեն, իսկ միասին՝ հանրապետության մակարդակով, ոչ: Սահմանադրական իրավունքի միջազգային փորձը վկայում է, որ նման իրավիճակ առկա է որոշ արտասահմանյան երկրներում, որը բացառապես պայմանավորված է երկրի դաշնային կառուցվածքով: Այսպես օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում և Կանադայում հանրաքվե անցկացվում է միայն դաշնության սուբյեկտների և վարչական միավորների մակարդակով: Իսկ Հայաստանի Հանրապետությունը պարզ (ունիտար) պետություն է, կազմված է միայն վարչական միավորներից: Ուստի Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հանրաքվեի միջոցով իրենց համապետական շահերի լուծման իրավունքից զրկելը մարդու իրավունքների սահմանափակում է ոչնչով չհիմնավորված: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածի (որն իշխանության միակ սուբյեկտի դերում ճանաչում է ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է ամենից առաջ հանրաքվեի միջոցով) և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի (որը ժողովրդին չի ճանաչում հանրաքվեի նախաձեռնության իրավունքի սուբյեկտ) միջև առկա հակասությունը վերացնելու համար նպատակահարմար է, մեր կարծիքով, փոփոխություն կատարել «Հանրաքվեի մասին» գործող օրենքում՝ վերականգնելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ հանրաքվեի նախաձեռնության սուբյեկտի իրավունքը: Կասկածից դուրս է, որ առանց այդ իրավունքի գործողության ժողովրդաիշխանության մասին անգամ սահմանադրական ամրագրման դեպքում այն դառնում է ավելի քան անիրական:

Այդ խնդրի լուծումից հետո հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ քաղաքացիների կողմից հանրաքվեի նախաձեռնության իրավունքի ի-

րականացման համար 1991թ. «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով պահանջվող 200 հազար քաղաքացիների ստորագրությունը չափից ավելի մեծ թիվ է մոտ 3 միլիոն բնակիչ ունեցող երկրի համար: Հիշենք թեկուզ, որ Խտալիայում այդ իրավունքի իրականացման համար պահանջվում է 150 հա-

զար, Ավստրիայում և Շվեյցարիայում՝ 100 հազար ընտրողների ստորագրություն: Ուստի նպատակահարմար է Հայաստանի Հանրապետությունում այդ խնդրի լուծման համար օրենսդրությամբ սահմանել ոչ ավելի, քան 100 հազար քաղաքացիների ստորագրության առկայություն:

¹ Մանրամասն տես Խաչատրյան Հ. Քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, Երևան, 1995:

² Մեքերունյան ըստ Галанза П. Н. Учение Канта о государстве и праве, М., 1960, էջ 137:

³ Տես Օրենքի համապատասխանաբար 7-րդ և 8-րդ գլուխները:

⁴ Տես Конституции государств Европейского Союза, էջ 447:

⁵ Ավստրիայի Սահմանադրության 44-րդ հոդվածի (3-րդ մաս) համաձայն՝ Խորհրդարանի Ազգային խորհրդի կամ Դաշնային խորհրդի պատգամավորների մեկ երրորդի պահանջով կարող է հանրաքվեի դրվել Հիմնական օրենքի փոփոխությունները: Իսկ Դանիայի Թագավորության Սահմանադրության 42-րդ հոդվածի (1-ին մաս) համաձայն՝ «Եթե օրինագիծն ընդունվել է Ֆոլկետինգի (խորհրդարանի) կողմից, ապա պատգամավորների մեկ երրորդը, ոչ պակաս քան երեքշաբթյա ժամկետում, կարող է դիմել Ֆոլկետինգի նախագահին օրինագծի կապակցությամբ հանրաքվե անցկացնելու պահանջով»: Տես նույն տեղը, համապատասխանաբար էջ 37 և 307:

⁶ Հանրաքվեի դրվելիք օրենքների նախագծերի քննարկման ընթացակարգը ամրագրված է ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 9-րդ գլխում, որի 74-րդ հոդվածի (2-րդ կետ) համաձայն՝ «Օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու առաջարկ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու իրավունք ունեն պատգամավորը և կառավարությունը», ընդ որում, «...օրենքի ընդունման հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշումներն ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Տես «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքը

(21.03. 2002 ՀՕ-308) 30. 07. 2002 ՀՕ-404, 18.01. 2005 ՀՕ-69 և 26.02.2007 ՀՕ-111-ն փոփոխություններով և լրացումներով:

⁷ Տես Վ. Այվազյան, Ազգային ժողով-կառավարություն փոխհարաբերությունները սահմանադրական բարեփոխումների համատեքստում: ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի հիմնադրման 75-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու (27-28 նոյեմբերի 2008թ.), Երևան, 2008, էջ 180:

⁸ Տես նույն տեղը, էջ 181:

⁹ Տես Конституционное (государственное) право зарубежных стран в 4-х томах (отв. ред. проф. Б.А. Страшун). Т. 2, М., 1995, էջ 85:

¹⁰ Տես Конституции государств Европы: В 3-х томах. Т. 2, М., 2001, էջ 446: Ավստրիայի Սահմանադրությամբ պահանջվում է 100 հազար ընտրողների նախածեռնություն, Իսպանիայի՝ 1978թ. Սահմանադրությամբ՝ 500 հազար, Շվեյցարիայի Սահմանադրությամբ՝ 100 հազար և այլն:

¹¹ Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995թթ.), Երևան, 1995, էջ 119-130:

¹² Խոսքը վերաբերում էր 2001թ. սեպտեմբերի 12-ին ընդունված «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքին, որտեղ նույնպես ժողովուրդը չի համարվում հանրաքվեի նախածեռնության սուբյեկտ:

¹³ Տես «Սահմանադրական դատարանի տեղեկագիր», N 3/28, 2003, էջ 76-95:

¹⁴ Մանրամասն տես Ն. Ա. Այվազյան, Ա. Ն. Այվազյան, Սահմանադրության էությունը և բովանդակությունը, Երևան, 2005, էջ 161-164:

¹⁵ Ընդունվել է 2002թ. փետրվարի 6-ին, ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 7-ին:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ****Էմիլ ԱՄԻՐՍԱՆՅԱՆ**

ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի խորհրդակալ, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

Ապրանքային նշանը պայմանանշան է, որը կոչված է անհատականացնելու տնտեսավարող կոնկրետ սուբյեկտի ապրանքները և ծառայությունները, սպառողին կողմնորոշելու այդ ապրանքները արտադրող սուբյեկտի հարցում, ինչպես նաև՝ տարբերակելու այդ ապրանքները մրցակից սուբյեկտների ապրանքներից¹:

Ապրանքային նշանների բնագավառում առկա միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, որպես կանոն, որևէ երկրի օրենսդրությամբ ապրանքային նշանի հասկացությունը չի սահմանվում: Այնպիսի երկրներում, ինչպիսիք են, օրինակ, Ֆրանսիան, Իսպանիան, Շվեյցարիան, Ավտրիան, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան, առավել հաճախ սոսկ նախատեսվում են այն պարտադիր պահանջները, որոնցով պետք է օժտված լինի ապրանքային նշանը:

Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի համապատասխան ոլորտը կարգավորող օրենքի համաձայն՝ ապրանքային նշան են համարվում բոլոր այն նշանները, որոնք որևէ անձի ապրանքները և ծառայությունները այլ անձանց ապրանքներից և ծառայություններից տարբերակելու գործառույթ են կատարում²: ԱՄՆ-ի օրենսդրության համաձայն՝ ապրանքային նշան է համարվում ցանկացած բառ, անուն, պայմանանշան կամ այլ նշան կամ դրանց համակցություն

նը, որոնք արտադրողը կամ վաճառողը ընդունել և օգտագործվում է իր ապրանքների անհատականացման և դրանք այլ արտադրողների կամ վաճառողների նույնատիպ ապրանքներից տարբերակման համար³:

Բացառությունների շարքում չէ նաև ՀՀ օրենսդրությամբ որդեգրված մոտեցումը: Այսպես, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի առաջին մասի, ինչպես նաև «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների» մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) առաջին հոդվածի՝ ապրանքային և սպասարկման նշանները այն նշաններն են, որոնցով որևէ անձի ապրանքները և ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից⁴:

Վերոնշյալից հետևում է, որ ապրանքային նշանը պայմանանշան է, որը օգտագործվում է որևէ անձի ապրանքների կամ ծառայությունների վրա՝ դրանց անհատականացման նպատակով:

Այսինքն՝ ապրանքային նշանի վերոնշյալ բնորոշումը սահմանում է.

1. Ապրանքային նշանի նշանակությունը, այն է՝ պայմանանշան, որը օգտագործվում է անձի ապրանքների և ծառայությունների վրա:

2. Ապրանքային նշանի գործառույթը, այն է՝ պայմանանշան, որը նպատակ է հետապնդում տարբերակելու մեկ անձի ապրանքները և ծառայությունները այլ անձանց նույնատիպ ապրանքներից և ծառայություններից:

Օրենքով տրված հասկացությամբ, ըստ էության, տրվում է ապրանքային նշանի

հիմնական բնորոշիչ հատկանիշները: Այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ և քննարկման առարկա դարձնել ապրանքային նշանի վերոնշյալ բնորոշմանը վերաբերող մի շարք խնդրահարույց հարցադրումներ:

Մասնավորապես, հարկ ենք համարում անդրադառնալ Օրենքում օգտագործված «այլ անձանց **նույնատիպ** ապրանքներից և ծառայություններից» արտահայտությամբ: Ապրանքային նշանների նման բնորոշումից հետևում է, որ ապրանքային նշանի տարբերակիչ գործառնություն գործում է միայն նույնատիպ ապրանքների անհատականացման դեպքում, որից կարելի է եզրահանգել, որ եթե որևէ տնտեսվարող սուբյեկտ օգտագործի մեկ այլ անձին պատկանող ապրանքային նշանը իր այն ապրանքների կամ ծառայությունների անհատականացման համար, որոնք **նույնատիպ** չեն այն ապրանքներին, որոնց համար գրանցվել է համապատասխան ապրանքային նշանը, ապա այդ հանգամանքը չի կարող որակվել որպես անձի ապրանքային նշանի նկատմամբ ունեցած իրավունքների խախտում:

Մինչդեռ, նման մոտեցումը հակասում է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով անրագրված՝ հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանությանը նվիրված դրույթներին: Մասնավորապես, կարևորելով հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանության խնդրի արդիականությունը և առանձնահատուկ մեխանիզմների սահմանման անհրաժեշտությունը՝ արգելվում է հանրահայտ ապրանքային նշանի օգտագործումը նաև այն դեպքերում, եթե դա օգտագործվում է նույնիսկ ոչ նույնատիպ ապրանքների համար:

Մասնավորապես, Հանրահայտ ապրանքային նշանների պաշտպանությանը նվիրված Մտավոր սեփականության իրավունքի առևտրի հետ առնչվող հարցերի մասին համաձայնագրի 16-րդ հոդվածի 2-

րդ մասը, որով լրացվում է Փարիզյան կոնվենցիայի 6bis հոդվածը, հանրահայտ ապրանքային նշաններին տրամադրում է լրացուցիչ պաշտպանություն: Վերոնշյալ համաձայնագրով պաշտպանության տակ է առնվել նաև հանրահայտ ճանաչված ապրանքային նշանը այն դեպքերի համար, երբ դա օգտագործվում է **ոչ նույնատիպ** ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների և հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրել՝ պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Վերոնշյալ համաձայնագրով նախատեսված սկզբունքն իր արտացոլումն է գտել նաև Օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով, համաձայն որի՝ արգելվում է առևտրային գործունեության ընթացքում օգտագործել որևէ նշան, որը Հայաստանի Հանրապետությունում որոշակի ապրանքների նկատմամբ հանրահայտ ճանաչված ապրանքային նշանի վերարտադրությունը, նմանակումը կամ թարգմանությունն է և շփոթելու աստիճանի նման է այդ նշանին, եթե առանց դրա սեփականատիրոջ թույլտվության օգտագործումն իրականացվում է՝

– նույն կամ նույնատիպ ապրանքների նկատմամբ

– **ոչ նույնատիպ** ապրանքների նկատմամբ, ինչը մոլորեցնելով ստիպում է այդ ապրանքների և հանրահայտ ապրանքային նշանի սեփականատիրոջ միջև կապ ենթադրել, պայմանով, որ այդպիսի օգտագործումը կարող է վնաս հասցնել վերջինիս շահերին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարելի է եզրահանգել, որ Օրենքով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով տրված ապրանքային նշանի բնորոշումը հակասում է նույն օրենքով և ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով սահմանված սկզբունքներին: Հետևաբար, առաջարկում

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

ենք փոփոխել Օրենքի առաջին հոդվածը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի առաջին մասը՝ տեքստից հանելով **«նույնատիպ»** բառը:

- Մի շարք տեսաբաններ արտահայտել են կարծիք այն մասին, որ նշանը կարող է համարվել ապրանքային նշան միայն այն դեպքում, երբ այն օրենքով սահմանված կարգով գրանցված է⁶: Այսինքն՝ այստեղից բխում է, որ այն նշանները, որոնք սահմանված կարգով գրանցված չեն, չեն կարող որակվել որպես ապրանքային նշաններ:

Մինչդեռ հարկ ենք համարում արձանագրել, որ վերոնշյալ կարծիքի իրավաչափությունը պարզելու համար պետք է միմյանցից տարանջատել իրարից միանգամայն տարբերվող երկու հարցադրում.

1. Ո՞ր նշանները կարող են համարվել ապրանքային նշաներ:

2. Ո՞րն է ապրանքային նշանի գրանցման իրավական հետևանքը:

Ինչ վերաբերում է առաջին հարցին, ապա միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ապրանքային նշանին ներկայացվող հիմնական պահանջներն են՝

1. Ապրանքային նշանը պետք է լինի տարբերակվող (զանազանելի)

2. Ապրանքային նշանը պետք է ներկայացված լինի գրաֆիկական պատկերի ձևով

3. Ապրանքային նշանը պետք է լինի օրինական (պայմանաճանձնի՝ որպես ապրանքային նշանի օգտագործումը չպետք է արգելված լինի օրենքով)

4. Ապրանքային նշանը պետք է ազատ լինի երրորդ անձանց իրավունքներից:

Վերոնշյալ պահանջները ամբողջությամբ արտացոլում են ապրանքային նշանին ներկայացված պահանջները և բավարար են ապրանքային նշանի՝ որպես ապրանքների և ծառայությունների անհատա-

կանացման միջոցի առջև ծառայած խնդիրների իրագործման համար:

Ինչ վերաբերում է ապրանքային նշանների գրանցմանը և դրա հետևանքներին, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 2-րդ մասի և Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ապրանքային նշանին իրավական պահպանություն տրամադրվում է նույն օրենքով սահմանված կարգով դրա պետական գրանցման կամ օրենքի համաձայն ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում հանրահայտ ճանաչելու հիման վրա կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ուժով: Իսկ նույն օրենքի 4-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքը ծագում է դրան իրավական պահպանություն տրամադրելու պահից և պատկանում է դրա սեփականատիրոջը:

Վերոնշյալ հոդվածից հետևում է, որ ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի առաջացման պարտադիր պայման է դրա գրանցումը համապատասխան պետական լիազոր մարմնում⁶: Մինչդեռ, այս կանոնից բացառություն է նախատեսվում Հայաստանի Հանրապետության՝ վերոնշյալ օրենքին և միջազգային պայմանագրերին համապատասխան հանրահայտ ճանաչված ապրանքային նշանների համար:

Այսինքն՝ ապրանքային նշանի գրանցումը ոչ թե դրա առկայության պարտադիր հատկանիշ է, այլև այն պաշտպանելու արդյունավետության միջոց (բայց ոչ պարտադիր, քանի որ նույնիսկ նման գրանցման բացակայության պայմաններում որոշակի ժամանակահատվածում դրա օգտագործման ուժով նրան տրամադրվում է իրավական պահպանություն (Փարիզյան կոնվենցիա, 6bis հոդված)):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ոչ իրավացի ենք համարում Ա.Պ.Սերգեևի հայտ-

նած կարծիքը, թե ապրանքային նշանի գրանցումը ապրանքային նշանին ներկայացվող պարտադիր հատկանիշ է, քանի որ ապրանքային նշանը (նշան, որը համապատասխանում է օրենքով նախատեսված պահանջներին) կարող է գոյություն ունենալ և նույնիսկ պաշտպանության առարկա լինել գրանցման բացակայության պայմաններում: Նշանի գրանցված լինելը չի կարող դիտվել որպես ապրանքային նշանի առկայության նախապայման: Այս դեպքում ապրանքային նշանի առկայության և դրա գրանցման միջև պատճառահետևանքային կապը բացակայում է: Այսինքն՝ չգրանցված ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները շարունակում են իրենց գոյությունը և որոշ դեպքերում նաև գերակա են գրանցված ապրանքային նշանի նկատմամբ ունեցած իրավունքներին⁷:

Մեր դիրքորոշումը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ մինչև 14.03.2000 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ապրանքային նշան է համարվում գրանցված նշանը: Մինչդեռ 17.02.2000 թվականի ՀՕ-29 ՀՀ օրենքով կատարված փոփոխությամբ ապրանքային նշանի օրենսդրական սահմանումից իրավացիորեն հանվել է գրանցված լինելու պահանջը:

Համաշխարհային պրակտիկայում ուշադրության է արժանանում ապրանքային նշանի մեկ այլ բնորոշում, համաձայն որի՝ ապրանքային նշանը պայմանանշան է, որը կոչված է **բնութագրելու** տնտեսվարող կոնկրետ սուբյեկտի ապրանքները և ծառայությունները, սպառողին կողմնորոշելու այդ ապրանքները արտադրող սուբյեկտի հարցում, ինչպես նաև տարբերակելու այդ ապրանքները մրցակից սուբյեկտների ապրանքներից⁸:

Ապրանքային նշանի վերոնշյալ բնորոշմամբ, բացի ապրանքային նշանի հիմնական գործառնության (տարբերակիչ) անդ-

րադարձ կատարելուց, նշվում է նաև մեկ այլ հատկանիշ, ինչպիսին է ապրանքային նշանի բնութագրիչ դերը: Հարց է ծագում. արդյո՞ք ապրանքային նշանը իրականում ունի բնութագրիչ դերակատարություն: Ի՞նչ ենք հասկանում՝ ասելով *«կոչված է բնութագրելու կոնկրետ տնտեսվարող սուբյեկտի ապրանքը»*: Գտնում ենք, որ վերոնշյալ հասկացությունից կարելի է հանգել սխալ եզրակացության, որ ապրանքային նշանը տալիս է այն ապրանքի բնութագրիչ հատկանիշների նկարագրությունը, որոնց անհատականացման համար այն օգտագործվում է:

Կարծում ենք, որ ապրանքային նշանի հասկացության նման ձևակերպումը սխալ է և հակասում է ոչ միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ նաև միջազգային փաստաթղթերով որդեգրած մոտեցումներին: Մասնավորապես, խոսքը ապրանքային նշանի հիմնական գործառնության, այն է՝ տարբերակիչ գործառնության մասին է, որի հիմնական պահանջն է, որ այդ նշանը լինի անկախ այն օբյեկտից (ապրանք կամ ծառայություն), որի տարբերակման համար այն օգտագործվում է: Այսինքն՝ պայմանանշանը չպետք է նշում պարունակի ապրանքի տեսակի, որակի, քանակի, հատկությունների, ստեղծման նպատակի մասին կամ ներկայացնի ապրանքի արտաքին ձևը: Ապրանքային նշանը պետք է պարունակի ապրանքի վերոնշյալ հատկություններից օտար, հավելյալ տարր, որով այն կարող է առանձնանալ նույն կամ նույնատիպ մյուս ապրանքներից: Նման մոտեցում է որդեգրվել նաև ՀՀ օրենսդրությամբ: Մասնավորապես, Օրենքի 11-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չեն այն նշանները, որոնք չունեն տարբերակվող հատկություն կամ բաղկացած են միայն այնպիսի տարրերից, որոնք՝

1. համընդհանուր օգտագործման մեջ են մտել որպես որոշակի տեսակի ապ-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

րանքներ բնորոշող նշաններ,

2. համընդհանուր ճանաչում ստացած տերմիններ են,

3. նշում են ապրանքի տեսակը, որակը, քանակը, հատկությունները, արժեքը, ստեղծման նպատակը, ինչպես նաև ապրանքի արտադրության և իրացման տեղն ու ժամանակը,

4. բացառապես ներկայացնում են ապրանքի արտաքին ձևը, որը բխում է զուտ ապրանքի բնույթից, անհրաժեշտ է որևէ տեխնիկական արդյունքի հասնելու համար և բնորոշում է ապրանքի նշանակությունը, ապրանքին տալիս է էական արժեք:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ աշխարհի շատ երկրների օրենսդրությամբ որդեգրվել է գրեթե նույն մոտեցումը ապրանքային նշանների բնորոշման հարցում, մինչդեռ հարկ ենք համարում արձանագրել, որ ապրանքային նշանի այդ բոլոր բնորոշումները կարող է թերի լինել, եթե չխոսենք ապրանքային նշանի այնպիսի պարտադիր տարրի մասին, ինչպիսին դրա արժեքն է:

Փաստորեն, ապրանքային նշանները որակի և գործարար համբավի սիմվոլներ (պայմանանշաններ) են, որոնց արժեքը ժամանակի ընթացքում օգտագործելու, գովազդելու և ապրանքների վաճառքի ծավալները մեծացնելուն զուգընթաց՝ ավելանում է⁹:

Ապրանքային նշանի արտաքին ընկալումը որպես սուբյեկտիվ հոգեբանական գործոն գերակա է, ինչը հիմնավորվում է մի շարք առաջատար ընկերությունների ապրանքային նշանների արժեքով, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ նյութական ակտիվի այս տեսակը իր արժեքով շատ դեպքերում տասնյակ անգամ գերազանցում է ընկերության մնացած ակտիվներին: Այսինքն՝ ապրանքային նշանը

ոչ միայն նշան է, որը օգտագործվում է մեկ անձի ապրանքներն ու ծառայությունները մեկ այլ անձի նույնանման ապրանքներից և ծառայություններից տարբերակելու համար, այլ նաև նշան է, որն ուղղված է տարբերակելու և անհատականացնելու այն ապրանքի կամ ծառայության «գործարար համբավը» (գուղվիլ), որի անհատականացման համար այն օգտագործվում է:

Ի՞նչ է իրենից ներկայացնում ապրանքային նշանի «գործարար համբավը»: Այս հասկացության ամենահաջող բնորոշումը տրվել է Լորդ Սաքսնագթենը. «*Գործարար համբավը մի հասկացություն է, որը շատ հեշտ է բնութագրել և շատ դժվար է սահմանել: Դա բիզնեսի բարի անվան, համբավի օգուտն է, դա գայթակղիչ ուժ է, որը գոյանում է սովորույթի շնորհիվ*»¹⁰:

Այսինքն՝ գուղվիլը, անհատական որակական հատկանիշների և բիզնեսի տարրերի միավորված ամբողջականություն լինելով, անտեսալիորեն ուղղորդում է պոտենցիալ հաճախորդին, գնորդին կամ պատվիրատուին՝ մղելով նրան սկսելու կամ շարունակելու օգտվել տվյալ ընկերության կամ անձի ծառայություններից, որի արդյունքում ընկերությունները ստանում է առավել շահույթ, քան այն, որը նախատեսված էր՝ հաշվի առնելով նյութական և ոչ նյութական ակտիվները¹¹:

Ապրանքային նշանի հասկացությանը անդրադարձ է կատարել նաև Տ.Կ.Բարսեղյանը: Վերջինիս կարծիքի համաձայն՝ ապրանքային նշանն իրենից պետք է ներկայացնի ապրանքի (աշխատանքների) հատկանիշների հետ կապ չունեցող, ապրանքը որպես սպառման առարկա չբնութագրող պայմանանշան, որը ապրանքի (նրա փաթեթի, ուղեկցող փաստաթղթերի վրա կամ այլ տեղ) վրա տեղակայելով՝ արտադրողը և (կամ) վաճառողն իր արտադրանքն անհատականացնում և առանձնացնում է մանատիպ այլ ապրանքներից¹²:

Այսպիսով, միանալով Տ.Կ.Բարսեղյանի

կողմից ապրանքային նշանին վերաբերող հարցադրումներին, հաշվի առնելով Օրենքով նախատեսված բնորոշման վերոնշյալ թերությունները, ինչպես նաև կարևորելով ապրանքային նշանը գործարար համբավի սիմվոլ լինելու հանգամանքը՝ նպատակահարմար ենք համարում կատարել փոփոխություն ՅՅ քաղաքացիական օրենսգրքի 1171-րդ հոդվածի առաջին մասում, ինչպես նաև Օրենքի առաջին հոդվածում և ապրանքային նշանի համար սահմանել

հետևյալ բնորոշումը.

Ապրանքային նշանը պայմանանշան է, որը կոչված է տարբերակելու տնտեսվարող կոնկրետ սուբյեկտի ապրանքները և ծառայությունները, ինչպես նաև նրանց գործարար համբավը այլ անձանց ապրանքներից ու ծառայություններից և նրանց գործարար համբավից, սպառողին կողմնորոշելու այդ ապրանքները արտադրող սուբյեկտի հարցում:

¹ St' u Organisation mondiale de la propri'it' intellectuelle, Intellectual Property Reading Material, 191-192 էջեր:

² St' u http://www.ladas.com/BULLETTINS/1994/1194Bulletin/UK_NewTMAAct.html

³ St' u <http://topics.law.cornell.edu/wex/Trademark>

⁴ Վերոնշյալ հոդվածից բխում է, որ ապրանքային և սպասարկման նշանների իրավական կարգավիճակը նույնն է: Միակ տարբերությունը այն է, որ ապրանքային նշանը կիրառվում է ապրանքների անհատականացման, իսկ սպասարկման նշանը՝ ծառայությունների անհատականացման համար: St' u նաև Попондопуло В. Ф., Яковлева В. Ф., *Коммерческое право*. СПб., 1997, էջ 180:

⁵ St' u Сергеев А.П. *Право интеллектуальной собственности в Российской Федерации*. М., Проспект, 2006, էջ 604:

⁶ St' u նաև Аумейстер З.К., *Охрана изобретений и товарных знаков. Правовые и экономические проблемы*, Рига, Зинатне, 1975, էջ 103:

⁷ St' u *Inter Lotto (UK) Ltd v Camelot Group Plc* (2003) 3 All ER 191 (Ch) :

⁸ St' u Organisation mondiale de la propri'it' intellectuelle, Intellectual Property Reading Material, 191-192 էջեր:

⁹ St' u Բարսեղյան Տ.Կ. *Մտավոր սեփականության իրավունք*, Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2002 թ. էջ 224, ինչպես նաև Деметьев Б.Н. *Проблемы оценки новизны изобретений* // Вопросы изобретательства. М., 1990, N4, էջ 12:

¹⁰ *Inland Revenue Commers. V Muller & Co.'s Margarine LTD.*, (1901) A.C. 217 at 223-24, (1900-03) All E.R.413 (H.L.)

¹¹ St' u Մարկոսյան Ա., Գալստյան Հ. *Մտավոր սեփականություն, կառավարման հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում*, Եր., Ջանգալ, 2004, էջ 37:

¹² St' u Բարսեղյան Տ.Կ. *Մտավոր սեփականության իրավունք*, Եր., Երևանի պետական համալսարանի հրատ., 2002, էջ 224:

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՈՆ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԳԻՐԸ ԵՎ ԳՐԱ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ԱՉԱՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Տարոն ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

Պատմության ավարտի հիմնախնդիրը եղել է բազմաթիվ հետազոտողների ուսումնասիրության առարկան, որոնցից կարելի է նշել անտիկ աշխարհի իմաստասերներ Պլատոնին, Արիստոտելին, նոր ժամանակներում՝ Իմմանուել Կանտին, Գեորգ Ֆրիդրիխ Վիլհելմ Հեգելին, Կարլ Մարքսին, նորագույն ժամանակներում՝ Ֆրենսիս Ֆուկույամային, ինչպես նաև մեր հայրենակից, ազատական-իրավաբանական տեսության հիմնադիր Վլադիմիր Ներսիսյանցին: Մինչ վերջինիս գաղափարներին անդրադառնալը նախ հասկանանք, թե ինչ է իրենից ներկայացնում պատմության ավարտ հասկացությունը, և ինչ վերաբերմունք են ունեցել այդ խնդրի վերաբերյալ վերոնշյալ իմաստասերները:

Մարդու միտքը դեռևս անտիկ ժամանակներից հասկացել է, որ բնական և հասարակական համակարգերում գոյություն չունեն հավերժական քարացած երևույթներ, և ամեն ինչ գտնվում է փոփոխման մեջ: Ինչպես բնական, այնպես էլ հասարակական համակարգերը գերծ չեն մնալու իրենց գոյության վախճանից: Սակայն, ի տարբերություն բնականի, հասարակական ասպեկտի մասին խոսելիս մտածողների մեջ հարց է ծագել՝ արդյոք մարդկային ցեղի գոյությունը կարելի է համարել որոշակի օրինաչափությունների ուժով զարգացող, այլ կերպ ասած՝ հնարավոր է արդյոք մարդկային համընդհանուր պատմություն, թե՞ ոչ: Արդյո՞ք մարդկային բոլոր

խմբերն են զարգանում միևնույն օրինաչափություններով, թե՞ յուրաքանչյուրը՝ յուրովի, և հնարավոր չէ՞ ստեղծել համընդհանուր պատմություն: Եթե այդպես է, ապա միանշանակորեն անհնար է ասել, թե որն է պատմության ավարտը:

Շատ մտածողներ, հանընդհանուր պատմություն ասելով, ի նկատի չեն ունեցել համընդհանուրի պատմություն, մարդկության մասին հանրագիտարանային սահմանում, այլ փորձ՝ գտնելու մարդկային հասարակություններում զարգացման ընդհանուր օրինաչափություն:

Արևմտյան փիլիսոփայության և ընդհանրապես մշակութային օրրան համարվող Հին Հունաստանում իմաստասերները հասարակական համակարգերի զարգացումը պայմանավորել են կառավարման ռեժիմների փոփոխություններով: Պլատոնն իր «Պետություն» աշխատությունում խոսում է ռեժիմների որոշակի բնական փուլի մասին: Նա նշում է պետությունների ճիշտ ձևերը, որոնք են թագավորությունը, արիստոկրատիան, օրինական ժողովրդավարությունը, և սխալ ձևերը՝ միահեծանություն, օլիգարխիա և անօրինական ժողովրդավարություն: Արիստոտելը իր «Պոլիտիկա» աշխատությունում պարզաբանում է հեղափոխությունների պատճառները, որոնք տապալում են պետական կառավարման սխալ ռեժիմը և հաստատում նորը: Նա չէր ենթադրում պատմության անընդհատություն: Նա գտնում էր, որ ռեժիմների փոփոխման փուլը ներդրված է բնական մեծ փուլի մեջ, որտեղ բնական մեծ աղետները պարբերաբար ոչնչացնում են ոչ միայն գոյություն ունեցող մարդկային հասարակությունները, այլև հենց դրանց

մասին հիշողությունը, և մարդիկ նորից սկսում են պատմության ընթացքը ամենասկզբից³:

Ի տարբերություն Արիստոտելի՝ մեկ այլ հույն փիլիսոփա՝ Պոլիբիոսը, գտնում էր, որ պետությունների ձևերը ունեն կրկնվելու հատկություն. այսինքն՝ Արիստոտելի ասած անօրինական ժողովրդավարությանը կամ դեմոկրատիային ոչ թե այնպայմանորեն հաջորդելու էր բնական աղետ, այլ այդ նույն ձևին, որ Պոլիբիոսի կողմից անվանվում էր օլիտոկրատիա, գալիս է փոխարինելու միապետությունը, և փուլը սկսվում է կրկնվել⁴:

Հունահռոմեական մտածողները փորձեր էին անում գրել ճանաչելի աշխարհի պատմությունը, սակայն դրա իրական գրողը դարձավ քրիստոնեությունը: Միջնադարյան կրոնական փիլիսոփա Օգոստոս Երանելիին հետաքրքրում էր համամարդկային պատմությունը: Ըստ նրա՝ բոլոր ազգերը մեկ մարդկության ճյուղերն են, և նրանք բոլորն էլ մտնում են Աստծո մեկ միասնական ծրագրի մեջ⁵: Քրիստոնեությունը զրադաշտականության նման առաջ քաշեց ժամանակի մեջ պատմության սահմանափակելիության խնդիրը: Նրա համար երկրային պատմության վերջը կնշվի վերջին դատաստանի ժամանակ, որից հետո կհաստատվի երկնային կարգ ու կանոն, ամեն ինչ կլինի աստվածային օրենքների կարգավորման ներքո, այլ կերպ ասած՝ կհաստատվի երկնային արքայություն:

Հիմնախնդիրը ավելի մանրամասն ուսումնասիրվել է նոր ժամանակաշրջանում: Կանտը կարծում է, որ պատմությունը ունի վերջնական կետ կամ նպատակ, որը ենթադրվում է իմաստ տվող ամբողջ պատմությանը մարդու ժամանակակից հնարավորություններով: Նման վերջնակետ է նա դիտարկում մարդկային ազատության իրականացումը, քանի որ «հասարակությունը, որում ազատությունը ներքին օրենքների ներքո ամենաբարձր մակարդակում ասոցացվում է անհաղթահարելի ուժի

հետ, այսինքն՝ բացարձակապես արդար քաղաքացիական կառուցվածքի հետ, հենց դա է Բնության կողմից մարդկային ցեղի առջև դրված ամենազխավոր խնդիրը»⁶: Կանտը նույնիսկ ընդհանուր գծերով տալիս է այն մեխանիզմը, որը մարդկությանը կտանի էլ ավելի բարձր ռացիոնալության մակարդակ, որը թույլ են տալիս լիբերալ ինստիտուտները: Այդ մեխանիզմը բանականությունը չէ, այլ հակառակը՝ Եսասիրական ներհակ պայքարը՝ անտագոնիզմը, որը մարդկանց ստիպում է հրաժարվել պատերազմից բոլորի դեմ և միավորվել քաղաքացիական հասարակություններում, այնուհետև զարգացնել արվեստը և գիտությունը, որոնք թույլ կտան այս հասարակություններին մրցակցել միմյանց հետ: Հենց մրցակցությունը և մարդկանց փառամոլությունը, գերիշխելու և կառավարելու ցանկությունը կլինեն սոցիալական ստեղծագործության աղբյուր: Կանտի այն միտքը, որ հասարակական ամենաբարձր զարգացվածություն ունեցող համակարգը, որտեղ հնարավոր է մարդկային ազատության իրացումը, խորհրդանշում է պատմության ավարտը, հետագայում իր զարգացում է ստացել գերմանացի փիլիսոփա Հեգելի և մեր հայրենակից Ներսիսյանցի երկերում:

Հեգելն ասում է. «Համընդհանուր ոգու առկա կեցության տարերքը, որն արվեստում արտացոլանքն է և կերպարը, կրոնում՝ զգացմունքը և պատկերացումը, փիլիսոփայությունում՝ մաքուր, ազատ միտքը, համաշխարհային պատմությունում իրենից ներկայացնում է հոգևոր իրականություն՝ նրա ներքին և արտաքին կողմերի ամբողջ ծավալով»⁷: Ըստ նրա, քանի որ համաշխարհային ոգին իր մեջ և իր համար բանականություն է, բանականության կեցությունը ոգու մեջ իմացությունն է, ապա համաշխարհային պատմությունն անհրաժեշտություն է միայն ազատ ոգու հասկացությունից, բանականության պահերի զարգացումից և դրանով իսկ՝ ինքնագիտակցությունից և ոգու ազատությունից:

ՈՒՍԱՆՈՂԻ ՎՄՔԻՈՆ

«Բացարձակ համընդհանրությունը՝ որպես ոգի, միայն իր գործունեությամբ շարժում է, որի նպատակն այն է, որ բացահայտի իրեն բացարձակ, դրանով իսկ ազատի իրեն, իր գիտակցությունը՝ բնական միջնորդավորվածության ձևից և գնա դեպի ինքն իրեն»⁸: Սրանից ելնելով՝ Հեգելը դրա ազատագրման ընթացքում առանձնացնում է ինքնագիտակցության ձևավորման չորս ձևեր, որոնք դրսևորվում են չորս թագավորություններում՝ 1.Արևելյան, 2.Հունական, 3.Հռոմեական, 4.Գերմանական:

Այս թագավորությունները միմյանցից տարբերվում են, կարելի է ասել, ազատ անձանց թվով: Հենց ազատության սահմանների ընդարձակումն է պայմանավորում հասարակական համակարգերի զարգացումը: Այս տեսանկյունից դիտելով՝ Հեգելը ասում է, որ Արևելյան թեոկրատական թագավորությունում անազատ են բոլորը, բացի մեկից՝ միահեծան տիրակալից, Հունական դեմոկրատական հասարակությունում արդեն ձևավորվում է փոքրամասնության, իսկ Հռոմեական արիստոկրատիայում ամրապնդվում է հասարակության մի մասի ազատությունը և մնացածի անազատությունը, Գերմանական սահմանադրական միապետությունում, ըստ նրա, արդեն ազատ են բոլորը⁹:

Հեգելը իր ժամանակի համար եզրակացրեց, որ ազատության սահմանը, դրա ամենաբարձր և վերջին աստիճանը պատմության զարգացման մեջ համընդհանուր ձևական հավասարությունն է, որի ճանաչումը բնութագրական է հենց կապիտալիզմին, որն էլ հնարավոր է պետության գերմանական տիպի պայմաններում: Եվ հենց այստեղ էլ կանգ է առնում ազատության և իրավունքի պատմական զարգացման հեգելյան դիալեկտիկան:

Համընդհանուր պատմության և պատմության ավարտի իր տեսությունը Հեգելից հետո առաջ քայլեց մեկ այլ գերմանացի

մտածող՝ Կարլ Մարքսը: Նա նույնպես գտնում էր, որ իրավունքի և ազատության կապիտալիստական մոդելը, որին հատուկ է ձևական հավասարություն, անհատների ազատություն, մասնավոր սեփականություն, քաղաքացիական հասարակություն և իրավական պետություն, իրավունքի զարգացման վերջին աստիճանն է, որից հետո մահանում են իրավունքը և պետությունը, բացառվում է մասնավոր սեփականությունը: Ըստ Մարքսի՝ Հեգելի նշած կապիտալիստական իրավունքը միայն մարդկության նախապատմության վերջին աստիճանն է, որից հետո սկսվում է մարդկության իրական պատմությունը, որը կոմունիզմի և փաստացի հավասարության հաստատումն է, այլ ոչ թե ձևական հավասարությունը:

Նա գտնում էր, որ տնտեսական գործոնները խաղում են որոշիչ դեր պատմական ֆորմատիվ պրոցեսում: Մարդկության պատմությունը տնտեսության և աշխատանքի պատմություն է: Տնտեսական կյանքում որակյալ փոփոխությունները պատմությունը վերածում են առաջ շարժող անդամալի ընթացքի¹⁰: Այդ անդամալի ֆորմատիվ ընթացքն անցնում է հետևյալ պատմական փուլերը՝ նախապատմական, ստրկատիրական, ֆեոդալական, կապիտալիստական հասարակություններ և ի վերջո՝ կոմունիզմ: Առաջին սոցիալ-տնտեսական հասարակարգում արտադրության ամբողջ գործիքները և միջոցները պատկանում են բոլորին և հետևաբար՝ ոչ մեկին՝ առանձին վերցրած: Սկսած ստրկատիրական հասարակարգից, երբ առաջանում են պետությունը և իրավունքը, պետությունը դառնում է տնտեսապես հզոր, արտադրության միջոցները և գործիքները իր ձեռքում կենտրոնացրած իշխող դասակարգի ձեռքին գործիք, իսկ իրավունքը՝ իշխող դասակարգի կամք՝ բարձրացրած օրենքի աստիճանի: Շահագործողական կարգի վերջին հասարակարգը կապիտալիստականն է: Սրանով, ըստ Մարքսի, ավարտվում է

մարդկության նախապատմությունը: Այս հասարակարգի փոփոխությունը Մարքսը չի պայմանավորում հեղափոխությամբ, այլ ընդհակառակը՝ ներհակ պրոգրեսիվ զարգացումների միջոցով, որում էական դեր է խաղում հասարակության աշխատող զանգվածի արտադրական միջոցների փոփոխությունը. «... աշխատանքի միջոցների արդյունավետությունը ավելի շուտ կախված է գիտության զարգացման ձեռք բերված տեխնոլոգիական առաջընթացի մակարդակով, այլ խոսքերով՝ արտադրությունում այդ գիտության ձեռքբերումների կիրառմամբ: ... Մարդկային աշխատանքը այլևս չի գումարվում արտադրության պրոցեսում. մարդը այդ պրոցեսում իրեն դիտում է որպես հսկող և ղեկավարող¹¹... Եվ վերջում արտադրության ձևը, որը հիմնվում է փոխարժեքի /արտադրության վրա ծախսած ժամանակի և հարստության չափի, ինչպես նաև սպառման գնի միջև/ վրա, անկում է ապրում»¹²: Սա էլ պայմանավորում է կապիտալիստական հասարակության սկզբունքների չկիրառելիությունը և կոմունիստական հասարակարգի կարևորագույն սկզբունքի գործադրումը¹³: Ինչպես տեսնում ենք, Մարքսը հասարակարգերի փոփոխությունը պայմանավորում է գիտատեխնիկական զարգացմամբ և տնտեսության մեջ դրա կիրառմամբ, ինչը հասարակության մեջ կծակավորի այն գիտակցությունը, որ գործող հասարակարգը և իրավունքը կիրառելի չեն նոր տեսակի հարաբերությունների համար:

Այդ ամենից հետո գալիս է սոցիալիստական համայնական հասարակարգը, որի սկզբնական փուլում բուրժուական իրավունքը կամաց-կամաց անկում է ապրում մինչև իսպառ վերանալը: Կոմունիզմի ժամանակ այլևս գոյություն չեն ունենում ո՛չ պետությունը, ո՛չ իրավունքը: Եվ մարքսիզմը հենց այս հասարակարգն է համարում մարդկային այն հանրայթը, ուր ամենահասանելին է մարդկային երջանկությունը, ուր մարդիկ գտնվում են փաստացի

հավասարության մեջ, հետևաբար այդ հասարակարգն է պետք համարել պատմության իրական ավարտը¹⁴:

Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը, ձևական հավասարությունից թեև փորձ արվեց գնալ դեպի փաստական հավասարություն, այսինքն՝ դեպի կոմունիզմ, սակայն իրականում վերջինս չկարողացավ արդարացնել իր գոյությունը (համենայն դեպս պատմական այդ հատվածում): Եվ կապիտալիզմ-կոմունիզմ հակամարտությունում Երկիր մոլորակի հասարակությունների մեծ մասը առավելությունը տվեցին կապիտալիզմին և ձևական հավասարությանը: Մուխակը գրում է. «Այն, ինչին մենք վկա ենք, հավանաբար, պարզապես սառը պատերազմի կամ հերթական հետպատերազմյա պատմական շրջանի ավարտը չէ, այլև պատմության ավարտի, մարդկության գաղափարական էվոլյուցիայի ավարտ և արևմտյան լիբերալ դեմոկրատիայի՝ որպես կառավարման վերջնական ձևի համընդհանրացում»¹⁵:

Կոմունիզմի նման անհաջողությունը փաստորեն ինչ-որ կերպ հաստատեց պատմության ավարտի հեգեյան կոնցեպցիան: Եվ այս փաստից ելնելով էր, որ Ֆրենսիս Ֆուկույամայի հողվածը, իսկ այնուհետև գիրքը, որ կոչվում է «Պատմության ավարտը և վերջին մարդը», մեծ տարածում ստացավ: Նա իր գրքում, վերլուծելով համընդհանուր պատմության հիմնախնդիրը, հիմնավորում է հեգեյան մոտեցումը: Կարևորագույն հանգամանքը, ըստ նրա, այն է, որ մարդու ամենագլխավոր պահանջումները, այդ թվում մյուսների կողմից իրեն ճանաչման տալու ծարավը ամենալայն առումով հնարավոր է միայն ազատական սկզբունքների հիման վրա ստեղծված հասարակական համակարգում, որի դրսևորումն է կապիտալիզմը: Նա նաև նշում է. «Եթե պատմությունը այս կամ այն ճանապարհով տանում է դեպի լիբերալ դեմոկրատիա, ապա պատմության փոփոխության պրոգրեսիվության հիմնախնդիրը վեր է ածվում լիբերալ դե-

ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐՔՈՆ

մոկրատիայի և ազատության ու հավասարության սկզբունքների հարցի, որի վրա այդ դեմոկրատիան կառուցվում է: Ողջամիտ միտքը հուշում է, որ վերջինս ունի շատ առավելություններ 20-րդ դարի հիմնական մրցակիցների՝ ֆաշիզմի և կոմունիզմի նկատմամբ, և մեր ժառանգած արժեքներին և ավանդույթներին հակամարտությունը թելադրում է մեզ կանգնել դեմոկրատիայի կողմը»¹⁶:

Մեկ այլ մտածող, հեգելագետ Ալեկսանդր Կոժևը նույնպես խոսում է համընդհանուր պատմության մասին և դրա վերջնական կետը համարում «ազատության թագավորությունը», սակայն ոչ փաստացի ազատության. «Այսպես կոչված պատմությունը, որում մարդիկ կամ դասերը պայքարում են միմյանց դեմ ճանաչման համար և պայքարում են Բնության դեմ իրենց աշխատանքով, Մարքսի կողմից անվանված է «անհրաժեշտության թագավորություն», որի սահմաններից դուրս ընկած է «ազատության թագավորություն», որի մեջ մարդիկ առանց պայմանների միմյանց փոխադարձաբար արժանացնելով ճանաչման, չեն պատերազմում և աշխատում են ինչքան հնարավոր է քիչ»¹⁷:

Մեր հետաքրքրությունը Հեգելի և Մարքսի տեսակետների հանդեպ պայմանավորված է այն բանով, որ հենց նրանց տեսակետներն են մինչև այսօր մնում ամենից հիմնավորված և դրա հետ միաժամանակ երկու արմատական հակադիր տեսակետներ կապիտալիզմի և հետկապիտալիզմի վերաբերյալ համաշխարհային պատմության դիալեկտիկական սոցիալ պատմական առաջընթացի տեսանկյունից¹⁸: Յուրաքանչյուր կոնցեպցիան յուրովի է բացարձականացնում հարաբերականը՝ պատմության տեսանկյունի հատվածի ավարտը համարելով ընդհանուր պատմության ավարտը:

Նոր գաղափարներ է առաջարկում մեր

հայրենակից Վ. Ներսիսյանցը: Նա նույնպես կարծում է, որ պատմությունում առաջընթացը հենց առաջընթացն է իրավունքում: «Մարդկային հարաբերություններում ազատության և իրավունքի պատմական զարգացումը իրենից ներկայացնում է մարդկանց հավասարության առաջընթաց՝ ձևական-իրավաբանական ազատ անհատների տեսքով: Իրավունքի մեխանիզմի միջոցով սկզբնական անազատ մարդկանց զանգվածը պատմական զարգացման ընթացքում աստիճանաբար վերածվում է ազատ անհատների: Իրավական հավասարությունը ազատությունը նորմատիվ-իրավական ձևով հնարավոր և իրական է դարձնում համընդհանուր որոշակի իրավակարգի տեսքով»¹⁹:

Որպես ազատական-իրավաբանական տեսության հիմնադիր՝ Ներսիսյանցը Հեգելի նման մարդկային հարաբերություններում ամենից գլխավոր արժեք համարում է ազատությունը և հավասարության նշան դնում իրավունքի և ազատության միջև: Նրա կարծիքով, պատմության առաջընթացը այն է, երբ անհատի ազատության սահմանները ընդարձակվում են, դրա հետ միասին՝ իրավունքի, որն էլ հենց այդ անհատական ազատության երաշխավորն է, ինչպես նաև, նրա խոսքերով, ազատության մաթեմատիկական²⁰: Այս իմաստով իրավունքը խոսում և գործում է հավասարության այնպիսի միջոցներով և լեզվով, որ դրա շնորհիվ դառնում է կեցության համընդհանուր և անհրաժեշտ ձև, մարդկանց համակեցությունում ազատության արտահայտում և իրագործում²¹: Այստեղ պետք է ավելացնել, որ «ազատությունը մարդու ներքին ստեղծագործական էներգիան է: Ազատության միջոցով մարդ կարող է արարել բացարձակ կյանքի նոր ձևեր, հասարակության նոր կյանք և աշխարհ»²²: Այստեղ պետք է չմոռանալ Դանիելյանի խոսքը. «Իրավունքի համար կարևոր է, որ մարդ հստակորեն պատկերացնի ազատության այն չափը, որը իր մեջ չի կրում ոչնչացման, չարիքի և անարդարության

լիցք»²³:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք հնարավոր է պատմության ավարտը, Ներսիսյանցը ասում է, որ սխալ է կարծել, թե կապիտալիզմը /Հեգել/ կամ կոմունիզմը /Մարքս/ պատմության ավարտական փուլ է: Նա իր կողմից բնորոշած նոր հասարակարգը՝ ցիվիլիստական հասարակությունը, չի համարում ազատության և հավասարության առաջընթացի պատմական ավարտը, այլ միայն դրա զարգացման նոր աստիճան: Նրա կարծիքով, պատմության մեջ առկա սոցիալիստական հասարակությունների նախադեպերը պատմական սխալ չեն, այլ ազատության, իրավունքի և սեփականության զարգացման արդյունք, որոնք պիտի հիմք լինեն բոլորովին նոր ցիվիլիստական հասարակարգի կառուցման: «Ցիվիլիզմի կոնցեպցիան ցույց է տալիս, որ սոցիալիզմը պատմական սխալ չէ, և որ ժամանակը իզուր չի ծախսվել, որ մեր հայրենակիցների մի քանի սերունդների աննախադեպ զոհերը չեն կորել անիմաստ, որ սոցիալիզմի ժամանակ է առաջին անգամ ստեղծվել սոցիալիստական սեփականության տեսքով նախապայմաններ՝ առավել բարձր, առավել արդար և մարդասիրական համամարդկային քաղաքակրթության զարգացման աստիճանին անցնելու համար»²⁴: Սոցիալիստական հասարակության «անդեմ սեփականությունը անհրաժեշտ է, որ դրանից անցում կատարվի անհատականացված սեփականության, սակայն դրա հետ մեկտեղ դա չի կարող լինել վերադարձ մասնավոր սեփականություն»²⁵:

Իր «Ցիվիլիզմի մանիֆեստ» գրքում նա գրում է. «Նախկին հասարակությունից դեպի ավելի մեծ հասարակություն, քան կապիտալիզմի ժամանակ էր, պատմական շարժման ընթացքում սոցիալիզմն իրոք միջանկյալ դիրք է գրավում անցյալի բացասման և ապագայի հաստատման միջև: Հետևաբար նման բացասող պահից /սոցիալիզմից/ հետո անհրաժեշտ է հասնել և հաստատել նոր հավասարություն. այ-

սինքն՝ նոր իրավունքի համար բացարձակորեն անհրաժեշտ ելակետ համարվող դրական (պոզիտիվ) պահ (հետսոցիալիստական հասարակարգ)»²⁶:

Ներսիսյանցը պատմության առաջընթացը բացատրում է ոչ այնքան հասարակարգերի փոփոխմամբ, որքան այդ փոփոխությունները պայմանավորող իրավունքի գիտակցմամբ և հետևաբար՝ զարգացմամբ, ինչպես նաև հասարակական կյանքում դրա կիրառմամբ: Եվ, ըստ այդ մոտեցման, նա առաջ է քաշում պատմության առաջընթացի իր տեսակետը, որում իրավունքը գնալով բացահայտվում և ներկայանում է որպես ազատություն, արդարություն և հավասարություն: Ըստ էության՝ Ներսիսյանցը նույն մոտեցումն ունի, ինչ որ Կանտը և Հեգելը: Վերջիններս էլ հասարակության և մարդկային պատմության զարգացումը պայմանավորում էին ազատության և իրավունքի գիտակցման առաջընթացով և ի վերջո դրանց հավասարեցմամբ:

Ըստ ազատական-իրավաբանական տեսության՝ իրավունքը պատմական առաջընթաց է ապրել, որը արտահայտել է ազատության առաջադիմական փուլերը: Ըստ այդ տեսության՝ իրավունքի և պետության տիպաբանության հիմնական չափանիշը մարդու՝ որպես իրավունքի սուբյեկտի, ինչպես նաև պետության սուբյեկտի, ճանաչելու պատմական ձևն է: Ըստ այդ հայեցակարգի՝ իրավունքը և պետությունը անցել են հետևյալ փուլերը՝ 1. էթնիկական, 2. դասային, 3. անհատական-քաղաքացիական, 4. հումանիտար-իրավական:

Հասարակության զարգացման, հետևաբար նաև իրավունքի զարգացման 1-ին փուլում, որտեղ իրավունքի սուբյեկտներ էին համարվում էթնիկական չափանիշով, չկար անհատների ազատություն: Կար միայն տոհմի, քաղաքի, համայնքի անդամների իրավունք, մնացած մարդիկ օժտված չէին իրավունքով և չէին համարվում իրավունքի սուբյեկտներ: Այս հասա-

ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐՔՈՆ

րակարգը բնութագրական է ստրկատիրական պետություններին: Աթենքում ազատության սուբյեկտներ էին դեմերի /տոհմերի/ անդամները, Հին Հռոմում՝ հռոմեական քաղաքային համայնքը և նրա անդամները /քվիրիտները/:

Իրավունքի դասային տիպը համապատասխանում է ֆեոդալական հասարակարգին: Այս հասարակություններում ազատությունը որոշակիորեն առաջադիմել է, ընդլայնվել են դրա սահմանները: Այս տիպում ստրուկներ չկան, և այդ իմաստով բոլորն ազատ են, սակայն այդ ազատության չափը հասարակության տարբեր շերտերի տարբեր է: Իրավունքը այստեղ ավելի շատ կրում է արտոնությունների բնույթ: Այստեղ յուրաքանչյուր անդամ համարվում է իրավունքի սուբյեկտ՝ հենց որպես որոշակի դասի անդամ: Այսինքն՝ այստեղ առկա է միջդասային անհավասարություն²⁷:

Դրան փոխարինելու է գալիս իրավունքի և պետության մյուս՝ հասարակության զարգացման անհատական-քաղաքացիական տիպը: Այստեղ առկա չեն իրավունքի ոլորտում էթնոսի կամ դասի արտոնությունները: Մարդիկ իրավունքի սուբյեկտ են որպես ինքնուրույն քաղաքացիական անհատներ: Ներսիսյանցի առաջ քաշած ցիվիլիստական հասարակությունը նույնպես գտնվում է այս փուլում, սակայն ոչ ամբողջապես, քանի որ այդպիսի հասարակությունն ինքը անհրաժեշտ նախապայման է իրավունքի զարգացման, մյուս տիպին անցում կատարելու համար:

Մեր հասարակությունները գտնվում են իրավունքի և ազատության զարգացման հենց այս տիպում: Իհարկե այստեղ պետք է ասել, որ ժամանակակից հասարակությունում արդեն նկատվում են իրավունքի, ըստ Ներսիսյանցի՝ ամենազարգացած տիպի դրսևորումներ: Ճիշտ է՝ ժամանակակից հասարակությունում մարդու իրավունքները

ընդ գրեթե բոլոր երկրներում ամրագրված են ազգային օրենսդրությունում, սակայն դեռևս տարբերություն կա մարդ-քաղաքացու և մարդ-ոչ քաղաքացու միջև: Դեռևս իրավական արտոնություններ ունեն «մարդ-քաղաքացիները»: Այլ կերպ ասած՝ ազատությունը դեռևս ծավալվելու և զարգանալու տեղ ունի: Անհրաժեշտ է վերացնել մարդու և քաղաքացու միջև առկա իրավական սահմանագիծը:

Ըստ ազատական-իրավական տեսության՝ դա կատարվում է իրավունքի և պետության հումանիտար իրավական տիպում: Այս տիպի հասարակական համակարգերում արդեն գոյություն են ունենում իրավական պետություններ, որում մարդ, անկախ պետությունների սահմաններից, օժտված է լինում այնպիսի իրավունքներով, ինչպիսիք ունեն նաև Երկիր մոլորակի մյուս մարդիկ: Այսինքն՝ այստեղ կարելի է ասել, որ վերանում է քաղաքացիների իրավական առավելությունները ոչ քաղաքացիների նկատմամբ, և նույնիսկ հնարավոր է քաղաքացի հասկացության վերացում: Փաստորեն, բոլոր մարդիկ ստանում են ձևական կամ իրավական հավասարություն, որն էլ հենց, ըստ Ներսիսյանցի, արդարությունն է և ազատությունը, քանի որ «իրավունքը հասարակական հարաբերություններում ձևական հավասարության սկզբունքի միջոցով ազատության արտահայտման նորմատիվ ձևն է»²⁸: Եվ ազատությունը, և իրավունքը ծավալվելու տեղ չունեն, այսինքն՝ հասել են իրենց զարգացման ամենից բարձր մակարդակին, հետևաբար՝ այդ բարձր մակարդակն էլ պետք է համարել պատմության ավարտը: Չնայած, ինչպես ամենասկզբում նշվեց, յուրաքանչյուր երևույթ, համակարգ չի կարող գտնվել ստատիկ վիճակում, քանի որ այն անընդհատ գտնվում է շարժման, զարգացման մեջ, դա չի նշանակում, որ Ներսիսյանցը, Մարքսը, Հեգելը դեմ են գնում դիալեկտիկայի օրենքներին՝ ասելով, թե ինչ-որ մի համակարգ համարվում է պատմության ավարտական փուլ: Բանն

այն է, որ վերոնշյալ մտածողները, տալով իրենց տեսությունները և կանխորոշելով պատմության ավարտը, չեն բացառել և նույնիսկ անհրաժեշտ են համարել դրա զարգացումը: Իհարկե, այստեղ արդեն զարգացումը հետընթաց է լինելու, և մարդկային հասարակական համակարգը, հասնելով զարգացման բարձրակետին, լճանալու և անկում է ապրելու կամ վերափոխվելու է մեկ այլի: Դա համընկնում է Հեգելի դիալեկտիկական օրենքներին, մասնավորապես «զարգացումը ոչ թե շրջանաձև, այլ պարուրաձև» օրենքին:

Այս տեսանկյունից եթե նայենք, կտեսնենք, որ Մարքսը և Հեգելը միմյանց հերքել են միայն այն պատճառով, որ ունեցել են տարբեր իրավահասկացողություններ: Այսինքն՝ նրանք մերժել են ոչ թե պատմության ավարտի միմյանց տեսակետները, այլ իրավունք հասկացության միմյանց տեսակետները: Եթե Հեգելի համար իրավունքը ազատության դրսևորումն էր, իսկ պետությունը՝ Աստծո երթը Երկրի վրա, ապա Մարքսի համար իրավունքը իշխող դասակարգի կամքն է, իսկ պետությունը՝ նույն դասակարգի «գեները»: Հետևաբար, Հեգելը մարդկային համակեցության բարձրագույն կետը իրավունքի զարգացման բարձրագույն ձևի պայմաններում էր պատկերացնում, ինչպես նաև Ներսիսյանցը, իսկ Մարքսը այդ նույն իրավունքի մահով է պայմանավորում այդ կեցությունը: Հեգելը պատմության սկիզբ է համարել իրավունքի և պետության ծագումը և հետևաբար պատմության վերջը՝ դրանց զարգացման այն բարձրակետը, որից հետո այլևս հնարավոր չէ դրական զարգացում, այլ միայն հետընթաց, իսկ Մարքսը մարդկության այդ շրջանը պատմություն չի համարել, այլ ընդամենը նախապատմություն, որը պետք է օգներ վերադարձնելու կամ վերադարձնալու /այսինքն՝ անցնել դիալեկտիկայի պարույրի հաջորդ թևին/ համայնական հասարակարգին՝ թեպետ ավելի զարգացած և կատարելագործված, որն էլ իրական ազատության՝ փաստա-

կան ազատության, հասարակարգն է, ուր մարդիկ հավասար են ոչ թե ձևականորեն, այլ փաստացի:

Ներսիսյանցը նույնպես, հիմնվելով դիալեկտիկայի վրա, պատմության ավարտը Կանտի և Հեգելի պես համարում է իրավունքի և պետության զարգացման բարձրագույն կետը, որն է ազատության լիակատար իրացումը հասարակական կյանքում և մարդու, այլ ոչ թե քաղաքացու իրավունքների և ազատությունների համընդհանուր ճանաչումը: Այլ հարց է, թե ինչ կլինի դրանից հետո. այսինքն՝ իրավունքը կսկսի հետընթաց զարգացում, թե անկանխատեսելի զարգացումներ տեղի կունենան: Գլխավորն այն է, որ մարդկային բանականությունը, ըստ նրա, կկարողանա իրավունքը և ազատությունը բարձրացնել մինչև դրանց իրական բարձրունքը, իրական իմաստի արտահայտումը և կյանքի կոչումը մարդկանց կյանքում:

Սակայն այստեղ հարց է ծագում՝ արդյոք հասարակական, բնական և տեխնիկական գիտությունների զարգացումը նոր խնդիրներ չեն դնի իրավունքի առաջ: Ֆ. Ֆուկույաման հռետորական հարց է տալիս. «Հավասարության սկզբունքի տարածումը ոչ միայն մարդկանց, այլև բնության այլ արարածների վրա միգուցե հնչում է վայրի, սակայն այն առաջացել է այն փակուղու պատճառով, որում գտնվում է միտքը հետևյալ հարցում՝ ի՞նչ է մարդը»²⁹: Եվ իրոք, քանի դեռ հասարակական գիտությունների զարգացմանը զուգընթաց շարունակվում է անպատասխան մնալ այդ հարցը, այդ նույն գիտությունների առաջընթացը խոստանում է ավելի շատ հարցերի, քան լուծումների առաջադրում:

Նույն Ֆուկույաման իր աշխատության վերջում հանգում է այն համոզման, որ մարդկային այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են քաջությունը, ստեղծագործական էությունը և իդեալիզմը, պատմության ավարտը խորհրդանշող հասարակությունում, որը հենց կապիտալիստական հասարակության բարձրագույն տիպն է, կփո-

ՈՒՍԱՆՈՂԻ ՎՄՔԻՈՆ

խարհնվեն տնտեսական հաշվարկներով և խեղաթյուրված սպառողական պահանջ-մունքներով: Այս ամենը նման հասարակությունից դուրս կմղի արվեստն ու փիլիսոփայությունը: Եվ իր աշխատությունը հռետորական հարցով է վերջացնում, թե արդյոք նման գունագուրկ մարդկային համակեցությունը կարող է սկսել պատմությունը նորից³⁰:

Նման հարցին պատասխանելու համար սոցիոլոգիայից, իրավագիտությունից, պատմությունից, տնտեսագիտությունից զատ պետք է ուսումնասիրել նաև այդ զարգացումների հոգեբանական ասպեկտը: Այսօր արդեն գիտության առանձին բնագավառներ միանշանակորեն պնդում են, որ մարդկային հոգեբանությունը և մասնավորապես՝ գիտակցությունը, գտնվում է զարգացման ոչ բարձր մակարդակներում, և դեռ ահռելի ճանապարհ կա անցնելու, որպեսզի մարդու գիտակցությունը հասնի օբյեկտիվ իրականության սուբյեկտիվ արտացոլման գոնե բավարար մակարդակի, այլ ոչ թե ընկալի դրա խեղաթյուրված տարբերակը³¹: Ուստի բացարձակապես չի կարելի բացառել, որ մարդկային գիտակցության զարգացումը առաջ կբաշի լրիվ նոր հիմնահարցեր, որոնց պատասխանելու, ինչպես նաև հասարակությունում լուծելու համար կպահանջվի տևական հասարակական հարաբերություններ և նոր հասարակական համակարգերի փոփոխություններ:

Ինչպես տեսանք, բոլոր մտածողները պատմության զարգացումը և հասարակական համակարգերի փոփոխությունը տես-

նում էին ազատության իրացման մեջ: Ումանք այդ ազատությունը տեսնում էին՝ իրավունքում արտացոլվելով, ոմանք՝ այդ իրավունքի մահվամբ, սակայն հիմքում մնում էր նույն ազատությունը: Ուստի այստեղ առաջանում է ազատության բացահայտման կարևորագույն հիմնահարցը: Եվ քանի որ հասարակության զարգացման բարձրագույն փուլում բոլոր մտածողները դիտարկում էին ազատության՝ հարաբերականորեն բարձրագույն մակարդակի ձեռքբերումը, տեղին ենք համարում հիշատակել, որ հասարակական ազատականացումը ինքնին չի նշանակում հասարակական հարաբերությունների բարձրագույն մակարդակի ձեռքբերում: Դեռևս բաց է մարդու առավել ազատական տեսակի ձևավորումը: Ազատությունը պետք է ամբողջությամբ իրացված համարել մարդկային կեցությունում, երբ դրա իրացումը չսահմանափակվի միայն հասարակական կյանքում, այլ այնպես, որ սոցիալական և հոգևոր ազատականացումը ընթանա միաժամանակ³²: Եվ հենց այդ հոգևոր մշակութային առումով առավել ազատականացված մարդն է այն շարժող ուժը, որ պիտի առաջ տանի մարդկային համակեցության զարգացումը և պատմության առաջընթացը: Դրա համար բարենպաստ միջավայր է ստեղծում հասարակությունում ձևական հավասարության առկայությունը, սակայն դա բավարար պայման չէ: Անհրաժեշտ է նաև նման հասարակություններում մշակութային զարգացման, քաղաքակիրթ և հոգևոր բարձր արժեքներ ունեցող անձանց ձևավորում, որոնք կարող են հասարակական հարաբերություններում ազատության իրացման երաշխավորները լինել:

¹ Տե՛ս **Փ. Բուկույա**, Конец истории и последний человек. М., 2007, էջ 101:

² Տե՛ս **Փլատոն**, Собрание сочинений в 3-х т., Т. 3. М., 1971:

³ Տե՛ս **Արիստոտել**, Политика, Сочинения в 4-х томах, Т. 4, АН СССР, М., 1984

⁴ Տե՛ս **Ի. Փ. Մачин**, История политических и

правовых учений, 2006. М., էջ 35:

⁵ Տե՛ս **Շ. Վ. Բերезенцев**, Антология философии средних веков и эпохи возрождения. М., 2001, էջ 96:

⁶ Սանրամասն տե՛ս **Ի. Կանտ**, Метафизика нравов. М., 2007:

-
- ⁷ *Г.В.Ф. Гегель*, *Философия права*, М., 2007, էջ 432:
- ⁸ Նույն տեղում էջ 436:
- ⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 432:
- ¹⁰ Տե՛ս *Гуннар Скирбекк и Нилсь Гилье*, *История философии*. М., 2003, էջ 534:
- ¹¹ *Wachter und Regulator*:
- ¹² *Marx Karl*, *Grundrisse der Kritik der politischen Okonomie*, Berlin: Dietz Verlag, 1953. էջ 592-593, Մեջբերումն ըստ *Հաճաճծ ի անծոճա*, *ԿոլսՎարվոր փաճափ*, “նրՏր Ռ ՓՂՈ-սնջՈՓՈ”։ Ծ., 2003, էջ 299:
- ¹³ Յուրաքանչյուրից՝ ըստ կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների:
- ¹⁴ Տե՛ս *В. С. Нерсесянц*, *Философия права*. М., 2005, էջ 347:
- ¹⁵ *Р. Т. Мухаев*, *Хрестоматия по теории государства и права, политологии, истории политических и правовых учений*. М., էջ 989:
- ¹⁶ *Ф.Фукуяма*, *Конец истории и последний человек*. М., 2007, էջ 431:
- ¹⁷ *Александр Кожев*, *Введение в чтение Гегеля*, 1947, էջ 435:
- ¹⁸ Տե՛ս *В. С. Нерсесянц*, *Философия права*. М., 2005, էջ 347:
- ¹⁹ Նույն տեղում էջ 26:
- ²⁰ Սանրանան տե՛ս *В. С. Нерсесянц*, *Право-математика свободы*. М., 1996:
- ²¹ Տե՛ս *В. С. Нерсесянц*, *Философия права*. М., 2005, էջ 17:
- ²² *Н. А. Бердяев*, *Царство духа и царство кесаря*. М., 1995, էջ 325:
- ²³ *О. Г. Даниелян*, *Философия права*. М., 2005, էջ 264:
- ²⁴ *В. С. Нерсесянц*, *Философия права*. М., 2005, էջ 344:
- ²⁵ Նույն տեղում էջ 335:
- ²⁶ Տե՛ս *Չ. Ս. Ներսիսյանց*, *Ցիվիլիզմի մանիֆեստ*, Երևան, 2001, էջ 30:
- ²⁷ Տե՛ս *В. С. Нерсесянц*, *Общая теория права и государства*. М., 2004, էջ 241:
- ²⁸ Տե՛ս *В. С. Нерсесянц*, *Философия права*. М., 2005, էջ 20:
- ²⁹ *Ф.Фукуяма*, *Конец истории и последний человек*. М., 2007, էջ 448:
- ³⁰ Տե՛ս *Roger Kimball*, *Francis Fukuyama and the end of history*.
- ³¹ Տե՛ս *Ī ãð ð Óñĩ ãĩ ñẽẽẽ*, *Tertium Organum*. М., 2000:
- ³² Տե՛ս *Н. А. Бердяев*, *О рабстве и свободе человека*. М., 2006, էջ 130:
-

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՄՔԻՈՆ**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՈՔԵՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ****Անահիտ ՄԱՆԱՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի

Իրավական ակտերի մշակումն ու ընդունումը ինքնանպատակ չէ: Դրանք կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները և այդ առաքելությունն իրականացնելու համար պետք է օժտված լինեն անհրաժեշտ որակներով:

Օրենքի որակը էական հատկանիշների այն ամբողջությունն է, որը կոչված է բավարարելու հասարակական պահանջմունքները և մասնավոր շահերը հասարակության զարգացման նպատակներին համապատասխան¹:

Այդ տեսանկյունից հատկապես կարևորվում է սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության որակը, քանզի այն՝ որպես դատական սահմանադրական վերահսկողության ինքնուրույն, մասնագիտացված ու ամբողջական համակարգ դատական սահմանադրական իրավունքի նորմերի և սահմանադրական դատավարության միջոցով ապահովում է Սահմանադրության գերակայության ու կայունության պահպանումը, բացահայտում, զնահատում և վերականգնում է խախտված սահմանադրական հավասարակշռությունը, երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնական ազատությունների սահմանադրական պաշտպանությունը²:

ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ ՀՀ-ում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, որը հան-

դիսանում է սահմանադրական օրինականության պաշտպանության բարձրագույն մարմին դատական իշխանության համակարգում³: Այդ առումով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է ՀՀ իրավակարգում Սահմանադրության գերակայությունը և անմիջական գործողությունը: ՀՀ Սահմանադրության 94 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով: Այդ առումով նշենք, որ սահմանադրական արդարադատություն իրականացնելիս Սահմանադրական դատարանն անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը: Ինչ վերաբերում է Սահմանադրական դատարանի անդամներին, ապա սահմանադրական արդարադատություն իրականացնելիս վերջիններս անկախ են և ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության որակը բացառիկ կարևորություն է ձեռք բերում Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

Այդ հիմնախնդիրների ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ 2005թ. նոյեմբերի 27-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքում ընդուն-

ված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքով⁴ էական փոփոխություններ կատարվեցին սահմանադրական դատավարության ընթացակարգերում, հստակորեն սահմանվեցին առանձին գործերի քննության դատավարական առանձնահատկությունները: Եվ քանի որ օրենքի որակը զնահատելու առումով կարևոր դեր է կատարում օրենսդրական տեխնիկայի պահանջների պահպանումը, ուստի այս աշխատանքում կխոսենք սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում դրանց պահպանման մասին:

Այդ առումով իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ օրենքների և այլ իրավական ակտերի արդյունավետությունը հիմնականում կախված է նրանից, թե որքանով են հստակ և պարզ իրավաբանական ձևակերպումները, որքանով են տրամաբանորեն կապված, որքանով են կիրառված միատեսակ իրավաբանական տերմինները և հասկացությունները: Օրենսդրական տեխնիկայի կանոնները, որոնք օգտագործվում են օրենսդրի կողմից իրավական ակտերի մշակման ընթացքում⁵, հանդիսանում են այն մեթոդների, կանոնների, միջոցների, եղանակների ամբողջությունը, որոնք օգտագործվում են նորմատիվ իրավական ակտերի մշակման և համակարգման ընթացքում՝ դրանք անհրաժեշտ որակով ապահովելու նպատակով⁶: Եվ քանի որ իրավաբանական տեխնիկայի մակարդակը երկրի իրավական մշակույթի ցուցանիշներից է⁷, վերը նշված բնագավառն իրավական կարգավորման է ենթարկվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով⁸, ինչը մեծ ձեռքբերում է այդ ոլորտի օրենսդրական կարգավորման ուղղությամբ:

Սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության որակի տեսանկյունից կարևոր է իրավական ակտի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին չհակասելու հանգամանքը: Այդ առումով ՀՀ Սահմանադրության 6 հոդվածը նախա-

տեսում է, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Միևնույն ժամանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածը սահմանում է, որ ՀՀ օրենքներն ու այլ իրավական ակտերն ընդունվում են ՀՀ Սահմանադրության հիմնան վրա կամ ի կատարումն դրա և չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը⁹: Այդ առումով խնդրահարույց է ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի¹⁰ 135 հոդվածով ամրագրված այն դրույթը, որի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա են գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: ՀՀ Սահմանադրության 93 հոդվածը նախատեսում է, որ ՀՀ-ում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը: Նշենք, որ ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածը սահմանադրական արդարադատության իրականացումն այլ մարմինների չի վերապահում: Ուստի, մեր կարծիքով, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի նշված դրույթը հակասում է ՀՀ Սահմանադրության 93 հոդվածին: Այդ հարցին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը իր՝ 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդման մեջ¹¹, որտեղ արձանագրել է, որ խնդիրը պարզապես մեխանիկական բացթողմանը կամ սահմանադրական արդարադատության էությանը անտեղյակ լինելուն չի վերաբերում: Սա այն փաստն է, որը վկայում է դատական իշխանությանն առնչվող համակարգային սխալի մասին, որն անհապաղ շտկման անհրաժեշտություն ունի: Հայաստանի Հանրապետությունը չի կարող լուրջ շեղում գրանցել սահմանադրական արդարադատության միջազգային զարգացման ընդհանուր միտումներից, որոնք երկրում ժողովրդավարական զարգացումների և

ՈՒՍԱՆՈՂԻ ՎՄՔԻՈՆ

անկախ արդարադատական համակարգի արմատավորման կարևոր նախադրյալներից են¹²: Այդ հարցին Սահմանադրական դատարանն անդրադարձավ նաև 25 նոյեմբերի 2008 թվականի ՍԴՈ-780 որոշմամբ, որում արտահայտած իրավական դիրքորոշման համաձայն՝ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթման իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար¹³: Հետևաբար, մեր կարծիքով, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հետ կապված՝ ՀՀ օրենսդրության դրույթները անհրաժեշտ է ամրագրել ՀՀ Սահմանադրությանը համապատասխան:

Սահմանադրական դատարանին վերաբերող օրենսդրության տեսանկյունից կարևոր է նաև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի¹⁴ հարաբերակցության հիմնախնդիրը: Այդ առումով նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննության նախապատրաստելու և դատաքննության, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ Սահմանադրական դատարանի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ նշված օրենքով նախատեսված դեպքերի, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրական

դատարանի որոշումները չպետք է հակասեն ՀՀ Սահմանադրությանը, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին: Ուստի, ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգը, որն ընդունվել է Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշմամբ, չպետք է հակասի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին: Մինչդեռ ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի որոշ դրույթներ չեն համապատասխանում վերը նշված օրենքով նախատեսված պահանջներին: Մասնավորապես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 72 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշման հետ կապված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով: Սահմանադրական դատարանի պատճառաբանված որոշմամբ գործի դատաքննությունն իրականացվում է բանավոր ընթացակարգով: Այդ առումով Սահմանադրական դատարանի կանոնակարգի 38 հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-70, 72 և 74 հոդվածներով նախատեսված դեպքերում համապատասխան գործի դատաքննությունը կարող է անցկացվել գրավոր ընթացակարգով՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ: Ուստի, եթե օրենքը վերը նշված գործերով Սահմանադրական դատարանի որոշումը պահանջում է բանավոր ընթացակարգով գործի դատաքննության իրականացման համար(այլ դեպքերում նշված գործերով դատաքննությունն իրականացվում է գրավոր ընթացակարգով), ապա Սահմանադրական դատարանի կանոնակարգը այդ պահանջը նախատեսում է գրավոր ընթացակարգի համար: Մինչդեռ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 38 հոդվածի համաձայն՝ Սահմանադրական դատարանում գործերի դատաքննությունն իրականացվում է ինչպես բանավոր, այնպես էլ գրա-

վոր ընթացակարգով՝ այդ օրենքին համապատասխան, իսկ գրավոր ընթացակարգով գործերի դատաքննության կանոնները սահմանում է Սահմանադրական դատարանը՝ իր կանոնակարգով՝ հիմք ընդունելով այդ օրենքի ընդհանուր պահանջները: Ուստի կանոնակարգը, մասնավորապես վերջինիս՝ գրավոր ընթացակարգով գործերի դատաքննության կանոնները, պետք է համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պահանջներին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ անհատական դիմումների ընդունման և նախնական ուսումնասիրման կարգը սահմանվում է Սահմանադրական դատարանի կանոնակարգով, իսկ դրանց հիման վրա գործերը քննության ընդունելու կամ գործերի քննությունը մերժելու հատուկ կանոնները սահմանվում են հիշյալ օրենքով: Մինչդեռ ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 25, 26 հոդվածները վերնագրված են «Անհատական դիմումով գործի քննությունը մերժելու հիմքերը», «Անհատական դիմումով գործը քննության ընդունելը կամ անհատական դիմումի քննությունը մերժելը», ինչը, մեր կարծիքով, սխալ է օրենսդրական տեխնիկայի պահանջների պահպանման տեսանկյունից, քանզի այդ ձևակերպումները վերաբերում են «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նշված օրենքի կարգավորմանը վերապահված բնագավառներին: Հետևաբար գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի դրույթները պետք է ամրագրվեն ՀՀ Սահմանադրությանը և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Անդրադառնալով օրենսդրական տեխնիկայի կանոններին՝ նշենք, որ ՀՀ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով որոշում է օրենքների, ԱԺ որոշումների, Հանրապե-

տության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածը կարգավորում է վերը նշված գործերի քննությունը Հանրապետության Նախագահի, պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի, կառավարության և մարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա և անվանում է այն իրավական նորմերի սահմանադրականության վերացական վերահսկողություն: Սակայն, մեր կարծիքով, տվյալ պարագայում իրավական նորմերի փոխարեն ավելի ճիշտ կլիներ օգտագործել իրավական ակտեր հասկացությունը, քանզի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Սահմանադրության 100 հոդվածի 1-ին կետով նախատեսված գործերով կարող է վիճարկվել այդ կետում նշված ինչպես նորմատիվ, այնպես էլ անհատական բնույթ ունեցող իրավական ակտերի սահմանադրականությունը¹⁶, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2 հոդվածի 5-րդ մասը անհատական իրավական ակտերի բնորոշ առանձնահատկությունն է համարում իրավական նորմ չպարունակելու հանգամանքը: Այդ առումով պետք է նշել, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իսկ իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ իրավական ակտերի հասկացություններին ներկայացվող պահանջներից է միասնականությունը, ինչը ենթադրում է, որ վերջիններիս օգտագործման բնագավառում չպետք է լինեն հակասություններ, մասնավորապես՝ միևնույն տերմինը չպետք է մատնանշի տարբեր հասկացություններ, և

ՈՒՍԱԿՆՈՂԻ ՎԱՐՔՈՆ

միևնույն հասկացությունը չպետք է մատնանշվի տարբեր տերմիններով¹⁶: Վերը նշված պահանջների շրջանցումը հանգեցնում է սխալների և իրավաբանական հասկացությունների¹⁷:

Նշված ոլորտի ուսումնասիրության համար կարևոր է նաև հղումների կիրառման հիմնախնդիրը սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 1-ին մասը նախատեսում է, որ իրավական ակտի հոդվածներում, կետերում իրավական այլ ակտի հոդվածներին, կետերին, ինչպես նաև իրավական այլ ակտերին կամ դրանց առանձին դրույթներին հղումները կիրառվում են այն դեպքում, երբ անհրաժեշտ է ընդգծել այդ դրույթների փոխադարձ կապը կամ խուսափել կրկնություններից: Այդ առումով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 55 հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական դատարանում ակնհայտ կեղծ եզրակացություն կամ ակնհայտ կեղծ բացատրություն տալը կամ թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը, ինչպես նաև եզրակացություն և բացատրություն տալուց հրաժարվելն առաջացնում են օրենքով սահմանված պատասխանատվություն: Մինչդեռ ՀՀ քր. օր. 338 հոդվածը, որը վերնագրված է «սուտ բացատրություն, սուտ ցուցմունք կամ կեղծ եզրակացություն տալը կամ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը», պատասխանատվություն է նախատեսում սուկ քաղաքացիական գործով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու, քրեական վկայի կամ տուժողի կողմից սուտ ցուցմունք տալու, քրեական կամ քաղաքացիական գործով փորձագետի կողմից ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար: Իսկ ինչ վերաբերում է բա-

ցատրություն տալուց հրաժարվելուն, ապա ՀՀ քր. օր. 339 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում վկայի կամ տուժողի կողմից ցուցմունք տալուց հրաժարվելու համար: Ուստի, եթե ՀՀ քր. օր. սահմանում է սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալը կամ ցուցմունք տալուց հրաժարվելը, ապա «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը դրույթներ է նախատեսում ակնհայտ կեղծ բացատրություն տալու և բացատրություն տալուց հրաժարվելու համար: Մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36 հոդվածի 4-րդ մասի համաձայն նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով: Ուստի, թեև «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքը հղում է կատարում օրենքին, սակայն վերջինս Սահմանադրական դատարանում գործի քննության ընթացքում կատարված վերը նշված արարքների համար պատասխանատվություն չի սահմանում, իսկ քրեական օրենքն անալոգիայով կիրառելն արգելվում է: Այդ առումով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 3-րդ մասը նախատեսում է, որ նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց կատարումն անհնար է կամ անընդունելի, կամ որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն: Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ նման եզրույթաբանական խառնաշփոթը կարող է անդրադառնալ Սահմանադրական դատարանում գործերի քննության արդյունավետության վրա, և տվյալ ոլորտը կարգավորող օրենսդրության բնագավառում կիրառվող եզրույթաբանությունը պետք է միատեսակ լինի:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրեն-

քի 45 հոդվածի 10-րդ մասը նախատեսում է, որ այն պայմանների թվարկման ժամանակ, երբ թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, չի կարող կիրառվել «կամ» շաղկապը: Այս դեպքում պետք է կիրառվեն «և» կամ «ու» շաղկապները: Մինչդեռ վերը նշված օրենսդրության բնագավառում մի շարք դեպքերում չեն պահպանվում հիշյալ հոդվածի պայմանները: Այդ առումով պետք է նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածը սահմանում է, որ այդ հոդվածում նշված գործերով անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: Ուստի, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45 հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ եթե իրավական ակտում նշված նորմի կիրառումը պայմանավորված է «և» կամ «ու» շաղկապով բաժանված պայմաններով, ապա այդ նորմի կիրառման համար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, կարելի է հետևություն անել այն մասին, որ Սահմանադրական դատարանում անհատական դիմումների ընդունման համար անհրաժեշտ է ինչպես ընդհանուր իրավասության, այնպես էլ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից լինելու պայմանի առկայությունը, ինչը չի համապատասխանում տվյալ ինստիտուտի էությանն ու առանձնահատկություններին: Այդ առումով նշենք, որ, ի տարբերություն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 23 հոդվածի 5-րդ մասում օգտագործվում է «կամ» շաղկապը¹⁸, ինչը, մեր կարծիքով, առավել նպատակահարմար է հիշյալ հիմնախնդրի կարգավորման տեսանկյունից:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում առկա են որոշ բացեր, որոնց վերացումը կնպաստի սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանմանը, կապահովի Սահմանադրական դատարանի անկախությունը նրա լիազորությունների իրականացման գործընթացում, թույլ կտա ապահովել Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը և առավել հստակ դարձնել այդ մարմնին վերաբերող հարաբերությունների օրենսդրական կարգավորումը, ինչը կնպաստի սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության որակը բարձրացնելուն:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում առկա են որոշ բացեր, որոնց վերացումը կնպաստի սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության բնագավառում օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանմանը, կապահովի Սահմանադրական դատարանի անկախությունը նրա լիազորությունների իրականացման գործընթացում, թույլ կտա ապահովել Սահմանադրական դատարանի բնականոն գործունեությունը և առավել հստակ դարձնել այդ մարմնին վերաբերող հարաբերությունների օրենսդրական կարգավորումը, ինչը կնպաստի սահմանադրական արդարադատությանը վերաբերող օրենսդրության որակը բարձրացնելուն:

¹ Տե՛ս «Общая теория права и государства» (под ред. В. В. Лазарева), М., 2005, էջ 206:

² Տե՛ս Գ. Գ. Հարությունյան, Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2002:

³ Տե՛ս Գ. Խաչատրյան, Первая Конституция Республики Армения, Ереван, 2001, էջ 261:

⁴ Ընդունվել է 2006թ. հունիսի 1-ին:

⁵ Տե՛ս «Теория государства и права» (под ред.

В. Корельского, В. Первалова), М., 1997, էջ 312-313:

⁶ Տե՛ս «Общая теория права и государства» (под ред. В. В. Лазарева), 2005, М., էջ 214:

⁷ Տե՛ս Ս. Ս. Алексеев, Общая теория права, Том 2, М., 1981, էջ 270:

⁸ Ընդունվել է 2002թ. ապրիլի 3-ին:

- ⁹ Նշենք, որ իրավաբանական գրականության մեջ Սահմանադրության գերակայությունը բնութագրվում է որպես իրավական պետության գոյության և գործառնության բարձրագույն սկզբունք: Գերակայությունը Սահմանադրությամբ ամրագրված՝ վերջինիս գործողության առավելագույն համընդհանրության հատկանիշն է, որը սահմանում է իրավական ակտերի հիերարխիան, Սահմանադրությանը տալիս է իրավաստեղծման հիմքի դեր: Սակայն Սահմանադրությունն ինքը չպետք է հակասի իրավունքի բարձրագույն սկզբունքներին: Սահմանադրությունն արդարության իրավունք է և ոչ թե համընդհանուր դրույթների մեխանիկական համախմբում (տե՛ս Գ. Բրյուսյան, Конституционный суд в системе государственной власти (сравнительный анализ), Ереван, 1999, էջ 14):
- ¹⁰ Ընդունվել է 2007թ. նոյեմբերի 28-ին:
- ¹¹ Հաստատվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. հունվարի 21-ի ՍԴԱՌ-4 աշխատակարգային որոշմամբ:
- ¹² Սահմանադրական դատարանի 2007թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդում (տե՛ս www.concourt.am):
- ¹³ Տե՛ս www.concourt.am:
- ¹⁴ Ընդունվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2006թ. հուլիսի 7-ի աշխատակարգային

նիստում՝ ՍԴԱՌ-35 որոշմամբ (տե՛ս www.concourt.am):

- ¹⁵ Նշենք, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանը կարող է վիճարկել միայն նորմատիվ ակտերի սահմանադրականությունը:
- ¹⁶ Տե՛ս *Общая теория права и государства* (под ред. В. В. Лазарева), 2005, М., էջ 214:
- ¹⁷ Տե՛ս *Законодательная техника* (под ред. Ю. А. Тихомирова), 2000, М., էջ 13:
- ¹⁸ ՀՀ Սահմանադրական դատարանի կանոնակարգի 23-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ եթե դիմումում բարձրացված հարցն ակնհայտորեն ենթակա չէ Սահմանադրական դատարանին, կամ այն ներկայացված է ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից չհանդիսացած ֆիզիկական կամ իրավաբանական անձի(անձանց) կողմից, ապա դիմումների ընդունման բաժնի ներկայացմամբ դիմողը(դիմողները) դիմումների գրանցման պահից հնգօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի կողմից գրավոր տեղեկացվում է(տեղեկացվում են) այդ մասին, և նրան(նրանց) է վերադարձվում դիմումը(կից փաստաթղթերով)՝ կցելով դիմումի պատճենը:

ՊԱՇՏՊԱՆԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՅԱԼԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ

Իգաբեկա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանողուհի*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ քր. դատ. օր.) 6-րդ հոդվածի 28-րդ կետը պաշտպանությունը բնորոշում է որպես դատավարական գործունեություն, որն իրականացնում է պաշտպանության կողմը՝ նպատակ ունենալով հերքել մեղադրանքը կամ մեղմացնել պատասխանատվությունը, պաշտպանել այն անձանց իրավունքները և *շահերը*, որոնց վերագրվում է քրեական օրենսգրքով չթույլատրված արարքի կատարումը, ինչպես նաև նպաստել ապօրինաբար քրեական հետապնդման ենթարկված անձանց իրավունքների վերականգնմանը:

Տալով պաշտպանի հասկացությունը՝ քր. դատ. օր.-ը 68-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործում է հետևյալ ձևակերպումը. պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի *օրինական շահերը* և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Նման տարբերակումներ, շահի «բնույթի» հետ կապված, այսուհետ նկատվում են քր. դատ. օր.-ի, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), «Փաստաբանի վարքագծի» կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) ողջ բովանդակության մեջ (մասնավորապես՝ քր. դատ. օր. հոդված 73, Կանոնագրքի հոդվածներ 4, 5, 6, 29, Օրենքի հոդվածներ 5, 19, 32 և այլն): Ահա այսպիսի ձևակերպումներն էլ

ծնում են տեսության և պրակտիկայի մեջ հակասական մոտեցումներ ու թյուրըմբռումներ: Մասնավորապես՝ «շահ» կատեգորիային օրինականության հատկանիշով օժտելը հիմք է տալիս մի շարք տեսաբաներին անօրինական համարել մեղադրյալի այն ձգտումները, որոնք, իրենց պատկերացմամբ, համահունչ չեն արդարադատության և հանրության շահերին: Որպես համապատասխանության չափանիշ մատնանշվում է օբյեկտիվ իրականությունը, այն է՝ պատժից և պատասխանատվությունից խուսափելու կամ պատիժը մեղմացնելու մեղադրյալի շահը օրինական է միայն այն դեպքում, երբ մեղադրյալը իրականում հանցանք չի կատարել կամ համապատասխանաբար՝ կատարել է նվազ վտանգավորության արարք¹: Այս կոնտեքստում մեղադրյալի շահերը ոչ միշտ են համապատասխանում արդարադատության շահերին:

Համապատասխանաբար, պաշտպանի վրա էլ դրվում է պարտականություն պաշտպանել բացառապես պաշտպանյալի օրինական շահերը, այսինքն՝ մինչև պաշտպանություն ստանձնելը զնահատական տալ շահի օրինական կամ անօրինական լինելուն: Փաստորեն, այս կոնցեպցիայի կողմանկիցները պաշտպանին փորձում են վերագրել նրան ոչ բնորոշ ֆունկցիա՝ մեղավորության հարցի վճռման հնարավորություն:

Բարեբախտաբար, տեսաբանների գերակշիռ մասը զոհ չգնաց նման թյուրիմացության, բայց, կաշկանդված լինելով օրենքի պահանջով՝ պաշտպանել միայն օրինական շահերը, փորձեր արեց դնել ավելի տարածական և, ինչու ոչ, հումանիստական բովանդակություն այդ հասկա-

ՈՒՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՈՆ

ցության մեջ: Այսպես՝ գրականության մեջ հիմնական միտումը եղել և մնում է այն, որ մեղադրյալի «փորձերը» պաշտպանվել առաջադրված մեղադրանքից՝ անկախ իրականում հանցանք կատարած լինելու փաստից, միշտ օրինական են²:

Անմեղության կանխավարկածը ենթադրում է շահի օրինականության կանխավարկած³:

Կարծում ենք, հարցի անհրաժեշտ լուծումը նախ և առաջ պետք է տրվի օրենսդրական մակարդակով: Առաջարկում ենք ՀՀ քր. դատ. օր.-ից, Օրենքից և Կանոնադրությունից հանել «օրինական» արտահայտությունը՝ որպես «շահ» հասկացության բնորոշում՝ հաշվի առնելով հետևյալ հիմանվորումները.

1. Նախատեսելով շահի օրինական լինելու անհրաժեշտությունը՝ օրենսդիրը հարկ չի համարել որևէ տեղ բացահայտել դրա բովանդակությունը: Այսպես՝ ոչ ՀՀ Սահանադրությունում, ոչ ՀՀ քր. դատ. օր.-ում չենք հանդիպում «օրինական է այն շահը, որը...» ձևակերպում, մինչդեռ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ՝ «իրավական ակտում պետք է կիրառվեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ»: Իսկ ակնկալել, որ նշված հասկացությունը կարող է հանրածանոթ լինել, առնվազն կվկայի միամտության մասին, ինչն ապացուցվում է վերը բերված անգիջում հակադիր դիրքորոշումների առկայությամբ:

2. Անձի, հատկապես քրեադատավարական ոլորտում մեղադրյալի կարգավիճակով հայտնված անձի շահերի դասակարգումը օրինականի և ոչ օրինականի, և առավել ևս պաշտպանության ուղիղ համեմատականը շահի բնույթի հետ, չի բխում

ոչ միայն ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի, այլև Հիմնական օրենքի տրամաբանությունից: Այսպես՝ նախատեսելով հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի անվերապահ իրավունքը պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած պաշտպանի միջոցով՝ ոչ Մարդու իրավունքների և հիմարար ազտությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (հոդված 6), ոչ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը (հոդված 14), ոչ ՀՀ Սահանադրությունը չեն կապում նշված իրավունքի իրականացման հնարավորությունը շահի օրինականության հետ⁴: Նման սահմանափակումներ չեն պարունակում նաև փաստաբանների դերին նվիրված մի շարք միջազգային-իրավական ակտեր, մասնավորապես՝ Հանցագործությունների կանխման և իրավախախտների վերադաստիարակման գործում իրավաբանների դերին վերաբերող հիմնական սկզբունքները, Փաստաբանների էթիկայի գլխավոր սկզբունքները, Եվրոպական համագործակցությունում իրավաբանների վարքագծի օրենսգիրքը և այլն:

Անօրինական լինելու հարցը արդիական է դնել միայն շահին հասնելու ճանապարհի, այսինքն՝ շահի բավարարման համար ընտրված միջոցների ու մեթոդների ընտրության հարցում:

Ինչ վերաբերում է ազգային օրենսդրությանը, ապա ՀՀ քր. դատ. օր.-ը 73-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանում է, որ պաշտպանը չի կարող հակառակ պաշտպանյալի դիրքորոշման ընդունել դեպքի հետ նրա առջությունը և մեղավորությունը դրա կատարման մեջ: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 20-րդ հոդվածը, պարունակելով նույնաբովանդակ պահանջ, այն լրացնում են հակառակ դիրքորոշում զբաղեցնելու պարտականությամբ առաջին դեպքում և իրավունքով

երկրորդ դեպքում, երբ պաշտպանյալն ընդունում է մեղքը, բայց պաշտպանը համոզված է հակառակում⁶: Պարտականություն է դա, թե իրավունք (թեև, կարծում ենք, այս նորմը պաշտպանի պարտականության վերածելն արդարացված չէ էթիկայի տեսանկյունից), կարծում ենք, հարկ է օրենքի համապատասխան նորմը լրացնել փաստաբանական գաղտնիքը հրապարակելու անթույլատրելիության պահանջով, մասնավորապես. «...պաշտպանն իրավունք ունի զբաղեցնել պաշտպանյալի դիրքորոշման հետ չհամընկնող դիրքորոշում, եթե իր դիրքորոշումից բխող գործողությունները փաստաբանական գաղտնիքը բացահայտելու վտանգ չեն ստեղծում»:

Ինչո՞վ է պայմանավորված նման լրացման անհրաժեշտությունը:

Դեպքերի մեծամասնությամբ, պաշտպանյալի կողմից մեղքի ֆորմալ ընդունման պայմաններում պաշտպանը նրա ինքնազրպարտության մասին տեղեկանում է որպես փաստաբանական գաղտնիքի հետևանք՝ պաշտպանյալի խոսքերից կամ իր գործունեության ընթացքում ձեռք բերված այնպիսի տեղեկություններից, որոնք պաշտպանյալը հրապարակելու ցանկություն չունի: Այս պարագայում օրենքի երկու նորմերը՝ փաստաբանական գաղտնիքը չհրապարակելու և պաշտպանյալին հակառակ դիրքորոշում զբաղեցնելու պարտականությունը (ինչու՞ ենք, հակառակ մեր վերոնշյալ դիրքորոշմանն այս հարցի կապակցությամբ, օգտագործում «պարտականություն» եզրույթը. հաշվի առնելով որ այս երևույթը որպես պաշտպանի իրավունք նախատեսում է Կանոնագիրքը, իսկ Օրենքն այն համարում է պարտականություն, իսկ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը պահաջում է հակասությունների դեպքում առաջնորդվել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի պահանջներով, որը տվյալ պարագայում Օրենքն է, ստիպված ենք, հակառակ տրամաբանութ-

յան, այս դրույթն ընդունել որպես պարտականություն) կոլիզիայի մեջ են մտնում:

ՀՀ քր. դատ. օր.-ը սահմանում է, որ պաշտպանն իրավունք չունի հրապարակել այն տեղեկությունները, որոնք իրեն հայտնի են դարձել իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում, եթե դրանք կարող են օգտագործվել պաշտպանյալի շահերի դեմ՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի (ՀՀ քր. դատ. օր. 73-րդ հ., 2-րդ մ.): Օրենքն ուրվագծում է հետևյալ բացառությունները. ա) առկա է վստահորդի համաձայնությունը, բ) դա անհրաժեշտ է նրա և վստահորդի միջև ծագած դատական վեճում պահանջները հիմնավորելու կամ իր պաշտպանության համար, գ) առկա է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ հաստատապես հայտնի նախապատրաստվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մասին տեղեկատվություն (Օրենքի 25-րդ հ.):

Ինչպես տեսնում ենք, այս ցանկում տեղ չի գտել «վստահորդի վիճակի բարելավման համար» դեպքը, հետևաբար, եթե վստահորդը համաձայնություն չի տալիս, որքան էլ դա արդյունավետ լինի և, պաշտպանի կարծիքով, բխի պաշտպանյալի շահերից, պաշտպանն օրենքով իրավունք չունի կատարել բարելավող որևէ գործողություն, որը սպառնում է բացահայտել փաստաբանական գաղտնիքը: Այս հանգամանքը պայմանավորված է փաստաբանական գաղտնիքին արդարացիորեն տրվող չափազանց մեծ նշանակությամբ⁶, որն էլ ձևավորում է փաստաբանության՝ որպես ինստիտուտի նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

Նույն սկզբունքն ընկած է նաև պաշտպանի ողջ ինքնուրույնության կանխորոշման հիմքում: Պաշտպանյալի հետ հարաբերություններում պաշտպանի ինքնուրույնությունը արտահայտվում է միայն պաշտպանության տակտիկան ընտրելու հարցում: Եթե պաշտպանյալի համաձայնութ-

ՈՒՍԱՆՈՂԻ ՎԱՐԻՈՆ

յանը հակառակ ընտրված միջոցը կարող է բացահայտման վտանգի տակ դնել փաստաբանական գաղնիքը, պաշտպանն իրավունք չունի առանց պաշտպանյալի համաձայնության օգտագործելու այդ միջոցը, ինչքան էլ դա արդյունավետ լինի:

Պաշտպանը լիովին ազատ է այն հարցերի ընտրության պարագայում, որոնք ընդգրկվում են պաշտպանության տակտիկայի բովանդակության մեջ, անգամ պաշտպանյալի համաձայնության բացակայության դեպքում: Քննարկենք հնարավոր բազմաթիվ օրինակներից մեկը՝ մասնագետի օգնությանը դիմել: ԶԶ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածը պաշտպանին հնարավորություն է տալիս հարցնել մասնագետի կարծիքը հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման համար՝ *պաշտպանյալի համաձայնությամբ*, ինչը, կարծում ենք, ոչնչով արդարացված չէ, քանի որ համաձայնության բացակայությունը կարող է մեծապես վնասել պաշտպանության արդյունավետությանը, մասնավորապես, որ այդ համաձայնության բացակայությունը կարող է և ոչնչով մոտիվացված չլինել, ուստի առաջարկում ենք՝ ԶԶ քր. դատ. օր.-ի 73-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի բովանդակությունից հանել «պաշտպանյալի համաձայնությամբ» արտահայտությունը:

Ինչ վերաբերում է պաշտպանության արգելված միջոցներին, օրենքն, ըստ էության, դրանց ուղղակի արգելքներ չի նախատեսում: Դրանք կարելի է բխեցնել օրենքի ընդհանուր տրամաբանությունից, ընդհանուր իրավական սահմանափակումներից: Մասնավորապես՝ այս լույսի ներքո է պետք դիտարկել փաստաբանական գաղտնիքի հրապարակման անթույլատրելիությունը, ապացույցներ կեղծելու, սուտ ցուցմունք տալուն հարկադրելու, ցուց-

մունք տալուն խոչընդոտելու, հանցանքի կատարման օժանդակելու արգելքները:

Հատկանշական է, որ ԶԶ քր. օր.-ը 341-րդ հոդվածով պատասխանատվություն նախատեսելով վկային, կասկածյալին, մեղադրյալին, անբաստանյալին կամ տուժողին ցուցմունք տալուն հարկադրելու համար, հանցագործության սուբյեկտների շարքում չի նախատեսում պաշտպանին, ինչը, կարծում ենք, արդարացված չէ և շտկման կարիք ունի:

Այս խնդրի հետ կապված բավականին հետաքրքիր և պրոբլեմային հարցադրում է առաջադրում Մ. Յա. Բակը՝ արդյոք պաշտպանը կարող է և պարտավոր է աջակցել իր պաշտպանյալին հղկելու այն վարկածը, որ վերջինս մշակել է վարույթ իրականացնող մարմիններին մոլորության մեջ գցելու համար, ինչի մասին տեղյակ է պաշտպանը⁶:

Խնդիրն այստեղ նրանում է, որ պաշտպանը, լինելով մասնագետ իրավագիտության ոլորտում և գործով չչափազորված անձ, մեծ հավանականությամբ իր մշակած կամ ճշգրտած վարկածով կարող է իսկապես «պրոֆեսիանալ» և անելանելի մոլորության մեջ գցել վարույթ իրականացնող մարմիններին:

Ըստ հարցադրումն առաջադրած հեղինակի՝ ընդհանուր առմամբ ընդունելի և ինչ-որ տեղ ողջունելի այս դիրքորոշումը կարող է դատապարտելի լինել միայն հետևյալ երկու դեպքում. 1) երբ հանցանքի կատարման պատասխանատվությունը փորձում են բարդել երրորդ՝ անմեղ անձանց վրա, 2) օգտագործվում են կեղծված ապացույցներ⁷:

Մեր դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ հետևյալն է. ցանկացած դեպքում պաշտպանն իրավունք չունի «խմբագրելու» իր պաշտպանյալի սուտ վարկածները, որոնք ուղղված են վարույթ իրականացնող մարմիններին խաբելուն, եթե պաշտպանը տեղյակ է այդ խաբելու-

յան մասին: Այս տեսակետը մի կողմից հիմնավորվում է պաշտպանի դիրքով ու համբավով, մյուս կողմից մեղադրյալին ևս սուտ ցուցմունքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության նախատեսման դրական միտումով⁶, ինչի հետևանքով, փաստորեն, պաշտպանը կվերածվի հանցագործության

օժանդակողի:

Բացի այդ, անգամ այս փաստարկների բացակայության դեպքում, եթե միայն բավարարվենք Օ. Յա Բակի առաջարկած սահմանափակումներով, ակնհայտ է, որ այս իրավիճակն ընդգրկվում է 2-րդ բացառության մեջ, քանի որ սուտ ցուցմունքները ևս կեղծված ապացույց են⁷:

¹ Տե՛ս, օրինակ, էջ 122. էջ 6. էջ 91. էջ 27. էջ 108:

² Տե՛ս, օրինակ, , էջ 102, էջ 64, էջ 55:

³ Տե՛ս էջ 24:

⁴ Ինչպես կտեսնենք, շահերի դասակարգումը բացակայում է նաև ՌԴ Սահմանադրության մեջ (հոդված 46) և, ինչն առավել կարևոր է, ՌԴ քր. դատ. օր.-ում (հոդված 49): Նման տարբերակում չկա նաև ԱՊՀ անդամ-պետությունների մոդելային քր. դատ. օր.-ում (հոդված 99):

⁵ Այս հարցի կապակցությամբ բավականին հետաքրքիր դիրքորոշում ունեն ամերիկյան իրավաբանները. մասնավորապես՝ նրանք գտնում են, որ եթե վստահորոշը ցանկանում է, որ իր նկատմամբ դատական քննություն կիրառվի, պաշտպանին մնում է միայն համոզվել, որ հանցագործության բոլոր տարրերն ապացուցված են հիմնավոր կասկածից վեր (beyond a reasonable doubt) (տե՛ս Geoffrey C. Hazard, JR., Susan P. Koniak, Roger C. Cramton *The law and ethics of lawyering*, 2-nd ed. New York, 1994, էջ 447): Չնայած եթե տարածական մեկնաբանենք այս դիրքորոշումը, ստացվում է, որ եթե պաշտպանը զա համոզ-

ման, որ մեղադրանքն ապացուցված չէ հիմնավոր կասկածից վեր, նա իրավունք ունի, հակառակ վստահորդի դիրքորոշման, պնդել, օրինակ, գործը կարճելու մասին:

⁶ Տե՛ս էջ 226:

⁷ Նույն տեղում, էջ 228:

⁸ Տե՛ս Հարությունյան Ա., Մելքոնյան Դ. Կասկածյալի և մեղադրյալի ցուցմունք տալուց հարժարվելու իրավունքը լռելու իրավունքի եվրոպական չափանիշների լույսի ներքո// Պետություն և իրավունք, N 3(41), 2008, էջ 27:

⁹ «ՀՀ քրեական իրավունք» դասագրքի հեղինակները ապացույց կեղծելու հանցակազմի օբյեկտիվ կողմը մեկնաբանելիս դրա դրսևորումը տեսնում են իրական ապացույցները կեղծ, իրականությանը չհամապատասխանող ապացույցներով փոխարինելու մեջ(տե՛ս ՀՀ քրեական իրավունք. հատուկ մաս, 2-րդ հրատ., խմբ. Գ. Ս. Ղազինյան. Երևան, 2006, էջ 899): Կարծում ենք՝ այս հասկացության մեջ պետք է ներառվի նաև սուտ ցուցմունքը:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Լևոն Օհանյան

ՍՈՂԵԼԱԿՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴ 5

Գեղամ Ղարախանյան

ԽՆԱՄԱՏԱՐ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ..... 12

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

Աննա Ասատրյան

ՍԱՀՄԱՆԱՓՈԿ ՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐԲԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՖԵԿՏԻ ՀԵՏ18

Նորա Սարգսյան

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ-ՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ25

Արտակ Օգանեսյան

НОРМАТИВНО-ПРАВОВАЯ РЕГЛАМЕНТАЦИЯ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ В АРМЕНИИ (ИСТОРИЧЕСКИЙ ОЧЕРК)36

Գաբրիել Բալայան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....42

Թամարա Շաքարյան

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ49

Անի Խեչոյան

ՍԵԿՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ56

Արտյոմ Պետրոսյան

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԲԵՏՐԱԺԱՅԻՆ ՊԱՏԱՐԱՆԻ ՈՐՊԵՍ ԽԱՂԱՂ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԴԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ62

Մարինե Օհանյան

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ67

Էմիլ Ամիրխանյան

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ74

ՌԻՍԱՆՈՂԻ ԱՍԲԻՈՆ

Տարոն Սիմոնյան

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ԴՐԱ ՄԵԿԿԱԲԱՆՈՒՄԸ ԱԶՏԱԿԱՆ-ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ.....80

Անահիտ Մանասյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....90

Իգարբելլա Հարությունյան

ՊԱՇՏՊԱՆԻ ՊԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՅԱԼԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....97